



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5-6 1900

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

1900 № 5-6

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	երես	
1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա.	571	Մուրճ՝ը իբրև հասարակական օր- դան, III. (90-ական թվականները):
2 ՊԻՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ	577	Յուլիոս (վեպ, շարունակություն):
3 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՔ	620	Բանտիս վրա... (Բանաստ.):
4 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ.	621	Անցեալից մի ընկեր (պարմադ.):
5 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻՍԻ	636	Այս, այն տարիք... (Բանաստ.):
6 ՋԵՌՈՎ՛/ց, Մ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ	637	Օտար երկրում (պարմադ.):
7 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ.	642	Լազուր է քամին... (Բանաստ.):
8 ՄՈՊԱՍԱՆ՛/ց, Մ. ՆԱԻԱՍԱՐԳ.	643	Մի ծնողական (պարմադ.):
9 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻՍԻ	651	Ով ես, լուս հոգի... (Բանաստ.):
10 ԱԳԵԼԵԱՆ, Ա.	652	Հասարակական խանութներ (վերջ):
11 ԱԹԱՐԷԳԵԱՆ, ՄԻԳԱՅԷԼ	662	Հեղինակությունների իրաւունքը, ըստ ռուսաց օրէնսդրութեան:
12 ՎԱՐԳԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ.	680	Աշխարհքի գրքեր:
13 ՄԱՐ. ՅԱՐ.	687	Մ. Խաղաղութանի՝ «Իմ խաղաղ կրն»:
14 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա.	692	Ժամանակակից Տեսութիւն — Ներ- սիսեան շարքի 75 ամիակի առ- թիւ.—Թ. Հալոց Հրապ. ընկերու- թիւնը.—Բազմալեզու և երկաւրու- թեան քարտը:
15 ՂԱԶԱՐԵԱՆ, ԱՐՇԱԿ.	712	Գրական բարոյականութ. մեր մէջ:
16 ՍԵՒԵԱՆ, Հ.	719	Թաղրոնի շուրջը, XVIII.
17 Շ.	722	Պարսկազմը Հարաւ-Ա. ֆրի կալում:
18 Շ.	732	Չինաստան:
19 ԽՄԲ.	743	Ձանազան լուրեր:
20 ԽՄԲ.	753	Բովանդակութիւն Մուրճ № 1—6:

Տեղեկատու և Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Ի Ո

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типография Т. М. Ротиняна, Гол. ур., 4. № 41.

1900

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 5—6 1900

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ

1900 № 5—6

ՏԱՍՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏԳԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типография Т. М. Ротинянца Гол. пр., д. № 41.

1900

שנת ה'תרס"א

למנוחת הנשמות, למנוחת הנשמות, למנוחת הנשמות

ה'תרס"א

Дозволено цензурою. Тифлиси, 17-го Мая 1900 г.

ה'תרס"א

ה'תרס"א

ה'תרס"א

ה'תרס"א

ՄՈՒՐՃԸ ԻՔՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԳԱՆ

Մ¹)

ԳՐԱԿԱՆ ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆԸ 90-ԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐԻՆ

Այս ամսագիրը հիմնելիս՝ մենք նպատակ էինք դրել ժամանակակից հայկական միտքը առաջ տանել, և այդ կէտնպատակին այն ծառայեցնելու ջանադիր ենք եղած սկզբից մինչև այսօր։ Որպէս զի թերթը կարելի լինէր այդպիսի նպատակի ծառայեցնել, պէտք էր մի կողմից արտադրել, միւս կողմից՝ մաքառել։ Արտադրութիւնը պիտի երևար թերթի տւածի մէջ, որին պիտի միանար համակրութիւնը շէպի նոյն նպատակին ծառայողները, մաքառումը՝ հակակրանք ջայտնելու մէջ շէպի ամենը, ինչ խոչընդոտ պիտի հանդիսանար առաջադրած նպատակին։ Գործունի պիտի որոշէր և ամսագրի քննադրութիւնը—գործող և մարտնչող։

Այս ամսագիրը չէր խոստանում հեպեռը լինել գոյութիւն ունեցող որ և է կուսակցութեան, որովհետև որքան և հիանալի ջանքեր լինին արւած անցեալում՝ մեզնում մտաւորական կեանք ստեղծելու համար, բայց և այնպէս դեռ շատ քիչ բան է արւած—գործով և գրականութեամբ,—որպէս զի մի մեծ հասարակութիւն մեզնում մտածում և գործում լինի որոշ սկզբունքների համաձայն, սնունդ և կրթութիւն առնելով արդէն ունեցած մամուլից ու գրականութիւնից։ Ուր չկայ մի մեծ այդպիսի հասարակութիւն, այնտեղ չի կարող նախառաջատար մտքի մի օրդան յենւել առձեռն եղած հասարակութեան վրայ, հետեռը լինել նորան, տարւել նորանով, շեկավարւել նորա ճաշակով։

Ընդհակառակը, մի այդպիսի հասարակութեան մէջ յառաջա-

¹) Համեմատել Մուրճ 1889, № 1 և 4, 1897 № 1, 1898 № 11-12.

ստար մտքի օրդանը ինքը պիտի սթափեցնուի ուրիշ հանդիսանալ, ինքը պիտի պահանջներ արթնացնի ընթերցող հասարակութեան մէջ, ինքը պիտի ԴՐԴԻՀ լինի, նա պիտի ձգտի բարձրացնել միապահանջը, նրբացնել ձաշակը, նոյն իսկ իր վրէժնի վերցնելով իսկոյն հասկացւած չլինելու ընդհանրութիւնից, բայց հասարակ համոզումով որ վաղը այդ նոյնը լինելու է ամբողջ հասարակութեան պահանջը, նորա սեփականութիւնը:

Ոչինչ չկայ աւելի հեշտ բացատրելի քան թէ այն, որ մի այդպիսի ժամանակ մեզնում կարողանում է գործել նաեւ մի այլ մամուլ, որի դերը կոչանում է ցինկիաբար ուրանալու, ժխտելու, հերքելու մէջ՝ սլայմանով որ վաղը նոյն այդ մամուլը կրկին այն ինչ երեկ ուրանում էր:

Մենք այդ ասում ենք ոչ միայն «այսօր»-ը ընդունելով այս րոշերը գրելու ժամանակը, և «վաղը» միայն այն, ինչ ապագայում է, այլ արդէն իսկ այն ինչ որ Մուրճի համար գարիներ առաջ ուրացւում էր—այսօր մասամբ խոստովանւում է, հրապարակի վրայ՝ մրցակիցների կողմից՝ քոշարկւած ձեւերով, ոչ հրապարակի վրայ—աւելի բացարձակ կերպով:

Վասի մամուլի յատկանիշն է—քննադատ չլինել ազնիւ իմաստով, այլ վատարերան լինել, իր գոլութիւնը ոչնչացած կարծելով որ և բան իր ժամանակին ընդունելով կամ չը հակառակելով: Այդպիսի մամուլը նոյնպէս դեր է կատարում, բայց միայն բացասական դեր:

Այդպիսի բացասական դեր կատարել է նաեւ ժամանակակից մամուլը Մուրճի վերաբերմամբ: Մենք աւելին կ'ասենք. այդ բացասական դերի մէջ մամուլի մի մասը հասել է նոյն իսկ մինչեւ մտքի շանդաժը, շնորհիւ ընթերցող հասարակութեան անպարտաւոր գոնակուն՝ շանդաժը իսկոյն պարտել, և մասամբ նոյն իսկ մտքի շանդաժը ջոկել ազնիւ կուրից:

Իր այդ յատկութեամբ բացարձակ ձեռով, ամենից շատ փայլել է մի թերթ, որը անցեալում Դրական դեր կատարելուց յետոյ՝ ներկայումս իր անունը նոյնացրել է մտքի շանդաժի հետ, շատ աւելի հեռու գնալով բարոյական և մտաւոր սայթաքման զառի-

վարով, քան այդ կարելի էր նոյն իսկ գուշակել պատանակ պարի առաջ:

Կատարելապէս իրաւացի է այն մեծ պահանջը, որ ընդհանրութիւնը շնուժ է մի հանրածրագիր ամսագրի վրայ: Մեզ պատահել է երբեմն լսել թէ ինչ կարեւոր շէր ունի կատարելու մի ամսագիր մեր կեանքի մէջ, և այդ նոյնը ժամանակ առժամանակ ասել է նաև մամուլի միջոցով, բայց միշտ կեղծ-քննադատի տոնով, չար ակնարկներով, կատարելապէս համաձայն հայոց մամուլի այլասեռած ոգուն, որի դէմ մի լուրջ մամուլ ստիպւած է մարտնչել որպէս հասարակաց շարիքի դէմ: Եւ սովորաբար մեր մամուլի օրգանների մէջ Մուրճի իբրև ամսագրի վրայ են գցում այս ու այն գրական երևույթի պատասխանաւորութիւնը, կամենալով այդպիսով ճնշել մեզ պատասխանաւորութիւնների ծանրութեան ներքոյ:

Եւ մենք չենք խուսափում այդ պատասխանաւորութիւններից: Ընդհակառակը:

Մի ամսագիր, իր դերերից ազնւագոյնը կատարած պիտի համարի, ասում ենք մենք, երբ նա խթան է հանդիսացել ժամանակի գրական յառաջդիմութեան, ջանադիր է եղել իր ժամանակի հերթական հարցերին պատասխանելու, ընդհանուր ձգտումներ առաջացնելու, ժամանակակից սերունդը դէպի ազնիւ միաժողութիւնը դրդելու և, վերջապէս, առողջ ընթերցանութեան նիւթ տալու:

Դժւար, չափազանց դժւար է որոշել ամեն մի հասարակական գործոնի դերը իր ժամանակակց յառաջդիմութեան ընթացքի մէջ: Բայց մենք մեզ վրայ ենք վերցնում պատասխանաւորութիւնը մեր այս պնդումի համար, որ 1889 թւականից դէս մեր գրական յառաջդիմութեան մէջ կատարւածի համար զլիսաւորապէս պարտական ենք Մուրճի գործունէութեանը, այլ և դորան ենք պարտական մի շարք խնդիրների մասին այդ ժամանակամիջոցում մեզնում կատարւած փոփոխութիւնների համար, որքանով որ այդ կարող է կախւած լինել հրապարակական խօսքից, մամուլի մի օրգանից:

Որպէս տեսնում է ընթերցողը՝ մենք չենք հրաժարւում այն պատասխանաւորութիւններից, որ տրամադիր են մեր կեղծ քննա-

շափները մեզ վրայ բարդելու, այլ և աւելի ևս ընդարձակում ենք այս ամսագրի վրայ ծանրացող պարասխանատուութիւնների շրջանը:

Թէ ինչ էր մեր արեւելեան հոգի, գրականութիւնը 80-ական թւականներին, դորան մենք պարասխանատուութիւն ենք դնում ևս 1897 թւականի յունւարին լինէ՞լէնք ժառանգել յօդաւոր: Կրկնել չենք կամենում, բայց միայն չիշեցնում ենք: Ընդհանուր առմամբ տարիներ առաջ մեր ասածի վրայ կարեւոր բան չունինք աւելցնելու, բայց և ոչ մի կէտ՝ եւր առնելու: Կարող կ'լինէինք մեր ասածները ընդարձակել, բայց էութիւնը չէր փոխւել: 80-ական թւականների վերջից դէս ասպարէզ է եկել գրողների նոր սերունդ, և այնպէս, որ 80-ական թւականները արդէն շատ հեռու բան են թւում: Այո, շատ հեռու: Եթէ անցնալով՝ որոնենք դորան մի համեմատութիւն, պէտք է վերցնենք 70-ական թւականների շարժումը՝ որը 60-ական թւականները ծածկեց ու գրեթէ մոռացնել տեսց: Աւելին այդ մասին ասելը պարկանում է գրական մի աւելի ընդարձակ տեսութեան, որը մասամբ կատարւել է սոցն այս ամսագրի էջերում այլ և այլ առիթներով, մասամբ ապագային է թողնւում: Մենք կ'բաւականանանք այսպէ՛լ միայն ընդհանուր գծերով:

Մուրճի հ'տ հայկական ամսագրութիւնը միտք մի նոր շրջան. ամսագիրը իր աւանդական նեղ ծրագիրը փոխեց լայն ծրագրի: Նա աշխատեց ընդգրկել բոլոր այն խնդիրները, որոնք շօշափում են ժողովրդի ոգեկան և նիւթական կեանքը: Հայկական ուսմունքները փեղի փեղին հանրակրթականին, մօտենալով եւրոպական ամսագրութեան փոխարին, միշտ, ի հարկէ, աչքի առջև ունենալով այն ազգն ու հասարակութիւնը, որի համար նշանակւած է ամսագիրը: Նորա մէջ փեղ գտան և հրապարակախօսութիւնը, և դեղեցիկ դպրութիւնը, և հանրագիտականը, և քննադատական ու սոցիալական խնդիրները, և գրական քննադատութիւնը և լեզւական խնդիրները, և զաւառական կեանքի ուսումնասիրութիւնը, և ընթացիկ հասարակական ներքին հարցերի ու արտաքին քաղաքական կեանքի տեսութիւնները: Այսքան լայն ծրագիր իրագործելու համար հարկաւոր էր ժամանակիս սերնդի արժանաւոր ոյժերից շատերի աջակցութիւնը, և կարող ենք ներքին գոհունակութեան

զգացմունքով վկայել, որ այդ աշակցութիւնը մենք գտել ենք, և ինչ կարարեա՞ծ է—մի ամբողջ սերնդի ձեռնդրութեամբ է կարարեա՞ծ: Այս ժամանակամիջոցում վերակազմեց հայոց բանաստեղծական գրականութիւնը, նոր արժանաւոր ոյժեր հաստատեցին վիպագրութեան մէջ, հիմք ստեղծեց գրական քննադատութեան համար, հիմք դրեց հանրամատչելի դիտական գրականութեան և տնտեսական ու սոցիալական խնդիրները մուտք գործեցին հայոց գրականութեան մէջ:

Զի կարելի, սակայն, ասել թէ արտաքին հանգամանքները եկած լինին նպաստելու 90-ական թւականների գրական շարժման: Ընդհակառակը: Ամենքին յայտնի խոշոր պատմական իրողութիւններ եկան գրական ասպարէզից հեռացնելու ընդհանուր տրամադրութիւնները, բոլորովին հակառակ այն պատմական հանգամանքներին, որոնք 70-ական թւականներին եկան կենտրոնացնելու բոլորի ջանքերը հայոց մամուլի ու գրականութեան վրայ: Իսկ հայոց ծխական դպրոցները, որոնք բազմանում էին այն տարիները և մի նոր կապ ստեղծում ժողովրդի և մամուլի ու գրականութեան մէջ, 90-ական թւականներին իրենց փակելովը՝ եկան թուլացնելու և ոչ ուժեղացնելու հասարակութեան կապը հայկական տպագրութեան հետ: Եւ հասարակ:

Եւ երբ այդպիսի տարիների համար է վկայում գրական յառաջդիմութիւնը,—արդարեւ, պէտք է խոստովանել, որ մի սերունդ իր դերը լաւ կատարեց:

Երբ խօսւում է արտաքին հանգամանքների մասին, ներքին չէ յիշատակութեան չառնել և այն տնտեսական յեղաշրջումը, որ կարարեց այս տասնեակ տարիներս կովկասում և որը եկաւ հայ հասարակութեան կազմը հիմնովին փոխելու: Այս տասնեակ տարիներում է որ արտայայտեց կովկասում ժամանակակից Բաքուն—խոշոր կապիտալիզմի բոլոր ոյժովը: Կարարելով անասելի արագութեամբ՝ նա նոյնքան արագութեամբ կլանեց մի մեծ մասը երկրի տնտեսութեան՝ մի փոսակ մտաւոր ամաչութիւն սփռելով հայկական գաւառներում, որպէս նաև կարևոր հիւթեր ծծելով այն կենտրոնից, ուր տասնեակ տարիներով կեանքը կազմակերպւել էր միատուր գործունէութեան համար: Այս փոփոխութիւնը, որը կարող է նաև բարեբար հերևանքներ ունենալ, երբ խառնշորկած

հասարակութիւնները նորից կ'կազմակերպւեն, մանաւանդ երբ արդիւնագործութեան նորանոր ճիւղեր կ'հաստատուեն մեր երկրի ուրիշ տեղերը, այս սկզբի փասնեակ փարիներս շեռ միայն իրարանցում կարողացաւ դնել և, յամենայն դէպս, նա կարող էր ոչ թէ շէպի գրականութիւնը փրամադրել, այլ նորանից շեղել ընդհանուրի ուշքը:

Մեր ակնարկած խոշոր իրողութիւնները, եթէ կարելի է այսպէս ասել, գրականախոյս ոյժեր են եղած, որ բացառիկ սաստիկութեամբ գործեցին այս 90-ական թւականներին:

Այդպիսի փարիններում միակ հանրածրագիր ամսագրի կատարելիք դերը արդարեւ շատ կարեւոր պիտի լինէր: Եւ եթէ Մուրճին հակառակողները շարունակ յիշեցնում են ամսագրի պատասխանատուութիւնները, մենք էլ մի կողմից յիշեցնում ենք բացառիկ խոչնդողները, որ գործեցին այս փարիներս, իսկ միւս կողմից հանրութեան առաջ ենք դնում կատարւած յառաջդիմութիւնը, որի նկատմամբ Մուրճը ուղղակի կամ անուղղակի բայց միշտ առաջնակարգ ներգործութիւն է ունեցած:

Դորա համար հարկաւոր չէր որ այս ամսագիրը իր էջերում փեղաւորած լինէր իր ժամանակի բոլոր գրական լաւ արտադրոյթները. այլ հարկաւոր էր միայն որ նա ճիշտ ուղղութիւն պահպանէր, ժամանակակից մտքի արտայայտիչ լինէր, լաւը գնահատող և նորա խթանը լինէր, բայց և... նոյն իսկ իր շրջական գործունէութիւնով հակառակ մտքերի ոյժը կարելիին չափ չեզոքացնէր ու անփնաս դարձնէր:

Եւ կարծում ենք, որ Մուրճը այդ պաշտօնը սրբութեամբ ու խղճի մտք է կատարած. կարծում ենք նաեւ, որ մեր ժամանակում այդ ուրանալու համար պէտք է մտքի շանտաժի հետ դաշն հաստատած լինել: Այն թումբը որ գրականութեան զարգացման շէպ կանգնեցրած էր 80-ական թւականներին, պէտք է պարուէր, և պարուէր:

Յ Ո Ւ Ն Օ Ն

ՊԵՐՃ ՊԱՌՇԵԱՆՑԻ

(Շարունակութիւն ¹)

ԻԱ.

Որքան և մոքիս մէջ կշռադատում էի ակնյայտնի հակասութիւնը, չէի կարողանում մի ելքի գալ:

Ինձ շփոթեցնողը Յունոյի և Նադոյի անձնաւորութիւններն էին: Հաւանական էր, որ քրդի ասածին պէս՝ նրանք երկուսը մի ինձոր էին, բայց կարծեօք՝ ոչ կիսած, երկու արած, այլ ամբողջովին՝ առանց զոյնը, համն ու հոտն անգամ զանազանելու: Թէ չէ՝ ընչով բացատրէինք ծերունի Թ. վարդապետի և Ա. գիւլի քահանայի արարքը: Զէ որ նրանք հաստատապէս ժխտեցին Նադոյի գոյութիւնը: Երկուսից մէկը, կամ քրդի խօսքերն էին շինծու, կամ Աստուծոյ պաշտօնեաներն ինձ, չըզիտեմ ի՞նչ առիթից ստիպուած՝ խաբել էին: Ուստի երբ քուրդը կ'սթը ձեռքին վերադարձաւ, չըհամբերեցի ու հարցրի:

— Նադօն ո՞ր տեղացի է, Հասօ եղբայր:

— Ա. գիւլից, պապասխանեց Հասօն լրջօրէն:

— Իսկ Յունօն:

— Է՛լի Ա. գիւլից, ասաց քուրդն և աւելացրեց. կաթն անուշ արա, աղայ ջան, ու պառկի, հանգստացի. մի օր ամէն բան լուս:

¹ Սկիզբը Մուրճ 1900 թ. № 1, 2, 3, 4:

նիակի պէս ոտքիդ տակ կը փռուի, կը պարզուի հրամանքիդ համար։ Քեզ խէր ու բարի գիշեր, գլուխ տուեց քուրդն և կամենում էր շուրս գնալ։

—Մի վազիր, Հասո եղբայր, կանգնացրի ես, շտապելու կարիք չըկայ։ Դու ինձ ասա, ի՞նչ է այն կինը, որ ձեր ընտանիքի մօտ ալաջուխի առաջին նստած է ու երկու երեխայ ունի, ծծկերը զրկին, իսկ մեծը մօտը խաղում է։ Ճրագը լաւ լոյս չի տալիս, բայց կնոջ հաղուստից երևում է, որ հայ պիտի լինի։

—Հրամանք, հայ է, Գիւլօն է, մեր Յունօյի ընտանին ու իր երեխէքն են։ Դու հօ Գիւլօյի պատմութիւնը լաւ գիտես, աշնայ, շեշտեց քուրդը, Նադօն ասաց, որ ինքը մէկ-մէկ քո առջև բաց է արել։

—Այո, գիտեմ մի գաւաթ գինու պատմութիւնը։ Բայց այդ թողնենք։ Գիւլօն վաղով է ձեզ մօտ է։

—Էն լուսաբացիցն է մեր տանը, երբ առաջի իրիկունն օգնականն ուղղում էր Յունօյի տունը կրակել։ Յունօն երբ օգնականի աչքերը հող ու մոխիր փչեց, ձեռքիցն ազատուեց, գնաց վանքը, Նադօյի հետ խորհուրդ արեց, եկաւ մեզ մօտ։ Ես ու ինքը ձի հեծանք, կէս գիշեր չեղած՝ Նոր-Բայազիդ մօտնք, Գիւլօյին ու երեխէքանցն առանք, լոյսը չըբացուած՝ բերինք մեր տունը։

—Դու էն երեկոյին թր Գիւլ էիր, Հասո։

—Ես երկու ընկերով ծովի ափին Յունօյի խորատեղը մեր ձիանքն էինք արածացնում։

—Իսկ Նադօն այդ ժամանակ որտեղ էր։

—Քուրդը ժպտաց և պատասխանեց։

—Նադօն իմացաւ, որ հայր սուրբը վանքումը քեզ պէս ազիզ հիւր ունի, հասկացաւ, որ օգնականն առանց քեզ Գիւլօնի հեռանալու չէր, շտապեց վանքը հայր սուրբից խնդրելու, որ օգնականին չասեն Յունօյի ընտանու տեղը։ Երբեք որ լինէր, Յունօն վանքումը հայր սուրբի տան ետեւի յերումը (քարայր) քիչ կը հանգստանար, մինչև որ օգնականը կը թողնէր կերթար։ Բայց երբ Յունօն իր ականջովը լսեց, որ Գիւլօնը սխալուեց, Գիւլօյի տեղը յայտնեց, հայր սուրբն էլ վկայեց, թէ Գիւլօնի ասածն ուշիշ է, Յունօն Նադօյի խորհրդով շուրս եկաւ յերից, վանքի գոմից

Դուրս քաշեց իր ձին, հեծաւ ու, ինչպէս ասացի, թռանք Նոր-
Բայազիդ ու ընտանիքը բերինք մեզ մօտ:

Քրդի խորհրդաւոր պատմութիւնից իմ ենթադրութիւններս
Յունօյի և Նադօյի վերաբերութեամբ իրականութեան փոխուեցան:
Հասկանալի եղաւ նոյնպէս, որ ժողովրդի պաշտպանն ու սիրելին,
Թէկուզ լինէր մի աւազակ, չէր կարող ժողովրդասէր մի հոգեւոր
ծերունի հօր համակրութեանը չարժանանալ և ժողովրդին օգնե-
լու գործում չընթանալ բազմափորձ, խելացի ու յարգելի հոգեւոր
հօր խորհուրդներին ու պատուէրներին համաձայն: Ուստի քրդին
կասկածների տեղիք չըտալու համար, բարւոք յատեցի խօսքս փո-
խել: Ես հարցրի.

—Յունօյի կողմից մի^օթէ անխոհմտութիւն չէր քաշաքի պէս
ապահով տեղից ընտանիքն իր նման մի ռուիշ իշխանութեան աչ-
քից ծածկուած աւազակի վրանը փոխելը: Որքան ինձ յայտնի է,
Նոր-Բայազիդից՝ Յունօյի պատուին՝ նրա ընտանիքին իշխանու-
թիւնի բերանը չէին տալ: Քաղաքումը Գիւլօն աւելի ապահով
կը լինէր, քան թէ էս լեռան զլխին, բաց երկնքի տակ: Ենտեղ
հազարաւոր տներ, էստեղ 15—20 քրդի ալլաչուխ. էնտեղ ազգ ու
ազգակիցների մէջ, էստեղ, սարի ծէրին, անծանօթ քրդի աչքի
տակ. ամէն բոլէ կարող են իշխանութեան ականջը քցել և խեղճ
կնոջ զլխին նոր փորձանք բերել:

—Սխալ ես, աշնջ, սարեցի պիսմար քուրդը քո քաղաքացի
խելօքներից աւելի հալալ (ազնիւ) է: Մեր հարեաններն իրանց
ձեռքով շնոստակ կանեն իրանց էն քէղզաստ (անարգ, փծնի) որ-
դուն, եղբօրը, սիրեկանին, ով որ մոքոմէն էլ կանցկացնի հարեանի
սըռը (զաղտնիք) բանալը: Դու քրդին մէկ աչքով մի՛ մտիկ տալ,
զլխիդ մեռնեմ, քրդի լեզուից Դուրս եկած խօսքն իր սրտիցն է
բլխում: Թէկուզ Դու քրդի որդուն մորթոյն ես ու էսօր եկար նրա
Դուռը, նրա ծածկի տակ հիւր եղար, Դու համ քո սպանածի հօր
զլխի վրայ պապիւ ունիս, համ էն հասարակութիւնի մէջ, որի մի
անշամի տանն Ասրծու հիւր անունով իջել ես: Ոչջ էլաթը (հա-
մայնք) պանրի պէս կը փրթուին ու իրանց հարեանի տանն իջած
Ասրծու հիւրին ղիւանի ձեռը չեն յանձնիլ:

—Ուրեմն Յունօն երկիւղ արեց, թէ ղիւանը կարող է իր ընտանիքը բանտարկել հմ:

—Հրամանք, օգնականն իր բերնովն էր ասել Յունօյին, թէ տնեցոնցը պիտի ղուսաղ անի (բանտարկի): Յունօն էլ մի գիր գրել տուեց, օգնականին շրկեց:

—Թէ ի՞նչ:

—Թէ սե ու մութը գլխուդ կը դաչ, եթէ դու իմ ընտանիքին դիպչես. իմացած եղիր, որ մի գիշեր կը մտնամ օջաղը, բոլորիդ կը կապտեմ, դեռ երեսէքանցդ կը մորթեմ, յետոյ՝ ընտանուդ պատիւն աչքիդ առաջին իմ կորիճների ոտի փակ փալ կը փամ: Յետոյ, նրա պատիւը տեղը բերելու համար՝ իմ ձեռովս գլուխդ կը կտրեմ ու կը հրամայեմ ամենից անշնորհք ընկերիս բութ դանակով քո վիզը ետեի կողմից կամաց-կամաց կտրելով՝ դաչ հասնի մինչի խռթլաւուկդ (կոկորդ): Ապա մի քանի ժամանակ էլ կը սպասեմ, մինչև լաւ չարչարուիս ու նոր գլուխդ ջանիցդ բաժանել կը փամ:

Էս երկու ղալամը (տոյ) գրել տուեց Յունօն Նոր-Բայազիդում, շրկեց օգնականին ու իր ընտանուն գաւակն առաւ, մենք էլ երեսէքանցը գրկեցինք ու լոյսը չըբացուած՝ եկանք մեր օրէն:

—Բայց չէ՞ որ ղիւանին յայտնի է քո փունդ, ղիւանը գիտի, որ դու Յունօյի ընկերներինցն ես, մի օր քո ընտանիքին էլ կը բանտարկի:

—Դիւանը գիտի ու չը գիտի:

—Ի՞նչ ասել է:

—Քեզանից թագցնելու բան չունիմ, աշակ. մեր Նադօն ասել է, որ դու մեր տէրն ես ու բարեկամը. ղիւանի մարդկանցից շատերի մօտ ես շուտ շուտ լինում եմ: Ղուրբան, աշակ, Ասպիտ սէրը՝ Նադօյին բան չասես, որ Յունօյի ականջը չըհասնի, թէ չէ Յունօն երբ իմանայ, որ ես՝ իր ամենից հաւատարիմ ընկերը ղուլլուղի մարդկանց (պաշտօնեայ) սիրտը շահում եմ, ինձ անմահ, անգրող կըսպանի: Յունօն կաշառք փալուն շատ հակառակ է ու մեզ էլ սաստիկ է, որ չըփանք, բայց քեզ եմ հարցնում, չըփալով կարճք ապահով լինել: Ես իմ մի գլխի հոգսումը չեմ ու չոր գլուխ էլ չեմ. մի փուն լիքը թան խփշտոշներ կան իմ միջքից ընկած (իւր սերունդը). նրանց համար եմ իմ մեծ եղբայր, աչքիս լոյս Յունօյի հրամանը կտրուում:

Եւ ուրեմն, թէ Դու և թէ Յունոն ապահով էք, որ երկուսիդ ընդանիքը կարող են այս սարի գլխին միասին աներկիւշ սէր անել, ապրել և ոչ դժ նրանց շուաքին չի Դիպչիլ, էնպէս չէ:

—Աստուծով:

—Իսկ չէ որ օգնականը հետեւում էր Գիւլօյին բռնելու: Կարծում ես՝ նա կը վախենայ Յունօյի սպառնալից երկու տղից:

—Օգնականը միայն Յունօյին երկիւշ էր պալիս. նա ինքը լաւ մարդ է, նա ոչինչ չի անիլ, եթէ չուղուլը հանգիստ քնէր:

—Եւ մի՞թէ չուղուլներ կան:

—Կան, աղայ, և եթէ մի օր իրանց չուղուլութիւնը չանեն, քուները չի տանիլ. կը ներհս, աղայ, ողորթ է, ամէն միլլաթի (ազգ) մէջ լաւ ու վատ մարդիկ կան ու կը գործուն, բայց մեր Գեղարքունու զաւառի եղած չուղուլները ձեր ազգիցն են: Թողանք գիւղերում բերանները ջամղաքոտուելու (գէշ լափելու) համար գիւղերի մէջ իրաւունք ունեցողների Դռներին քաշ եկող մանրմունք, աշխատանքից փախչող, անգործ ու անհաց փչերին. մի քանիսը կան մեր քաղաքում, որոնք ցեց են Դառել մեր ժողովրդի համար, գիշեր ցորեկ ղուլլողի Դռներից չեն հեռանում: Եղայէսները՝ սրտերի վրայից մի ապաստանոցի չափ սղինձի կտոր կախելու համար, իրանց մօրից ծնած եղբօր վրայ զրպարպութիւններ կը հնարեն: Երեսիդ սիլի ըիլի (չողոքորթութիւն) կանեն, բայց տեղն ընկած վախոր՝ գրպանիդ կապէկը կը կտրեն, ունեցածդ Դուրս կը ծծեն ու Դարձեալ քեզ դիւանին կը մտնեն:

Եղայէսներից մէկն էր, որ ինձանից բռնով լիքը Դեղին ոսկիք շահուեց, խօսք տուեց թէ Գիւլօյին Դիւանի բերանը չի տալ, բայց հէնց էն օրը, որ մենք Գիւլօյին փախցրինք բերինք, էն օրն և եթ Գիւլօյին իրանց տանը հիւր ընդունող ընդանիքի գլխաւորին Դիւանին մատնեց, բռնել տուեց և Գիւլօյի տեղն իշխանաւորին յայտնեց: Ասում են՝ մեծաւորը կամեցել է հէնց էն օրն իսկ՝ վրանը ձիաւորներ շրկել ու Գիւլօյին բռնել տալ, բայց օգնականի խորհրդով չի արել: Հէնց գիտես, թէ Դադարեմ է, աղայ, անիծածը. փողոցներումն ամէնքի մօտ պարծեցել է, թէ չի հանգստանալ, մինչև Գիւլօյին չըբռնել տայ. օրական մեծաւորին էդ մասին ձանձրացնում էր: Մի օր էլ մեր Յունոն նրա սև օրը վրայ բերեց:

—Ի՞նչպէս:

—Գիւլօյին տանելուց մի շաբաթ անց՝ մի դիշեր տունը կոխեցինք ու աչքին երևացինք. Յունօն իր ձեռովը խողի պէս կռնափակից խանչալի ծէրով սիրտն ու թոքը քրքրեց ու մինչև մարմինը չը սառեց՝ ձեռքը բերանից յետ չըքաշեց: Աշխարհքն ուրախացաւ, բայց Յունօցի համար լաւ չեղաւ. ասում են՝ մեծաւորն էշ պատճառով կարող է Յունօցի ընտանիքին նեղութիւն պալ, ու եթէ մի օր Գիւլօյին բռնեն, իմացիր, որ մեղաւորը Յունօն ինքն է:

—Եւ զարմանում եմ, որ մինչև օրս չեն բռնել, ասացի ես:

—Ձէ որ հրամանոցդ արդ արի, թէ ես կուտը շատ եմ անում, բոլորի աչքերը սրտուռ ոսկիներով կապել եմ: Ինձանից ի՞նչ է դնում, սրանից խլում եմ, նրան եմ պալիս: Եղալիսութիւնով է, որ կարողանում ենք մեր արհեստը բանացնել, ու Դիւանի կողմից ապահով լինիլ: Ի՞նչ կայ, յայտնի չենք ապրիլ, ծածուկ կապրենք, էստեղ ետեւներիցս կընկնեն, էնտեղ կը թագնուինք: Հօ մեր ընտանին, մեր ապրանքն ապահով կը լինին: Հա թող մեր մեծ եղբայր Յունօն մեզ վրայ բարկանայ, թէ կաշառք մի՛ տաք: Կասենք լաւ, ու մեր գիտեցածը կանենք:

—Ուշորդ չէ, աշայ, որ խելօք բան եմ բռնում, հարց տուեց ինձ քուրդ Հասօն, Դիւանի մարդկանց շատերը գիտեն իմ տեղս ու ընտանիքիս, գիտեն ու ճանաչում են բոլոր իմ ընկերներին ու նրանց տուն ու տեղը, բայց մինչև էս օր մեր ոչ մէկի Դրանը նրանց շուաքը չի գտնուել, ոչ մէկիս ընտանուն ասող չի եղել, թէ ծուխը Դէպի քեզ:

Թէ Յունօն, թէ Դու և թէ առհասարակ բոլոր աջնպիսի մարդիկը, որոնք խաղաղ կեանքն ու արդար քիրտինքը թողած՝ իրանց նմանների արիւնը թափում են, անցւորականների առաջը կրթում են, աշխատասէր գիւղացու վաստակը ձեռիցն ջափշտակում են ու էնպէս են հաց աշխատում, նրանք ոչ մի արդարանալու տեղ չունին, պատասխանեցի ես:

—Դու Յունօին մեր կարգումը մի խառնիլ, աշայ, Յունօն հօտազակ չէ, Յունօն եթէ Մելիք Մրտօյի տղայ Զաքէյի փորձանքի մէջ չընկնէր, նա էսօր իր տան ու տեղին, իր աշխատանքին կըլինէր: Մարդ էր, փորձանքը գլխին փաթաթուեց, խճճուեց,

մնաց: Գիւշումը մնալ չէր կարող՝ կըբռնուէր, Սիբիր կերթար: Գրա համար շուրս ընկաւ ու մտքումը շրեց Զաքոյի արիւնը լուանալ՝ խեղճերին թե ու թիկունք շառնալով ու գողերին, աւազակներին, տնաքանդներին, կաշառակերներին իրանց արժանի պատիժը տալով:

Ի՞նչ անէր մարդը, մի ձեռ ծափը չէր տալ, ուզէր չուզէր՝ պիտի աւազակների ընկեր շառնար, թէ չէ մենակ ի՞նչ կարող էր անել: Շնորհակալ չէս, որ կարողացել է 30 ինձ պէս արենխում աւազակների էլ իր հետ ընկերացնիլ, Աստծուն շուր գալու գործ բռնել տալ: Ո՞վ էր լսած, որ շաշտակորուկ աւազակը ջոկողութիւն անի, թէ երկու հարուստից որի՞ն պիտի կոշուպի, որի՞ն թողնի, կամ ճանապարհորդներին թողնի, գնաց իր նման աւազակներին թալանի...

—Աւելի լաւ չէր լինիլ, եթէ բոլորդ աւազակութիւնը թողնէիք, արդար վաստակի ետեւիցն ընկնէիք, ընդհատեցի ես:

—Շատ ես հեռու գնում, աղւնց, մարդ ինչ բանի մանկուց սովորեց, օձով ծեծես, իր արհեստը կըբանեցնի. ես իմ հօրից, իմ պապերից գողութիւն եմ տեսել, մինը վաս ընկերների մէջ ծուլութիւնի ու փշութիւնների է վարժուել, մի ուրիշը ռանչպարութիւնի ծանր լուծը չի կարողացել քաշիլ, խեղճերի քրտինքը լիզելով է կեանք անցկացրել, և շու ուզում ես, որ միանգամից բոլորին Աստծու ճամբէն բերես: Զէ, աղւնց, չէ, Յունոն խեղճութիւն է արել, որ մեզպէս մարդկանց ընկերացել է. նա իրաւունք ունի ձեռքից գործ եկող մարդկանց կաշառք տալուն հակառակելու, իսկ մենք ամեն բանով նրան լսումենք, բաց զԱրքի (ոյժի) տէր մարդկանց սիրտը թագուն շահել ենք ու միշտ պիտի շահենք, և Յունոյի սիրտը չը կորելու համար՝ իրան էս մի բանի մէջ պիտի խաբենք: Քեզ էլ կըխնդրեմ, որ Նաշոյին բան չասես. Նաշոն ամեն բան Յունոյին ասում է: Հա աղւնց, քեզի շուրբան, Նաշոյին չէս ասիլ:

—Առաջինը՝ որ ես միտք չունիմ Ա. գիւշը գնալու. ուրեմն շտուար թէ Նաշոյին հանդիպեմ. և երկրորդ՝ իմ ինչ բանն է ուրիշի ընտանեկան գործում խառնուելը: Բաց շու ինձ այս ասա, Հասօ, արդեօք ձեր խումբը չէր, որ Նասիր բէգի հօտերը մի երկու ժամ առաջ ցրուեց: Մենք թէև արդէն Նասիրի վրանից հեռու էինք,

բայց լեռան գլխից պարզ տեսանք, թէ ինչպէս մի քանի ձիաւոր մէջ էին առել մի ամբողջ հօտ և քշում էին ձորն ի վէր, և որ գլխաւորն է, մի ամբողջ հասարակութիւն զէնքերով, փայտերով ու քարերով բեռնաւորուած՝ ընկաւ աւազակների ետևից. բայց երբ նրանք տեսան լեռան գագաթին միայնակ կանգնած, կարգադրութիւն անող ձիաւորին, լեղապատառ մնացին ձորահովիտումը սառած: Կարծես, այն մի ձեռքով կարգադրութիւն անող մարդի մտրակը կախարդի զաւազանի զօրութիւն ունէր, հէնց որ բարձրացրեց Նասիր բէգի սարւորների վրայ թափ տուեց, վերջիններս ձեռքերը ցած թողին ու մի քանի շուտէ մոլորուած մնալուց յետոյ՝ յաղթուած ու հալածուած զօրքի նման՝ յետ շարձան իրանց օղաները:

—Համա մերոնք իրանց գլխաւորի համարձակ տուած հրամանը լսեցին ու տասը քսան հօտի միջից Նասիր բէգի հօտը ջուկեցին, քշեցին Սիսիանու կողմը, ընդմիջեց Հասօն և ծաղրաշարժ շարունակեց. հիմի ինչ են անում Նասիր բէգի գառն ու ուլերը, ամենքի ոչխարը տուն եկաւ, կթուեց, գառներին կշտացրեց, յետ շառաւ արօտի, բայց Նասիր բէգի գառները մկրկալով մնացին: Եւ Հասօն ծոր տուեց, թառառ, Յունօյի խելքին խելք կը բռնի: Երեկ երբ իմացաւ, թէ Նասիր բէգը Կարալագեազու օգնականի մօտ է գնացել, չորս ձիաւոր շրկեց, էնտեղի գիւղականի մարդկանց ձիանցից երեքը շաշտիցը քշել տուեց, փախցրեց Արազի կողմը:

—Ընչո՞ւ:

—Յունօյի մտածածի պէս էլ եղաւ, պատասխանեց Հասօն. օգնականը Նասիր բէգին հրամայեց ընկնել ձիադռների ետևից մինչև Խոյ, Սալմաստ, մինչև Թաւրիզ, ու չըբռնած՝ յետ չըգալ: Խեղճ Նասիր բէգը շեռ սորանից երկու շաբաթ յետ չի գառնալ. միամիտ եղբայրս չը գիտէ, թէ մեր տղէքն Արազի միւս երեսին ձիանքը թողին մօտիկ թուրքի գիւղում ու իրանք ներքևից գետը կրկին անց կացան ու եկան մեզ խառնուեցին: Էս իրիկուն հէնց նրանք էին, որ Նասիր բէգի հօտը քշեցին: Էս գիշեր լոյսը չը բացուած էն մի հօտ ոչխարից կը ջուղուին Վ. Ղ. գիւղացոնցից Նասիր բէգի փախցնել տուածները, կը շրկուին իրանց պէրերին, մնացածները կը պարտակուին մեզ յայտնի տեղում: Դու հօ գիտե՞ս աղայ. Վ. Ղ.

գիւղացի հայերի ոչխարների պատմութիւնը. քեզ մօտ են գիւղացիք օգնականին զանգապել:

Սառը քրտինքը մարմնիս ծակփոխքներից շուրս բլխեց ունեարդերս ցնցեց. Քրդին ինչ տեղից էր յայտնի աչք անցքը. այն ժամանակ Նաշօն, գոնէ, մօտս չէր, որ համբաւը տեղ հասցրած լինէր:

—Քեզ չեմ հասկանում, Հասօ, ասացի, շու բաներ ես պատմում, որ ինձ բոլորովին անյայտ է:

—Միամիտ մի՛ ձեանալ, աղակ, պատասխանեց քուրդը, շու էնտեղ չէիր, որ երբ օգնականի հրամանով Վ. Ղ. գիւղացի հայերն իրանց հոգին մոռացան ու Յունօյի շուաքի ետեւից բամբասանք արին, հայերի միջից մինը մնաց, որ օգնականին հակառակեց, թէ Յունօն չէր իրանց ոչխարները պանոշը, թուրքեր էին. օգնականն էլ նրա վրայ բարկացաւ:

—Ասենք՝ մի րոպէ խօսքդ իրողութիւն է, բայց շու ո՞ր տեղից գիտես, քուրդ:

—Վարժապետն իր բերանովն եկաւ Յունօյին պատմեց, պատասխան պուեց Հասօն:

—Ի՞նչ վարժապետ:

—Հէնց էն մարդը, որ օգնականի սուփը բռնում էր ու պընշում էր, թէ ոչխարագողերը թուրքեր էին:

—Վարժապետ էր նա:

—Նա վարժապետ չի, համա կարդացւոր է, շուտ շուտ քաշաք է գնում, կարդալու գրքեր է բերում, ամէնքի հետ զրից է խօսում. գիւղացիք էլ վրան խնդում են ու աւելի անունը Դրեւ են վարժապետ: Հնիս Աստու, լաւ պղպ է Վարօն, ոչջ գիւղին բան հասկացնողն է: Խեղճին անաղ կանեն (ծաղրել), երեխէքն էլ ետեւից վարժապետ կը ճանն, համա նա սրտին չի առնիլ: Մեր Գեօգչի կողմերը էդպէս վարժապետներ մի քանիսը կան:

Բանից շուրս է գալիս, որ սարի գլխին կարգադրութիւններ անողը Յունօն ինքն էր, այնպէս չէ, հարցրի ես:

—Ինքն էր՝ որ կար:

—Եւ ձեր քաջ համարուած Յունօն խորամանկութեամբ հեռացրել է Նասիր բէգին և նոր նրա հօփը ցրիւ տուել. էդ կորի-

ճուլթիւն է միթէ, քրդին փորձելու համար մեղադրանք կարդացի իրանց պիտի հասցէին ես:

—Շնոր էլ լաւ է արեւ, սլաութասխանեց քուրդը. Նասիր բէզն եթէ էստեղ լինէր, պէտք է, ուզէր չուզէր՝ մեզ հետ զէնքի բռնուէր. կամ կը յաշխուէր, յետ կը փախէր ու աշխարհքը կը հոստացնէր և կամ երկու կողմից մարդիկ կը փչանային ու շիւանին զլիսացաւանք կը լինէր: Եսպէս խելօքութիւն էր. Յունօն զիտի, որ Նասիր բէզի ժողովուրդն իրանց տիրոջը չի սիրում, նրա ոչխարի համար զուր կռուի չի բռնուիլ, իսկ մինչև Նասիր բէզի յետ դալը՝ թէ Վ. Ղ. գիւղացիք իրանց կորուստը կստանան ու թէ մենք ուտելու պաշար կունենանք: Նասիր բէզն էլ ինչ պիտի անի, ինքը կեղտոտ է, կարօղ է ուրիշի կեղտը լուանալ. ձէնը փորը կը քաշի, տազ կանի:

ԻԲ.

Ասիական ազգերը սովորաբար շատախօս և աւելորդապատում են. երկու խօսքով ասելիքը՝ կարճ կտրելու փոխարէն՝ նրանք համեմունք են զանազան աւաճներով ու շատարկ ու աւելորդ միջնադէպերով: Ինքս, իբրև փեղացի, չէի ձանձրանում Հասօյի շաղակրատանքներից, բայց բնութիւնն իրանը պահանջում էր, ողջ օրը ձիու վրայ՝ փանջուելուցն աւելի ախորժ էր մի աւելորդ ժամուայ հանդիսութունը. աչքերիս կողերը թէև այնքան ծանրացել էին, որ կարծես մի մի փթանոց բռն առած լինէին շալակները, իրանք իրանց փակում էին, բայց ես ուրախ էի հնգական փթանոց ծանրութեան շիմադրել, քան թէ քուն մտնել առանց ուղեղիս մէջ ինքնաբերաբար որոճուող առարկային մօտից ծանօթանալու:

Առաւել լաւ համարեցի առանց Հասօյի ետը վիրաւորելու, շատ քաղաքավարութեամբ և զգուշութեամբ կարճել նրա ճոռումախօսութեան կծիկը:

—Մի ուրիշ խնդիր ունիմ քեզանից, Հասօ եղբայր, ասացի, չի՞ կարելի բարեկամութիւն անես, մի տեսակ ինձ Գիւլօյին մօտիկից ցոյց տաս: Խնդրեմ մտքովդ վար վար բաներ չանցկացնես, ինքս էլ քեզ պէս ընտանիքի ու երեխանց տէր եմ, շեշտեցի ես, երբ նկատեցի քրդի երեսին, շփուար էր որոշելը, ուրախութեամբ,

Թէ խորամանկութեան ժպիտ. ինձ համար շատ հեղափոխութիւն է ծանօթանալ այն կնոջ հետ, որի համար Յունօջի ազատ կեանքը շատ նացել է:

—Աստուած չանի, աշխոյ, որ ինձ պէս մի ճանճ ու մօեղը հրամանոցդ վրայ չար բաներ մտքովն անցկացնի, ես հոգւով ուրախացայ, որ շուքս սուրբ բերանից Գիւլօյին տեսնելու խօսքն արիւնջողիդ վկայեց. հէնց հիմի որ հրամանքիդ համար կաթի գնացի, քո ղարաւաշը (աշխիւնը)— լամուկնեռուս մէրը (քրդի երեսային լամուկ են կոչում), ասաց, որ Գիւլօն միտք ունի աշին տեսնելու, համա ամաչում է, հայի կնիկ է, հայի մէջ չըխօսքանու թիւնն աղաթ է (ծէս): Ես քրոջդ մեր կնկանն ասացի, թէ աշին կը հարցնեմ. եթէ հրամանք կանի, շուքս արի, Գիւլօյի բերնից աշի հետ խօսի. շուքքրդի կնիկ ես, քուրդն ինչ գիտի քաղաքավարութիւնն ինչ բան է:

—Ի՞նչպէս, Գիւլօն կամենում է հետս խօսել, և ընչո՞ւ համար, զարմացմամբ հարց տուի քրդին, ես ո՞վ, նա ո՞վ, ի՞նչ ունի ինձ ասելու, հարկից է նա ինձ ճանաչում:

—Քեզ Գիւլօն շատ լաւ է ճանաչում, աշխոյ, խորհրդաւոր ժպիտով ակնարկ ձգեց երեսիս քուրդը, Նադօն Յունօյին ասել է, որ շուք օգնականի բարեկամն ես, Յունօն էլ իր ընտանուն է պատմել: Հալըմ' թ' Գիւլօն միտք ունի խնդրելու, որ հրամանքդ երկու խօսք չըխնայես Յունօյի օգտին օգնականի մօտ, չէ՞ որ մարշաւարդով է:

—Շատ լաւ, թող գայ, թէպէտեւ չեմ կարծում, թէ որ և է ծառայութիւն կարողանամ Գիւլօյին....

Խօսքս բերանումս սառեց, միանգամից ողջ իրանախմբի շները կատաղի հաւոց բարձրացրին. հարիւրից աւել ոչխարապահ զամբըռներ իրար խռնուած՝ մթութեան մէջ աչքերից կրակ ցայտեցնելով՝ վրանիս կողքով քամու նման անցան:

—Լաւ նշան չի, աշխոյ, շտապով երկու խօսք հագիւ արտասանեց քուրդը, էս ժամանակ սարերումը գայլեր շփուար կը գտնուէին, իսկ մեր շների քթերը զազանների ու օտարների հոտ առնելու համար շատ սուր են: Կայ, չըկայ՝ մեր օրան մարդիկ են գալիս, շուքեզ համար հանգիստ նստի, ես իմանամ բանն ընչո՞ւն է. տես՝ արդէն ամէն վրանից բազմութիւնը շուքս է վազում:

Մինչեւ ես բերան կը բանայի, քուրդն արդէն մթութեան մէջ անյայտացել էր:

Ստիպուած՝ ծառայիս ձայն տուի:

— Համմէ աշնչ, գալիս եմ, լսեցի ծառայիս պատասխանը, բայց ծառայիցս վաղ տուն ընկաւ ինքը քուրդ. Հասօն և կակազեց.

— Աշնչ, քո շուաքին ոչ ոք չի կարող շիպչիլ ես գեացի, ինձ էլ չես տեսնիլ, Գիւլօյին տիրութիւն արա. եկողը չափաւորներ իւզքաշին է իր ձիաւորներով. սուլթանն ¹⁾ անպատճառ եկել է Գիւլօյին բռնելու: Ինձ որ էստեղ գտնի, երկու որս միանգամից արած կը լինի:

Ում պատասխանէի, Հասօն մի ստուեր էր, որ եթէ հեծած ձիու ուղբերի շոփիւնը չըլտէինք, չէինք սխալուիլ, եթէ ասէինք՝ օդը ցնդեց, կամ գետնի տակն անցաւ. իսկ նոյն ռոպէին յանկարծակի վրանս տուն ընկնողը չը թողեց, որ կամ իւր երեսը փռնեմ, կամ մի ձեռքով գրկած և միւսով հետը քաշ տուած երեխաների շէմքերին նայեմ: Այսքանը միայն նկատեցի, որ փոքր ինչ առաջ քրդերի կանանց մէջ վեր ու նիստ անող հայի հարսն էր, ուրեմն Գիւլօն էր, որ հետը քաշ տուած երեխային գոգս ձգեց, գրկինը պինդ սեղմեց, շտապով մօտ գնաց, ճրագը փչեց ու քչիւաց.

— Աստուած իմ երեխանցն է խշճացել, որ քեզ ճամպամուր է բցել, էս կողմը բերել, ուղբերիդ մեռնեմ, աշնչ, իմ քորփէքանցս (մանրիկներին), քո ուղբ. համբուրող, անտես, անճանաչ, անբաշտ աղախին քրոջդ շուաքիդ տակն առ: Զուլտրների իւզքաշին գիտի, որ շու իր մեծաւորների լաւ բարեկամն ես. նա եթէ իմանայ, թէ էս վրանի տակինը շու ես, չի համարձակուիլ մօտ գալ: Երեխանցդ գլխովը պոխտ տուր անճար Գիւլօյին, աշնչ ջան, ինձ ու անմեղներիս գազանների ճանդը մի բցիլ:

— Հանգստացիր, Գիւլօ քոյր, պառկիր քո երեխաներովդ այդ գորգի վրայ, ահա իմ վերարկուն, վերցրու, վրաներդ քաշիր ու լուիր. յոյսդ նախ՝ Աստու և ապա ինձ վրայ շիր. աղահով եղիր, այս վրան մընել վստահացողը նախ՝ պիտի իմ շիակը տրորելով անցնի, յուսադրեցի ես:

¹⁾ Ժողովուրդը պահակապետին սուլթան, կամ իւզքաշի է կոչում:

— Սուս կաց, Վարդան ջան, առ ծիծիկ տամ, Գասպար ջան, լսեցի Գիւլօի ամօթխած քչփչիւնը, ձէն մի հանէք, աշէն ձեր ականջները կը կտրի:

— Ձէն մի հանէք, էգուց ձեզ համար չամիչ ու շաքար կառնեմ, մօր սպառնալիքը սիրալիր հաճոյատօտութիւնի փոխեցի ես:

— Լսեցիք, թէ որ լաց չը լինէք ու փազ անէք, քնէք, աշէն ձեզ համար մէյլա (միրգ) կը զրկի, բալէքս, քաղցր հնչում էր Գիւլօի նուրբ և քնքուշ մայրական շշուկը զաւակների ականջին:

— Սաք լաւ, որ աշէն ցամիչ կը փայ, էլ լաց ցեմ լինիլ, լսուեց մեծ երեխայի ձայնը:

— Նաան... Նաան... ծիծը բերանից թողեց, ծոր տուեց փոքրիկն ու նորից սկսեց փսփխալով անուշ անուշ մօր կաթը ծծել:

Մայրը հասկացաւ զաւակի միտքը, անմեղ գառնուկը սովոր է եղել, անշուշտ, ծծի վրայ մայրական օրօրի, կամ նանիկի մեղմահընչիւն աղդեցութեան ներքոյ քուն մտնելու: Նոյնը պահանջում էր և այժմ:

— Ձէ, անուշիկս, փսփսաց Գիւլօն, նանիկ կանչել չի կարելի, աղայի քունը կը կտրուի, աշան կը բարկանայ:

— Նաան... Դարձեալ ծիծը թողեց և ծորեց փոքրիկը, բացց այս անգամ արդէն բարկացած և լացակրկնած:

— Էսօր առանց նանիկ կանչելու քնի, Գասպար ջան, էգուց քազ ճոճ կը քցեմ ու նանիկ կը կանչեմ:

— Քնի Գասպարիկ, քնի, նանիկ չի կարելի կանչել, կուճիս (մանկական լեզուով՝ զլուխ) ցաւի ցաւի է անում, սկսեցի համոզել ես երեխայական բարբառով:

Մանուկը ձայնը կտրեց և լռեց: Կանոնաւոր շնչառութիւնից երևաց, որ արդէն քուն է մտել:

— Հիմի թնչ կը հրամայես, աղայ եղբայր, շնչաց Գիւլօն, թնչ անեմ ես:

— Քեզ ասացի, որ երեխանցդ հետ վերարկուիս փակ վստահ պառկիր ու լռիր. կուզես՝ մինչև անգամ անոջը քուն մտիր:

— Հապա եթէ իւզքաւաշին հարցնի՝ թէ ով է վրանիդ տակին պառկածը, կամ հրամանեցդ հակառակի ու ներս գալ, վերարկուդ վրայիցս չեմ քաշի, է՞ որ ամօթն ու անբաղդութիւնը միասին

կը գան: Մէկ՝ որ սարի ծէրին օտար ջահէլ կին արմաւը մի անծանօթի հետ վրանի տակ թնչ գործ ունի, մէկ էլ՝ որ իրանց ուղածը կը գտնեն ու քաշ կը տան, կը տանին, քեզ էլ փորձանքի մէջ կը քցեն: Էն ժամանակն թնչ կանի իմ խեղճ Յունօն, կամ թնչ կարծիք կը տանի իր անամօթ ընտանու վրայ:

—Թէ ինձ փորձանք չի գալ, էդ անկասկած է, իսկ թէ մարդ թնչ կանի, այդ իւր գործն է, բայց յոյս ունիմ, որ մարդդ կը հաւատայ, թէ իր ընտանին օտարի վրանում չի եղել. քոյրն իր հարազատ եղբոր գրկի մէջն է իր երկու զառնուկներով պաշտպանուել: Միամիտ կաց, քոյր Գիւլօ, հս զիրեմ, որ դու եղբայր չես ունեցած, բայց այսօր մարմնաւոր եղբոր փոխարէն՝ Աստուած մի հոգեւոր եղբայր է քեզ պարգևում, որ պարտաստ է քոյժ համար գլուխը մահի տալու:

—Աստուած ողջ պահի իմ եղբորը, իմ և Յունօյիս պարծանք, եղբորը, այս անգամ վստահօրէն ձայն հանեց Գիւլօն և լռեց:

ԻԳ.

Երկու կրակի մէջտեղն եմ, որ կողմը դառնամ, այրուելու եմ, խարոյկներից մէկը նմանեցնելու է հրդեհից բռնկուած մի նաւ. թացին պահեստի, որի բոցը հողմի առաջն ընկած՝ մոխրակոյտի է փոխում իւր ճանապարհին հանդիպած, շնչաւոր և անշունչ արարածներին ու առարկաներին և արդէն ջերմութիւնը երեսիդ կաշին հեռուից խանձում է ու մօր է քեզ իւր հրեղէն լեզուակների փնջակներում կլանելու. միւսը քամակիդ կողմից մի փոքրիկ օջաղ է՝ մի ձեռնաչափ մսի կտոր վրան խորովելու համար պարտաստած:

Ետը կը զարմանայ իմ ջիւարութեան վրայ. թէ ուր եմ տեղս կծկուել ու իր շուաքից վախեցող երկչոր մանուկի նման՝ յետ ու առաջ խշկոտում և ուսերս չաճախ ամբողջ կազմուածքիս հետ վեր վեր թռցնում: Ինչ մեծ դժուարութիւն էր լափող հրդեհի ճանգից ազատուելը. լոք տուր օջաղի վրայից, կամ տրորիր, անցկաց ու շունչդ մի ասպարիզաչափ հեռաւորութեան վրայ առ:

Պարմաճս Դէպքը բառացի մոքով ընդունելը մոլորութեան մէջ ընկնել կը նշանակի: Երկու խարոյկներից առաջինը մի նմանութիւն է քուրդ Հասօյի տուած անխորժ համբաւին. պաշտօնական

անձինք գալիս են խուզարկելու մի յայտնի աւագակի վրան և աշխարհը շողացնող աւագակապետի ընտանիքը կալանաւորելու: Յանկարծ՝ աւագակի մօտ հիւրասիրուած են գտնում հասարակական շիրք ու կոչում ունեցող մի համեստ պաշտօնէի, և ի՞նչ սարսափ, այդ պաշտօնեան իւր վերարկուի ներքոյ թագցրել է նրանց որոնածին, մի կնոջ, որի գեղեցկութեան համբաւը եթէ Նադօյից ու օգնականից էլ լսած չըլինէի, այս երեկոյ աչքովս տեսայ և հիացայ: Ես Հասօյին ոչինչ չասացի իւր ընտանիքի հետ ժամ առաջ վեր ու նիստ անող հայ կնոջ արտասովոր գեղեցկութեան համար, բայց քրդից շեռ պատասխան չտացած, զգացի, որ Գիւլօն էր: Ճիշդ է, մութն էր, ուշիւ է, ճրագի աղօտ լոյսը հեռուից շատ անզօր էր մի կնոջ գեղեցկութեան չափը որոշելու համար, բայց լուսի մի մռայլ նշույլը բաւական էր հրեշտականման գեղեցկուհու աչքերից ցոլած շանթով հարուածելու ոչ թէ միայն տարփածու շիւրաբորբոք երիտասարդին, մինչև իսկ երակներում արիւնը սառած զառամեալ ալեորին:

Եւ մթնէ, ուրեմն, աշխարհն ինձ պիտի շափապարտի, եթէ ես իմ ծառայիս խորհրդին չլսեցի: Նա քրդի գնալուց յետոյ՝ ներս ընկաւ վրանս և սկսեց համոզել ինձ, թէ ինքը մեր ձիանքը թամբել, վրանի շրանը կանգնացրել է ու բարւոք է շարուած հեծնելն ու շէպի Նասիր բէգի ամարանոցը վերաշառնալը: Չափարների գլխաւորը աշխարհքը գլխին է հաւաքել, կրկնեց նա Հասօյի տուած համբաւը, եկել է Յունօյի կնոջը բռնելու:

— Հապա հըր գնաց, հարցրի ես:

— Քշեց, գնաց էս քրդերի էլքաշու վրանումն իջնելու, և, հիմի որտեղ որ է, կը զայ ու մեզ էստեղ կը գտնի: Ախար, ամօթ է, աշխարհն ի՞նչ կասի. շու գողի ընկեր հօ չեա:

— Նատուղութիւններդ քեզ համար պահիր, ասացի, տար մեր ձիանքը հեռուումը կանանչի վրայ կապիր՝ թող արածեն, իսկ շու եկ վրանի ետեւի կողմը քեզ համար հանգիստ պառկիր:

Միամիտ ծառաս զարմացաւ. ես նկատեցի ասուղերի լուսով, որ նա զարմանքից ուսերը վեր քաշեց ու գնաց հրամանս կատարելու:

Խեղճ մարդ, էլ չըգիտէր, թէ իր տէրը, ինչպէս ասացի, երկու կրակի մէջ մոլորուել էր և աւելի վտանգաւոր կրակն այն փոքրիկ խարոյկն էր, որ իւր ուրքի տակ առկայծում էր:

Բաց-աշկարայ խոստովանում եմ ընդհանրութեան առաջ թուլութիւնս. ես այդ բոլորէն մտքով վերափոխուել էի Եդեսական, Աստուածաշնչի, փրաւորունկ Դրախտը, ուր աչքիս առաջ պարկեւրացած կանգնած էին մեր նախածնողները: Նրանք կանգնել էին բարույ և չարի գիտութեան ծառի տակ, բերանաբաց նայում էին սատանայ-օձի իրանց մեկնած, հրապուրիչ, բերանի ջուր վազացնող պտղին և յիշելով իրանց ստեղծողի պապութիւնը, կշռում էին պապութիւնապահութեան ու պապութիւնազանցութեան հետեանքը:

Մեղքս թնչ թագցնեմ, ինքս լինէի Աշամ պապի տեղ, ուրիշ տեսակ չէի վարուիլ: Եկէք, ձվ գիտակցութեան հասած Աշամայ զաւակներ, բացէք ձեր սիրտն և անկեղծօրէն խոստովանեցէք. ուղիղ չեմ ասում, որ ձեր կոկորդուսն էլ չէր Դէմ ընկնիլ մեր Եւա տափի խորամանկ ժպիտը, որի առաջին նախապապը հալուեց թաց եղած շաքարաւազի նման: Թող ոչ ոք չլպարծենայ, թէ ինքն աւելի հաստատակամ կը գտնուէր. մարդկային ամէն արժանաւորութիւնից գերակշիռն, ըստ իս՝ աչն թերութիւնն է, որ նրա մէջ ի բնուստ Դրուած է Դէսլի իւր հակառակ սեռը:

Մառաս վաղուց հեռացել էր, չափաւորներն ու շաղախները, չը գիտեմ ընչի՞, թողած Հասօյի տունը, վրանախմբի ներքեւի ծայրից էին սկսել ամէն տուն մի առ մի խուլարկում. իսկ ես այդ ժամանակը, հակառակ իմ ցանկութեան, չէի կարողանում վրանից Դուրս գալ, մնացել էի տեղս միտուած: Մութն էր, այո՛, բայց աչքերս ինքնաբերաբար լարուել էին Դէսլի ոտքիս տակ կուշ եկած հրաշալի գեղեցկուհին և, կարծես, պարտասօր էին իրանց տեսողութեան խռոչի մէջ կլանել մարսել ու նրանով զանգիս մէջ ասփոփուած ուղեղը կերակրել: Պարզ ասած, այդ բոլորէն մէջս թացել էր ամենայն գիտակցութիւն. ձեռքերս քաղցած վագրի ճանկեր էին Դարձել, որոնք իրանք իրանց յառաջ էին գնում, որ լարուած սուր մագիլներով յափշտակեն՝ իմ վեհանձնութեանն ապաւինած, իր ոտքով տուն ընկած համեղ որսին: Եւ եթէ ես զսպեցի իմ անզուսպ թափը, կծկեցի թեւերս ու չը յանդգնեցի մօտենալ աչն նուիրականութեանը, այդ վերագրելու է իմ մէջ մարմնացած ընտանեական սիրոյն: Ընտանեքն իմ աչքում մի անձեռագործ տաճար է, մի վերնաշին սրբավայր է, որին չար աչքով ու չար տե-

սուլթեամբ մերձանալ յանդգնողն այս աշխարհում ամենափճնի ու փնջոր արարածն է համարելու, իսկ այն կեանքում՝ Դժոխքի կրակին է արժանի:

—Ոչինչ, վճռեցի ես, թող չափարային հրեհն ինձ պապուազուրկ անի և այրի, քան թէ այս փոքրիկ կրակի ջերմութեան առաջ խանձուիմ, սևերեսանամ և մուր կտրուիմ:

Այս անդրդուելի վճիռն էր, որ զօրացրեց իմ ուրջերս և ես ամենայն զգուշութեամբ տեղիցս վերկացայ, մատներիս ծայրի վրայ Գիւլօյի կողքով անցայ:

Ուզում էի Դուրս գալ վրանից և դնալ Դէպի Հասօյի վրանի կողմը գրոհ ցուելու ոստիկանութիւնը, որոնց առաջին քրդերի ձեռքին վառուող հարկւրաւոր ծրագների լուսով պարզ նկատուում էր իմ նախածանօթ չափարների գլխաւորը:

—Գիւլօ քոյր, խելացութիւն համարեցի նախ քան վրանից Դուրս դալը կամաց քշփչալ ես:

—Հրամէ՛, աղայ ջան:

—Ձարթո՞ւն ես:

Մեռելն իմ տեղ կը զարթնէր, էս ժամանակ մարդի վրայ քնն վը գայ, պապասխանեց Գիւլօն:

—Ահա գալիս են չափարները, ասացի, բայց մինչև կռիցք քարը չածեն, աչքերդ չը բանաս. հարկւր անդամ անուռնդ փան, թէ կուզ՝—ես էլ նրանց հետ, Դարձեալ ձայն չը հանես, մի՛ վախիլ, յոյս ունիմ, որ քո կողքով չեն կարող անցնել, քանի ես ողջ եմ:

—Աստուած քեզ կեանք փնջ, ինչ լաւութիւն որ Դու ինձ ու իմ երեխեքանցը կանես, Աստուած քո ընտանու ու զաւակներիդ առաջը բերի ու ես գիտեմ, որ կը բերի. լաւ մարդին Աստուած կօգնի: Օրհնեց ինձ Գիւլօն ու ցուղ արեց:

Գիւլօյի լուռութիւնն և գուցէ իմ վրայ Դրած հաստատուն յոյսն էր, որ ինձ սիրտ փռեց ու ես ամուր քայլուածքով փոքր տեղ յառաջ գնացի և Դիմաւորեցի պահակախմբի պետին և ողջունեցի:

—Ախ, Դոնք էք ուրեմն Հասօյի հիւրը, զարմանք չայրնեց պահակապետը, ինձ ասացին, որ այս տեղ մի աղայ հիւր կայ:

—Տեսնում էք, ուրքով գլխով ես եմ, որ կամ:

—Խոչալէս և որպէշից:

Երկու խօսքով բացատրեցի իրողութիւնը և շնորհակալութիւն յայտնեցի աւագակ Հասօյից, որ առաջնորդ հանդիսացաւ անծանօթ լեռան գլխին մոլորուած մի ճանապարհորդի ու կողոպտելու փոխանակ՝ ընդունեց իւր շարժական յարկի ներքոյ:

—Իսկ հիմա ուր է ինքը, հարցրեց ինձ չափարները մեծը:

Յիմար կը լինէր, եթէ լսէր դալդ ու սպասէր, որ կռները կապէիր ու փանէիր:

—Ասենք՝ ես ուրիշ աւելի մի հետաքրքիր որսի երևից եմ՝ ընկել, բայց Հասօյին էլ եթէ ընկերացնէինք, մէկ ձեռքով երկու ձմերուկ բռնած կը լինէինք:

Պահակապետը պատմեց, որ քրդի փանն է Յունօյի կիներ, եկել է բռնելու:

—Շատ ցաւում եմ, որ մեր երկուսի միաժամանակ զուգարիպաբար հանդիպումը շատ անախորժ ըլլալէ մէջ կատարուեցաւ, Դուք օրէնքի անունով՝ արդարադատութեան ներկայացուցիչ էք, իսկ ես մեր արհամարհած Կոչիսի ու վայրենի լեռնաբնակի մարդասիրական բնասութիւնը պարտաճանաչութեան մի կենդանի ապացոյց, կամ ինչպէս իրանք ասում են, Աստուծոյ հիւր, պատասխանեցի ես: Զեք ոչ ոք չի Դատաւարարիլ, իսկ ինձ՝ եթէ երևիս էլ չասեն այս քրդերը, երևից պիտի հայհոյեն, որ ոտնամուտ իրանց համար Դժպտաբան եղաւ, ուրիշ խօսքով՝ ոտքս խէրով չեղաւ: Բայց որքան և Կոչի երևոյթ, սակայն մեզանից, ըստ էութեան՝ ոչ ոք մեղաւոր չէ: Ուրեմն համարձակ մտէք, պարտքդ կատարեցէք. եթէ կուզէք՝ նախապէս դնանք իմ վրանից սկսէք:

—Այդ ինչ խօսք է, վշտացաւ ինձանից պահակապետը, Դուք վիրաւորական առաջարկութիւն էք անում. երբէք ես ձեզ անվտանգութեան առիթ պուած չունիմ: Միթէ ես ձեր վրայ կասկածելու տեղիք պուի. ես միայն եկել եմ քուրդ Հասօյի տունը խուզարկելու, ուրիշ ոչինչ:

—Բայց որովհետեւ ոչ թէ քրդական վրաններն ակնարկեցիք և քրքրեցիք, ինձ ընչո՞ւ պիտի բացառութիւն անէք, մանաւանդ՝ որ իմ ժամանակաւոր շարժական բնակարանս նմանապէս պարկանում է այն մարդին, որի մօտ յատկապէս ուղարկուած էք Դուք: Եկ, եղ-

բանը, եկ, զուր նեղութիւն մի՛ կրիլ, թեւ ձեզ տալով ասացի պահակապետին, մի քաշուիլ, շու պաշտօնեայ ես, պաշտօնական անձը սառնեցես պիտի լինի, իր ծնող մօրը չըպիտի խնայի. քո ուզածը Յունօյի կինն է, ձայնս ցածրացրի և մերմաքար քափացի ականջին, եկ իմ ձեռքովս քեզ տամ, էս բոպէին եմ կողքիցը վերկացել, ահա իմ վրանումս վերարկուիս ներքոյ պառկած՝ սրտաբորով սպասում է իւր սրտի սիրոյն:

Մեզ շուրջ բոլորող քրդերը, հասարակ էր, որ շնչածա չըմբռնեցին, բայց նրանց ամէնքի երեսի վրայ ես պարզ նկատեցի երկիւղի և զարմացման նշաններ:

Առաջին անգամն ամէնքը շփոթուեցան և մոլորուեցան, բայց վերջը չափարնների գլխաւորի որուած պարտասխանից՝ նրանք ուրախ եղան իմ խելացի վարմանքի համար:

— Թոյլ տուէք ինձ չըհաւատալ ձեր կատակներին, պարտասխանեց ինձ պահակապետ. այս քրդերը Գիւլօյի այստեղ չըլինելու վկան ձեզ էին ներկայացնում, ինձ խնդրում էին, որ Հասօյի վրանը չըխուզարկած՝ ձեզանից հարցնեմ Յունօյի կնոջ մասին. իսկ եթէ սրանք ձեր վրայ յոյս չունենային, մի՞թէ այդպիսի միջնորդութիւն կանէին: Այո, այո, հասկանում եմ, արածդ կատակ է, Գիւլօն ձեր վրանումը չէ:

— Աւրեմն, հարց տուի ես:

— Աւրեմն եթէ շուք չէք նեղանալ, թոյլ տուէք ինձ մօնել Հասօյի ընտանեկան վրանն և խուզարկել:

— Իմ ինչ գործս է արգելք լինիլ օրէնքի կայտարմանը և, պարտաւորացրած կը լինէիք, եթէ ինձ նոյնպէս իրաւունք տայիք ձեզ հետ միասին ներկայ լինելու մի բոմանական գեղեցկուհու ձերբակալութեանը: Այդ կնոջ ամուսնական պայմաններն և հարիւրաւոր երիտասարդների ձեռքը մերժելն իմ յայտնի չէ: Ուղիղն ասած, վաղուց է՝ ես ցանկութիւն ունիմ այդ կնոջը տեսնելու և ուրախ կը լինիմ, եթէ ձեր շնորհիւ կարողանամ բաղձանքիս հասնելու:

— Զուր ընչո՞ւ նեղութիւն կրէք, եթէ այստեղ գտնեմ, իսկոյն կը բռնեմ ու կը բերեմ ձեզ մօտ, շուք զնացէք ձեր վրանումն սպասեցէք:

— Յօնքը շինելու փոխարէն՝ աչքը հանեցի, միքումս որո՞ճացի

յայտնի առածը. բայց իսկոյն մէկ ձեռքով աւերածս, միւս ձեռքով աւելի պինդ շինեցի. չէ, պնդեցի, ինձ ցանկալի է այդ գիշեցկութեան Դէմքի գծագրութիւնն ուսումնասիրել նեղութեան ընդունման վրանը բերելէ աւելորդ և ուշ կը լինի: Յայտնի խնդրում եմ՝ ինձ այդ բարեկամական շնորհքն անէք:

Ես նկատեցի, որ քրդերը շատ ուրախացան, երբ պահակապետը պատասխանեց.

— Խնդրեմ, եթէ այդքան ցանկալի և հետաքրքիր է ձեզ համար, Դուք քաջ զիտէք իմ Դէպի ձեզ պաժած յարգանքս:

— Լմաւ պրծանք, միքումս ասացի ես և լարուած ուշադրութեամբ երեսիս նայող քրդերին մի բազմակողմանի ակնարկ արի ու չափարներ զխաւորին թեանցուկ առած՝ Դարձաւ քրդերին.

— Դուք զուր էք իմ վկայութեանն ապաւինել. ես ինքս պաշտօնեայ եմ և ղուլլուլի մարդն օրէնքի ղուլլն է. նա սուրբիդ վրայ նստած՝ մի ձեռքով հացդ պիտի ուտի, միւս ձեռքով, եթէ մեղաւոր ես, կռներդ պիտի կապի:

— Աստուած քեզ կեանք պահ, աշնջ ջան, ըխտիարը (իրաւունքը) քո ձեռքն է, ձայն ձայնի պուլին ամէնքն ու ձեռքով ինձ օգտային համբոյրներ պուլին, ձեռքները նախ շրթունքներին մօտեցնելով և ապա աչքների վրայ Դնելով:

Մենք մօտեցանք Հասոյի վրանին, իսկ քրդերը մեզ հետեւեցին:

Աւելորդ է, իհարկէ, յիշելը, որ պահակապետի հրամանաւ՝ Հասոյի ընտանեկան վրանը կանխապէս շրջապատուած էր: Ամէն տեղ չափարներն ու շաղախները ընկնելը ձեռքներին պատրաստ Կանգնած էին:

Ի՛հ.

Կէս ժամից աւել է չափարներն իրանց զխաւորի հրամանաւ իրարոցով եւ պալիս քուրդ Հասոյի ունեցածը:

Ծիծաղելի է, իհարկէ, հինգ ընկեր մէջ անելիքի վրայ վեց պատրիկ ժամանակ վարնելը. ի՞նչ է քրդի զխաւոր ցեղապետի արացուածքը, որ ինչ լինի հասարակ մարդինը. մի քանի անգործ գորգ ու կապերոններ, քանի մի զոյգ աչճի մազից գործած խարարներ (տոպրակ) համարում եւ վրանաբնակների համար շոտլուութիւն:

Հաշուի տակ չըպիտի առնենք, անտարակոյս, քրդական փնարարութեան վերաբերեալ կաւէ ցցումը, կամ խնոցին՝ իւշ ու թան հարելու աչդ անհրաժեշտ առարկան, ծափեր, կճուճներ, բլիկներ, կովկիթներ, մի քանի հողէ պնակներ, բուրդ գգելու սանտրիք, ճախարակ ու թէշիկներ, հետն էլ՝ իւրաքանչիւր տան ամենակարեւոր զէնքերը՝ հրացաններ, ապրճանակներ, կեռակտուց սրեր, վահան, փէգ և ոչխարի բուրդ խուզելու մկրափներ: Եւ ահա, քուրդը համարուում է հարուստ և երջանիկ: Իսկ աչդ բոլորը, ինչպէս ասացի, խուզարկելու և շուռէ շուռ տալու համար աւելորդ ժամավաճառութիւնի կարիք չըկար:

Սակայն քուրդ Հասոյի տանը հակառակը կարարուեց. ամէն մի առարկան տանն անգամ վեր ու գիր են արել, խնոցիների ձեռնաչափ ծակոյթ են ներսը փնտրել, կճուճների բերաններն են բաց արել, բայց դարձեալ գոհ չէ պահակապետը. նա մի ուրիշ ինձանից յառաջ կանգնած՝ ժողովել է իր շիկագոյն յօնքերը, շրթունքներն ուռցրել է, կատարեալ իշխանաւորական շիք է առել, իւր սպորադերեալների յաճախակի կրկնած լալիւն, չեն երևում: խօսքերի շէմ՝ ուրը գեպնոյթ է զարկում և հրամայում.

— Նորից քրքրեցէք, անկարելի է, մկան ծակից պիտի դուրս հանէք, մինչև Բուհոյի կնոջն ու երեխաներին չըկալանաւորեմ, ուրիշ փոխելու չեմ:

— Սեւ Տօ չէր, վստահացաւ կամաց քչիչալ շաղախների ենթասպայ տանապետը, երկու ժամ է հոգեհան եղանք որոնելով, մնացել է միայն մի վրան, այն էլ խուզարկենք ու թողնենք հեռանանք:

Ղազախը գլխով ցոյց տուեց իմ վրանը:

— Ես առերիս դռն ժպիտ խաղացրի շէմքիս, բայց ներքուստ ամբողջ էութեամբ ցնցուեցի, երբ պահակապետը ձախ ցուցամասն ատամներով բռնեց, վայրկենաչափ մոմտուքի մէջ խորասուզուեց և յետ շրջուեց, երեսիս նայեց ու արտասանեց.

— Да! и точно!

— Ներկեք ինձ, սառը շէմք առաւ նա աչքերը ցած թողնելով, սրիպուած եմ:

— Ի՞նչ, չը հասկացած ձեռնալով՝ պատասխանեցի ես:

—Ասպարէզս վրանդի կենթարկուի, եթէ պարտքս չը կապարեմ. ձեզ շապ կը սիրեմ, բայց ինձ ձեզանից շապ կը սիրեմ՝ ամէն շապիկ մարմին կ'աւծ է, ուղիղ է թէ ոչ, վիզը ծռած, սպասեց նա ինձանից պապասխանի:

—Շփոթուելու հարկ չը կայ, ձեր ասպարիզի դէմը վակոլ չը կայ, միայն պարզ խօսեցէք, յանդիմանեցի ես:

—Հարցնում եմ՝ ի՞նչ անեմ, խուզարկեմ, թէ ոչ:

—Ի՞նչ, ո՞ւմ, էլ տեղ մնաց, որ չըխուզարկեցիք, չըլինի միտածում էք քրդերի լացն ջուլքաների քշանցքներն ևս բարձրացնել. տարաբաշխաբար՝ քրդի կանանց հազուստի փակ քրքրելը հնարաւորութիւն չըկայ, սրանցն եւրոպական տարազի հակառակն է. այնտեղ լացն շրջազգեստ, այս տեղ չորս տեղից կտրափած տղապ յետ բացուած փէշեր. ասելիք է եմ հասկանում, աւելի լաւ է, պարզ խօսէք, դարձեալ անհասկացող պապրուակուեցաց ես:

—Ի՞նչ էք ինձ տխմարի տեղ դնում, չըլսեցիք շաղախ տասնապետի խօսքը. սա տուշարկում է ձեր վրանը խուզարկել:

—Ախ, այժմ... Ծոր պուի ես և երկու ձեռքերս լացն փռած՝ ուսերս վեր քաշեցի և շրթունքներս կուռ ածեցի ու երկարացրի:

—Ձեր լուսթեամբ ու շարժուածքով ի՞նչ էք ուզում հասկացնել, ձայնը բարձրացրեց պահակապետը:

—Նախ՝ կը խնդրեմ համեսութեան չափը չանցկացնել, ձայնիդ շեշտը մեղմել, խոժոռեցի ես, երկրորդ՝ եթէ ընդհանրութեան չարգանք վայելող մի պաշտօնական անձի դէմ անվստահութիւն արդարացալովդ ասպարէզդ կընդլացնուի, ներկայ դործողութիւնդ և ապագայի պատասխանաբաւութեանդ ծանրութիւնը կշռի մէջ դնելով՝ կարող էք ընտրել՝ ինչ որ մի հասարակ շաղախի խորհուրդը և ոչ ձեր ուղեղի ծնունդ՝ առողջ կամ հիւանդ. դատողութիւնը ձեզ կը թելադրի: Ահա դուք, ահա վրանը: Բայց, նախ՝ ես ձեզ այստեղ կը թողնեմ, կերթամ, կը պառկեմ, ապա եկէք և ինձ զարթացէք:

Պահակապետի համար մահացուցիչ դատակնիք թուեցաւ իմ սպառնալիքս, նա գիտէր իմ մօտ յարաբերութիւնն իւր իշխանաւորներէ հետ. անտարակոյս, նա մտածեց, թէ վաղն և եթ իրան պաշտօնազուրկ եմ անել տալու: Թշուառ արարած, պաշտօնեաների

խոհանոցներում պնակներ լուանալով իր աստիճանին հասած մի էակ, աւելին էլ պահանջելու չէր: Խղճալին իսկոյն վիզը թեքեց, կծկուեց, մի բռնաչափ շառաւ և չը վստահանալով ձեռք մեկնել ինձ, շողշողալով այս ասաց.

—Ներեցէք, խոնարհ ծառայ եմ, չը մտածեցի, յիմար յիմար զառանցանքների մէջ ընկալ: Խեղճ եմ, ընտանեաց տէր եմ, չոր ոռճիկի պահած ենք, հացս մի՛ կտրէք...

—Ի՞նչ ես երեխայ երեխայ խօսում, սիրելիս, ձայն բարձրացրի վստահօրէն, արածս կատակ էր. եթէ հարկաւոր ես համարում պատասխանաւորութիւնից ազատ լինելու համար՝ հրամայիր, թող գնան վրանը տեղահան անեն: Ես հակառակ չեմ և ոչ կը վշտանամ. նեղանալու ի՞նչ ունիմ, մի՛թէ իմ տունն է, մի՛թէ լեռան գլխին աւազակապետի ընտանիք պատապարելու համար եմ ճանապարհից մոլորուել. լաւ կը շինէինք մեր տունը, եթէ պաշտօններս թողած՝ աւազակների հետ ընկերակցութիւն անէինք: Գէհ, առանջ, թե՛ն անցայ ես, գնանք, պատառորենք այս գիշեր ինձ պաշտպանող վրանը, հոգ չէ, մի ծածկ կը գտնինք, որ տակին կուչ գանք:

Պահակապետը ոտքը շէմ հարեց քարին և կանգնեց, իսկ ես չէի շաշարում ձիգ տալուց:

—Идемъ, братъ, чего бояться! ¹⁾ սխալուեցի և ոռուերէն խօսեցայ:

—И точно, Ваше Благородіе, жатая елка и мѣлководіе прашнаպетур, долгъ службы требуетъ ²⁾:

—Հիմի արի էշը ցիցը հանիր, մտածեցի ես, երբ որ մեր տիմար պահակապետը արդասանեց.

Идемъ, такъ идемъ! ³⁾:

Գնում ենք. ամբողջ բազմութիւնը մեր ետեւիցն է գալիս, բայց այս անգամ գնացողն ես չեմ, պահակապետն է ինձ ձիգ տալիս. վնջ այն շարժուելուն, ինչ ես եմ շարժուում, ոտքեր մնացել

¹⁾ Գնանք, եղբայր, ընչից ես վախենում:

²⁾ Ուղիղ է, Ձերդ Բարեօննշութիւն, պաշտօնական պարտականութիւնն ալ է պահանջում:

³⁾ Եթէ ալդպէս է, գնանք:

հն, որ յառաջեն, սրունքներն ոչժը քամուել է. ես միայն մտադանջութեան լաբիրինթոսի մէջ եմ խարխափում. մտածում եմ. ի՞նչ ելք գտնեմ կոտորածս կոծկելու:

Երկու քայլ, և մենք պիտի բարձրացնենք վրանի շունակի վարագոյրը:

—Ահա իմ վրանը, ներս մտիր, չըդիտեմ, ի՞նչ շիտաւորութեամբ՝ ձայն բարձրացրի ես, բացի մի ճանապարհորդական պաշտասակից ու հնոթի վերարկուից՝ իմ սեպհական ոշինչ չըկայ. մարդ ենք, ի՞նչ իմանամ, կարելի է Գիւլօն իր երեսպաքն առած՝ պաշտպանուում է վերարկուիս փակ, կամ գուցէ շորահան եղած՝ անուշքնի մէջ է: Այդ շէպքում, ի հարկէ, անվայել է մի նորադի կնոջ ննջարանը մտնելն առանց ձայն տալու և զարթնացնելու, եթէ կուզես՝ ձայն ցուր...

—Քաշուում ես հմ. ամօթ ես համարում, այնպէս չէ. փնտջունի, եթէ ցանկանում ես՝ ինքս ձայն կը տամ, հեզնօրէն հարց տուի ես...

—Ը՛ր՛ը՛... կմկնաց պահակապետը:

—Ոչինչ, ոչինչ, ի պարիւ քո՝ աչքիս վրայ, ձայն կը տամ, զիլ ու սուր ձայն ունիմ, խուլ ականջն էլ կը լսի. Գիւլօ, Գիւլօ, Յունօջի կին Գիւլօ, այնպիսի ճիշ արձակեցի ես, որ պահակապետը վեր թռաւ ու ձեռքս բաց թողեց:

—Ընչո՞ւ սարսափեցիր, եղբայր, կոմիկական գործողութեան ժամանակ այլ կերպ վարուել անկարելի է. եկել ես խուզարկելու ննջարանս, ներս մտիր: Ինքդ չես վստահանում, ճանապարհ տուր՝ նախ ես մտնեմ, մուտքը չես գտնում, կամենաս՝ քեզ սպասաւորութիւն անեմ, դուռն առաջիդ բաց անեմ:

Եւ ես առաջ անցայ, վրանի մուտքի վարագոյրի ծայրը պինդ բռնեցի, երեսս դարձրի պահակապետին և աչքերի մէջ նայեցի:

Երևի, իմ խաղացած խաղերի կեղծիքն առաջներն բռնած ճրագի լուսով պարզ նկատեց պահակապետն աչքերիս մէջ և սիրտ առաւ ու դարձաւ իւրայիններին.

—Տղայք, վրանը շրջապատեցէք, բայց ոչ ոք չըհամարձակուի ներս գալ:

Եւ պահակապետը ճրագն առաւ մօտին կանգնած քրդի ձեռքից:

— Մտէք, գալիս եմ, ասաց նա ինձ ու քայլը բարձրացրեց, որ առաջ չնի:

Թէ ի՞նչ կերպ կը վարուէի ես, ներս կը մտնէի, կամ ի՞նչ պատասխան կը պաշխ. գուցէ և ապրակէի, այդ կէտը մինչև ցարդ ևս չեմ կարողանում որոշակի վճռել, ըստ որում հետեանքն այնքան անակընկալ էր, որ ինձ կապարելիք չըմնաց:

Պահակապետի բարձրացրած քայլը գեպնին չառաւ. նա միջքի վրայ յետ շրջուեց ու ճրագը ձեռքիցն ընկաւ:

Հաւ, որ քամակին բազմութիւն էր կանգնած, բռնեց թէ չէ, թիկունքի վրայ գեպնին: փռուելու էր:

Իւր շնորհքը չէր, որ վայր չընկաւ. պառկեց իւր ետեւը խմբուած բազմութեան կրծքին և նրանց հետ միասին անգիտակցաբար մի աներևոյթ խուռն ուժից յետ յետ մշուելով, հասաւ մինչև հեռուումը փնկոտուած քրտերի վրանները:

Ոչ ոքի չենք կարող մեղադրիլ, եթէ անձնապաշտպանութեան անբռնարարելի նկատմամբ՝ ոչ մինը չըմնաց իմ վրանի մօտ, մեզանից ամէն մէկն իր գլուխն ազապելու հոգսովն էինք:

ԻՇ.

Ի՞նչ պատահեցաւ:

Երեւակայելու է մի խուռն բազմութիւն. հարիւրաւոր անձինք խմբուած մի հրապարակի վերայ՝ հանդիսատես են որ և է պետարանի, կամ նոյն իսկ գիւղական հարսանիքի: Ոգեորութեան գաթնակէտին հասած թոպէին. մէկէլ յանկարծ՝ շիմացից մի ահռելի գազան՝ գայլ, արջ, թէկուզ կաթաղած շուն, չեմ ասում առիւծ ու վագր, որոնք չըկան մեր աշխարհում, անակնունքի կերպով բերանի յետ բացարած՝ յարձակուի շէտի խուժանը:

Այդ գործուք արդեօք այդ թոպէին մէկը, լինէր նա շիցուք քաջասիրտ ու աներկիւղ մի որսորդ, որի գործը տարիներով գազաններ որսալն է, որ կարողանայ չըշփոթուիլ ու գլուխն ազապելու համար ոտքի տակ չըտալ իր ետեւ կանգնած ամբոխին ու չըփախչի:

Բայց որովհետեւ գիշեր է, մենք հնարաւորութիւն չունէինք մեզ վրայ յարձակող գազանին տեսնելու, մի ուրիշ համապատասխան օրինակով յարմարացնենք մեր շփոթուելու և գլուխ կորցնելու պատճառը բացատրելու համար:

Երևակայենք, որ զօրաբնակ մի վայրի մօտից անցնում ենք ու չը գիտենք էլ, թէ մեզանից շատ մօտ տեղում այդ ընկերներն կատարում է զիշերային զինուորական վարժութիւն: Մենք մեզ համար ապահով մեր ճանապարհը բռնած՝ գնում ենք: Յանկարծ մի հանդիպակացից հարիւսւոր հրացաններ միաժամանակ բացւում են մեր երեսին:

Միթէ մենք սարսափահար չենք գալ, միթէ չէնք փախչիլ:

Բայց մեր դրութիւնն աւելի վատթար էր. մենք գիտենք, որ սարի գլխին, քրդերի ամառանոցում ոչ զօրք կայ, ոչ զօրանոց: Այն ինչ հրացանների միաժամանակ ճարճափուն էր հապա, որ կայծակնացալ տմպի պէս յանկարծ տրաքեց մօտակայ բարձրաւանդակի գլխից և երկնքում խաղացող փայլակի ցոլքի նման մեր աչքերը խորդեց:

Մէկ, երկու, երեք... իրար ետեւից բացւում են հրացանները. ձիանց ուրքերի դոփիւնն ու կրակ թափող տեղից օդը թնդացող խառն ի խուռն ու անհասկանալի ճիւղալական գոռում գոչումը բոլորիս լեղապարտու արին. մեզանից ոչ մինն իրան հաշիւ չտուեց, բայց երևի կարծեց, թէ զօրքի ամբողջ վաշտի գրոհ տուած մեզ վրայ են յարձակում: Ես հաւատացած եմ, որ շատերը մեզանից սարսափի ազդեցութեան ներքոյ՝ կարծել են, թէ արդէն իրանք գնդակահար են եղած: Գոնէ ես այդպէս կարծողներից մինն էի և ձեռքս ծործորակիս պատրէշ արած՝ որ գնդակն ուղեղս չը ցրուի՝ անգիտակցօրէն փախչում էի:

Ի՞նչ թէ ես, ի՞նչ թէ պահակապետի շաղախներն ու չափաքաները, իրանք քրդերն էլ գլուխները կորցրել էին. երեսանների լաց ու ճղճոցը, շների ոռնոցն ու հաչոցն ականջ ծակող մի համերգ էր:

Զարմանալին այս է, որ երբ մենք բոլորս ուշքի էինք եկել, երբ պահակապետի խումբն արդէն ձիանքը հեծած՝ իրանց պետի հրամանին էին սպասում, որ դիմադրեն մեզ վրայ կրակ թափող յարձակում գործողներին, հինգ ընկերացի յետոյ լուծութիւնը տիրում է, հրացանների ձայները դադարում են և ձիանց ուրսաւայները աստիճանաբար ընդհատւում է:

—Աշայ, աշայ, լսում եմ ետեւիցս ծառայիս ձայնը, երբ ես հանդարտելուց յետոյ, շտապում էի դէպի պահակապետի խումբը: Աշայ, ախար հըր ես գնում, դեռ կաց, պատմեմ, յետոյ

ուր ուզում ես՝ զնա, հասաւ և վստահացաւ ու ետեւիցս վերնահանդերձիս ծայրը ձիգ պուկեց ծառաս:

—Տեսմար, աշայ, աչքովդ իրան տեսմար:

—Ո՞ւմ, այ տղայ:

—Հրացաններն երբ առաջի անգամը տրաքացրին, ես նստած տեղս վրանի ետեւը կպայ մօտիս մեծ քարին ու գորտի պէս ծափաղեցի, մնացի:

Մէկ էլ՝ էն խառնաշփոթութեան ժամանակ, երբ որ բոլորը բաց թողին ցրուեցին, աչքիս պոչով մտիկ տամ, տեսնեմ՝ էս մեր Նաշօն ու քուրդը ձիանքը լցրած, քշեցին, մեր վրանի առաջին իջան, ձիանց սանձերը զուկները քցեցին ու մտան վրանը:

Դեռ երկու հետ աչքս չէի թերթել ու բաց արել, որ Նաշօն մեծ հրնխին ու քուրդը պտտկին գրկած, Յունօյի կնիկն էլ հետները՝ վրանիցը շուրս եկան:

Նաշօն երեխին պուկեց քրդին, ինքը նստեց ձիու վրայ ու Յունօյի կնոջը դաւակը քաշեց, երեխին էլ գրկեց. քուրդն էլ իր ձիուն նստեց ու պտտիկ երեխին գրկեց ու, հայդէ, քշեցին շէպի սարը: Զըքաշեց մի բուպէ ու ձայն ու ձունը կտրուեց:

—Դու ինքդ տեսմար, հիմի մեր վրանումը ոչ ոք չը կայ, կարելի է երկիւղիցդ աչքերիդ աչնպէս Է երեացել, կրկնեցի իրար ետեւից մի քանի հարցեր:

—Ոնց որ հիմի ոչ ես եմ էն վրանի տակին ոչ շու, էնպէս էլ Յունօյի կնոջ ու երեխաների հոտն էն տեղ չը կայ. թէ կուզես, քանի ոչ ով մօտ չի եկել մեր վրանին, համեցէք աչքովդ տես:

Աչքն արդար աւելի լաւ է, քան սիրտը մեղաւոր, միտքս բերի պապենեկան առածն ու շտապեցի մտնել իմ վրանը:

Զայն տալու, կամ լուցկի վառելու կարիք չըկար. բուպէի մէջ ամբողջ վրանը խուղարկեցի, պալուսակս էր անշարժ իւր տեղն ընկած և վերարկուս էր մի կողմը ձգած:

—Այժմ շու. զնա և քո նախկին տեղը՝ ասածդ քարի տակ՝ կծկուիր ու չըշարժուես. թէկուզ կտոր կտոր անելու լինին, բերանիցդ խօսք շուրս չը թողնես. շու ոչ քարի տակիցն ես հեռացել և ոչ աշամորդի տեսել, հասկացմար:

—Գլուխս շարմանով հօ չի՞ լցրած, որ չը հասկանալի:

—Ի՞նչ ես շուարուել, մնացել, շտապով ցած իջալ և քշիւացի պահակապիտին, որ իր խմբով ձիաւորուած կանգնել էր քրդերի էլքաշող վրանի առաջին. բաղդդ իւր ուղքովն է քեզ շիմաւորել և շու երես ես թեքումս Սնշուշոր Յունօյի խումբն էր, որ ինձ հիւրասիրող քրդի թելադրութեամբ եկել էր հետդ կռուի բռնուելու. բայց երևի նկատելով ձեր թուի առաւելութիւնը՝ յետ նահանջեց:

—Ուրեմն ի՞նչ անեմ:

—Ըստ իս, պարտքդ է ետևիցն ընկնելը. կը յաջողի բռնելը, լաւ, անյաջող կանցնի, որ աւելի հաւանական է, շու քո պարտքդ կատարած կը լինիս և իշխանաւորիդ շնորհակալութիւնը կը վայելես:

Իմ կողմից՝ վարմունքս ապաշնորհութեան մի փոխադարձ չէր. Յունօյի, իւր խմբի և նոյն իսկ քուրդ Հասօյի ինձ այդ օրը մաւրուցած ծառայութիւնների շէմս նս համոզուած էի, որ Յունօն իւր հարազատներին վրանգից ազատելու համար էր յարձակում գործել: Եկաւ, տարաւ, անցաւ, գնաց. խելացութիւն չէր լինիլ իւր կողմից զուր տեղն իւր շէմ՝ նորից զինել անշական իշխանութիւնը. ընչհա, ուրեմն, խորհուրդ չըստայի բաղդախնդիր մի ստորին պաշտօնէի հաճելի գործուել իւր մեծաւորներին:

Պահակապետը մի քանի վայրկեան լռեց. նա, ինչպէս երևում էր, չափ ու ձևի մամուրքի մէջ էր. նա ձախ ցուցամասուր ճակատին զարկեց և պարասխանեց.

—Մեծասէս շնորհակալ եմ՝ բարեկամական խորհրդիդ համար: Տղայք, շարձաւ նա իւրայիններին, հետեցէք ինձ. գնանք, հասնենք, զարկենք, աւազակային խումբը ցրիւ տանք ու մեր պարտքը կատարենք:

Եւ նա սրարշաւ բարձրացաւ սարն ի վեր, հրամայելով քրդերի էլքաշուն՝ քսան մարդ ձիաւորել ու իրանց օգնութիւն ուղարկել:

—Աչքիս ու գլխիս վրայ, խոնարհ երկրպագութիւն պուեց քրդերի էլքաշին, շուք շեռ սարի զլուխը բարձրացած չէք լինիլ, մեր կորիճները ձեզ կը հասնեն:

—Աղայ, իւր օգնականին ձիաւոր հանելու հրահանգը երկու խօսքով տալուց յետոյ՝ մօտեցաւ ինձ քրդերի էլքաշին, սրտիդ շառնես, հրամայիդ համար չեմ՝ ասում, համա ձեր ղուլլուղի մարդկանցից շատերը զուր են թաղաւորի փողերն ուտում:

—Ի՞նչպէս, հարցրի ես:

—Հոսպ օր խելքով սա՛ կէս գիշերիս՝ խեղճ ձիաւորներին առաւ, քարերն ընկաւ: Հերիք չի կնքան բազմութիւնը, մեզ էլ իր հեպ ուզում է Կանջիլ: Յունօն հիմի Դարալագեագն էս երեսին թողած կը լինի: Սա ժամանակին Յունօցի շուաքից մուկը Դառաւ սասանեց, հիմի՞ է աչքերը բաց անում:

—Իշխանաւորը լաւ է հասկանում իր անելիքը, խոժողած պապասխանեցի քրդին և շարունակեցի. աչքը որ աչք է, իրաւունք չունի արդնջալու, թէ ընչի՞ է Աստուած յօնքին իրանից բարձր տեղ պուել. քիթն, ուրեմն, ընչի՞ պէտք է աչքի վրայ Դապողութիւն Կոստ: Զափարների իւզբաշին է այսօր իրաւունքի տէրը, իմ ու քո գործը չէ նրա շուաքի Դէմ խօսելու. հրամայեց՝ հնազանդուիր ու ձայնդ փորդ գցիր: Այսօր ես քո հիւրը լինելով՝ ներում եմ յանդգնութիւնդ, ուրիշ անգամ եթէ չափսդ կորցնես, կարող ես փնասը կրել Դէհ, հերիք է, հերիք է, գնա, ինչ որ հրամայած է, շուս կապարիր:

—Բալի աղանջ, խորճուխ տուեց քուրդն և հեռացաւ քոռ փոշիման:

—Խեղճ մարդ, չիմացաւ, թէ ըստ էութեան, ես միանգամայն համակարծիք եմ իրան, բայց ճանաչելով Կեղական ժողովրդի տգիտութիւնն ու բնաւորութիւնը, սխալ գործած կը լինէի, եթէ հաւանութիւն տայի իր կարծիքին:

Հերիք է, որ ռամկին, լինի նա հայ, քուրդ, այդ միւսնոյն է, մի քիչ քաղցր Դէմք ցոյց Կոստ, հեպը նստես, անմեղ կապաններ անես, նա խեղճ իր վարմունքը կը փոխի Դէպի քեզ, չափազանց յանդգնութիւն ցոյց կը Կոստ, օրանաւոր պահանջդ չի կապարիլ և քեզ մեծ Դժուարութեան մէջ կը Դնի:

Այլ տեսակ կը լինի միանգամայն գիւղացու վարմունքն իւր Դասակարգի օտարականի հեպ: Ամեն տեսակ յարգանք ու սէր, ամեն նաանկեղծ հիւրընկալութիւն «Աստուծոյ հիւրից» չի խնայիլ:

Բռնակալութեան ներքոյ ճնշուած, անասնական ստորութեան հասցրած, պարտուոյ զգացումից զրկուած, վրէժխնդրութեան բնական պահանջը մոխրի մէջ ծածկած կրակի նման սրտի խորքում մեռցրած անբաղդից աւելին սպասելով է մի թէ:

Բայց այս թողնենք, այս մի լուրջ ուսումնասիրութեան խըն-
դիր է:

Ի.Զ.

Այս քաղաքիցս շուրջ պատրաստուեցին քրդի ձիաւորներն և զը-
նացին պահակապետի հրամանը կարարելու: Իմ զարմացական
հարցին՝ էլըաշին կարճ խօսքով բացատրեց բանի էութիւնը. ինչ
նշանակութիւն ունէր՝ նրա ասութեամբ՝ քրդերի համար պատրաստ
ուելը. իրենց սովորութեան համաձայն՝ իրանցից իւրաքանչիւրը
մի ձի թամբած ու առանց սանձի պարանով կապած պիտի ունենայ իր
վրանի հանդէպ կանաչ մարգագետնի վրայ արօտի թողած, իսկ վրանի
մէջ, յայտնի տեղում կախուած պիտի լինի իր զէնքերը: Քիչ ամառ
կը պատահի, որ սար եկող քրդերի ու իրանց սահմանակից թուրքերի,
երբեմն և Դրացի հայ գիւղերի մէջ ընդհարումներ տեղի չունենան:
Դիցուք, թէ մէկին յարկացած արօտապելիներում միւսների հո-
տերն են հովիւների անփութութեամբ արածել, կամ Դիւրմամբ
թշնամաբար սորա արօտապելիները նա է ոտնապակ փռել, գիւ-
ղացիների արտերն են մէկի կամ միւսի նախիրներն ու ջոկերը
մտել, այսպիսի Դէպքերում՝ զէնքի ոյժն է արդարութիւնը վերա-
կանդնում. Դիւան-Դաւթաստանի միայն մարդասպանութեան Դէպքե-
րում է Դիմել հարկ լինում:

Այսպիսի քրդի էլքաշու փռած պատճառաբանութիւններն
էին, իսկ աշխարհքին յայտնի է, որ քրդերի համար մանր գողու-
թիւնները, իրարից փաւար, ոչխար ծածուկ ճանգելն ու մորթելը,
անգէն ճանապարհորդի ունեցած քիչ ու շատ արժէքաւոր իրերը
խլելը սովորական երեւոյթներ են. ուր ձին ու զէնքն անհրաժեշտ
օժանդակիչ ոյժեր են:

Գնացին քրդի ձիաւորները պահակապետի խմբին օգնութեան,
բայց, չեմ կարծում, թէ տեղ հասած լինէին. չանցաւ կէս ժամ՝
և չափարների պետն իւրաքանչեւին ու քրդերին ետեւ ձգած՝ եկաւ
և ինքը վրանիս առաջին իջաւ, միւսներին պարուիրեց սպասել
էլքաշու վրանի մօտ:

—Այդ որքան շուրջ, երեւի չը հասաք աւազակներին, հարցրի ես:

—Հասանք և լու հասանք, շնորհակալ եմ բարի խորհրդի հա-
մար, ձեռքս բռնեց ու պինդ սեղմեց պահակապետը:

Նա պատմեց, որ լեռան միւս երեսին, մի ձորաթմբի վրայ՝ մթութեան մէջ՝ հանդիպել է Յունօյի խմբին և հրացաններ է գեղացիներանց վրայ. բայց որովհետեւ ճանապարհ չի եղել ձորն իջնելու, ինքն ստիպուել է վերադառնալու հրաման արձակել:

—Ականջներիդ թմբուկները կը պատառուէին, պարծենալով պատմեց պահակապետը, մերայնոց ու աւազակների զոռզոռոցից: —Տղէք, կրակ թափեցէք, ձայն եմ փալիս ես,—թափեցէք, նոյն հրամանը փալիս է Յունօն. —Հէյ, աշաղակում են մերոնք,—հէյ, կրկնում է Յունօյի խումբը. ճարճաբուրդ են այսպիսից մեր հրացանները. ճարճաբուրդ են շիմացից աւազակներին: Բարեբաղդաբար, մեր շիրքը բարձրութեան վրայ էր, մեր գնդակները տեղ էին հասնում, իսկ նրանցը զուր վայելում էին օդի մէջ, և այդ էր պարճառը, որ ինչպէս ինքս հաստատապէս կարողացայ աստղերի աղօտ փայլով պեսնել, աւելացրեց պահակապետը, Յունօյի խմբից մի քանի հոգի վիրաւորուել են, իսկ երկուսն էլ սպանուել են:

—Շատ ափսոս, վերջաբան արեց իւր քաջագործութիւններին. պահակապետը, որ գիշեր է, հնարաւորութիւն չը կայ մեր կատարած պարականութեան ապացոյց շիակները ձեռք բերելու, իսկ մինչև առաւօտ՝ Յունօյի մարշիկն իրանց վիրաւորուածներին ու սպանուածներին չեն թողնիլ, կը փանին:

—Այո, ափսոս, ժպտալով ցաւակցութիւն յայտնեցի ես, թէ չէ ձեզ շորանով փայլուն ապագայ էր սպասում:

—Հիմա էլ կորած չէ իմ ապագան, եթէ դուք բարեհաճիք ձեր բարեսրտութեան շնորհն ինձանից չը խնայելու:

—Ինչքան ձեռքիցս կը գայ, աչքիս վրայ, բայց ինչ ծառայութիւն կարող եմ այս Դէպքում ձեզ մատուցանել, ըստ իս՝ և ոչինչ, ուսերս վերքաշեցի ես:

—Միթէ դուք այժմ այստեղ ականաբեա չէք իմ ճիշտ պաշտօնակատարութեանս. մի՛թէ ես կարող էի նախապեսել, թէ Յունօն օդորուելով ձեզ հիւրասիրելու առիթով իւր փունն եկող քրդի պարմուաճքից, կը փութար ու կազապէր իշխանութեան ձեռքից իւր ընտանիքը:

—Ձեր ասածով, ուրեմն, ես յանցանք եմ գործել անճանօթ լեռան գլխին ճանապարհին մոլորուելով ու Դէպքի բերմամբ՝ աւազակ

քուրդ Հասոյի հիւրը լինելովս, և քաւած կը լինիմ մեղքս, եթէ վրանիս ցոյցից աներեւոյթ աչքով ներկայ լինէի լեռան միւս երեսին կայարածդ քաջութեանը, կամ լսէի ժայռերից անդրադարձած արձագանգները:

—Ներեցէք, ես ձեզ վիրաւորելու մտքով Հասոյի, մանաւանդ թէ ուրախ եղայ, որ առիթ կուենամ ձեր բարեհաճ վկայութիւնից շահուելու:

—Հոգ չէ, կարևոր չէպըում ես վկայիմ, թէ ինչ եռանդով մանրակրկիտ խուզարկութիւններ կայարեցիք, աւազակների ետեից ընկաք, հրացաններիդ յաճախակի սլայթումներից ինձ քնել չը թողիք:

—Սիթէ արդարեւ Դուք լսում էիք հրացանների ձայները, ընդհանրեց, ուրախութեան զգացմունք արտայայտելով Դէմքի վրայ պահակապետը:

—Այո, լսեցի և շատ ու շատ, մինչև անգամ այդ մասին ծառայիս հետ վիճաբանութեան մէջ մտայ. նրա ասութեամբ՝ ձեր կողմից փամփուշտներն ապարդիւն կորցնելն ինձ լսեցնելու հնարագիւրութեան խելացի միջոց էր, իսկ ես հակառակն էի պնդում, թէ ձեզ համար առաւել նպաստաւոր էր. ես կարծում էի, թէ հասել էիք աւազակային խմբին և հետները կռուի բռնուել:

—Տեսնա՞ք. հոգիդ վկայել է. իմ պարմուռածքն ու ձեր ենթադրութիւնը համապատասխան են միմեանց:

—Շնորհ բարի, ապահով եղած՝ ճանապարհներդ բռնեցէք և վերադարձէք, իմ կողմից՝ ձեր բարեբաղդութեան համար բարեխօսիլն իմ աչքիս վրայ, միայն թէ Դուք նախապարտաւորեցէք հետդ եղած ձիաւորների զխաւորներից մի երկուսին:

—Ես արդէն մի քանիսին շքանշանի խոստում արել եմ. երկու աւազակից մէկին սպանողը, շաւերի վկայութեամբ՝ շազախների տաճարապետն է լինելու, իսկ վիրաւորողները՝ չափարների երկու զխաւորները: Ի՞նչ անենք, նկատելով աչքերիս հեգնական հայեացքը, շողոքորթ ժպիտ խաղացրեց Դէմքի վրայ պահակապետը, սշխարհքս բոլոր առեւտուր է. չես վճարիլ, չես սպանալ: Մտադիր եմ քրդերի էլբսշուն նմանապէս կրծքի մէղայլի խոստում անելու:

—Արդէն ձեր զործը ձեր ձեռքովն էք բռնել, կարող էք ապահով գնալ, իսկ ինձ հարկաւոր է խոնջացած անդամներիս կազդու-

քելու ամենաէական միջոցը—քունը չը փախցնել: Բնորի գիշեր, ասացի եւ ձեռքս պարզեցի:

—Աղայ, ջան, շեռ աղայ սուլթանին ճանապարհ մի՛ շնիլ, շրսեից ձայն տուեց ծառաս եւ շտապով ներս եկաւ, գլխարկը հանեց, վիզը թեքեց ու շողրքորթ ժպիտով շարձաւ պահակապետին: (Այդ պաշտօնը ժողովրդի լեզուով սուլթան կոչուած է որոշուած):

—Աղայ ջան, Աստուած գառնուկներդ պահի, չի՞ կարելի քո ձիւսորների հետ ինձ համար էլ մեշայլ բերել տաս. քեզանից ինչ կը պակասի, ասա՛ որ ես էլ ձիս նստեցի, քո մարդկանց հետ Յուսոյի խմբի ելուեցն ընկալ. թող սպանուածներն երկու չը լինին, երեք լինին. էդ երեքից մէկին, հէնց բռնենք, իմ զիւլլէն է շիպել. ո՞վ պիտի գայ էս սարի գլխին սուրն ու ճշմարիտը որոշի:

—Մեծ ուրախութեամբ, պարասխանեց պահակապետը, եթէ միայն շուք չէմ չէք, ի հարկէ, շարձաւ նա ինձ:

—Իսկ եթէ, Միքայէլ, առանց պահակապետին պատասխան տալու, ասացի ծառայիս, ես վկայեմ, որ շու վրանիս մօտից չես հեռացել, այն ժամանակ քո մէղայլը հօ ջուրը կընկնի:

—Աղայ ջան, քեզ ո՞վ էսպէլ ճշմարտութեան վկայ շրեց. ես կասեմ, որ շու քնած էիր ու ինքս քեզանից ծածուկ ձիւսորուեցի, աղայ սուլթանի հետ գնացի. շու էլ սուս կը կենաս ու մի օր էլ կը սեսնես, որ քո Մուքէլդ գիւղումն՝ աղայ Մուքէլ շառած՝ բերանիցդ շուրս եկած հրամանը վրաշարին (անմիջապէս) կատարիլ է տալիս: Հիմի էլ, ասենք, անծանօթ գիւղում ես աղայ Մուքէլ եմ, բացց, մէղայլ որ ունենամ ձախ ծծիս վրայ ստալշալիս, պատիւս մէկին երկուս կաւելանայ ու էդ ախար քեզ համար էլ մեծ պատիւ է, որ թագաւորի մէղալաւորը քո շրան դուլն է, քո հրամանակատար ծառան է: Եդպէս չի, աղայ սուլթան, գլխիդ շուրբան, էդ օրհնած բերանովդ իմ ալին խնդրիր, որ մենք Յուսոյի խումբը ցրիւ տալու գնացած ժամանակներս՝ ինքը խոր քնած լինի. սաքի թէ ինքը մեր թուանքների տրաքտրաքոցից զարթնում է ու ինձ ձայն է տալիս եւ զարմանում, որ կեանքիս մէջ առաջի անգամն է, որ իր կանչելովը բողբի մէջ չտրեղծուեցի ու իր շուրուշին չը կանգնեցի: Մի բան էլ չը մոռանաս, սուլթան աղայ, ինձ էլ գրի քո վկաների շարքումը: Սխալ ես, սպանուածներն երկու չէին, երեք

էին. մէկը հէնց Յունօյի կողքին կանգնողն էր, որ երեւի Յունօյից յետոյ բոլորից մեծն էր: Հասկանում եմ, շուրջ չուղեցար հպարտանալ, ծածկեցիր, բայց ես իմ աչքովս տեսայ, որ քո գիւլէն նրա աջ ծծի տակիցը մտաւ, էրաթաթովը շուրս եկաւ:

—Շնոր լաւ, շնոր լաւ, սիրելի Միքայէլ, ինչպէս ասում ես, ես քեզ էլ հետս կռուի եմ փարել, յոյս ունիմ, որ քո աղէն շար խոր քնի մէջ է եղել, քո հեռանալը չի իմացել և երեք աւազակից մէկին շուրս ես սպանել:

—Բերանիդ մաքանշ, բերանիդ, բերան չի՛ փաճար է, էդ հօ Մահմարի շուրանի կողքին գրած խօսք է, Սուլթան ջան, բայց թող աւետարանի կողքին էլ գրուած լինի, թէ ես վկայում եմ, որ գլխաւոր աւազակի սիրտը քո էդ քաջ կոնից քցած թուանքի գիւլէն է խաշել: Մեռնիմ աւետարանի զօրութիւնին, աւելացրեց Միքայէլը, կը ների, չի պատիւ. իրան հօ փնաս չենք փալիս՝ քեզ մի չին՝ ինձ մի մ'էղաւ պիտի աւելանայ:

—Կորի, կորի, չարածճի, շուրս կորի, քունս փանում է, հեղնական հրաման արձակեցի ես, պարոնի էլ գնալու ժամանակն է, առաջարկած պայմանդ երկուսիդ համար նպաստուոր է ու պարոնը չի շանդաշիլ կատարելու:

—Վայ, ես քո գլխին մեռնիմ, իմ փէր ու փրական աղւն, երկրպագութիւն փռեց ծառաս ու շուրս գնաց:

—Սղաներ, ներս եկաւ քրդի էլքաշին, իրիկնահացը պատրաստ է, խնդրենք՝ համեցէք մեր հացի պոռնեղը կորեցէք:

—Ես յողնածուլութիւնս պատճառ բերելով՝ հրաժարուեցայ, իսկ պահակապետն ինձ բարեւ փնայ ասաց ու գնաց:

—Շնոր լաւ հասկացար, աղայ, անկողինս պատրաստելով՝ խօսեց Միքայէլս, ինչ Յունօ, ինչ կռիւ փալ, շիմոցի սարի քարափներից յետ փռուող ձէնն է եղել, որի անունն ես կեանքումս լսած չէի ու հրամանացիցդ էս գիշեր սովորեցի: Շնոր լաւ անուն է՝ արջի ձագ էր, կարծեմ. շնորթ որ արջի ձագ, մարդ ինչ որ ձէն է փալիս, քարափներն էլ արջի պէս գողալով՝ ասած խօսքիդ վերջի կէս կտորը քեզ յետ ես շարձնում:

—Արջի ձագ է, չիմար, արժապանա՞ է ուղղեցի ես:

—Երկունն էլ մէկ է, արջի ձագ, թէկուզ շան ձագ, էնքան

լինի՝ իմ դօշիս վրայ մի մէնալ կախուի։ Համա, աղանջ ջան, շափ
յետ եկած, փորձուածն է երևում էդ սուլթանը, շեռ մի գիւլլի
մանգալի էսփեղից հեռացած չէր, որ հարիւր կրակ միասին տրա-
քացրեց. ի՞նչ է՝ թէ քեզ լսացնի ու վկայ բռնի, որ ինքը Յունօյի
խմբի հետ կռուել է։

—Շատ լաւ, շատ լաւ, հանգիստ թող ինձ ու ճրագը փչիր,
ինքդ էլ քնիր, առաւօտը շուգ պիտի ճանապարհ ընկնենք։

Մառաս լռեց, իսկ ես աչքերս փակեցի։

Ի՛շ.

Շուտ էր գնացել արդեօք սահակասիտը, թէ քրդի էլքաշու
վրանումն էր գիշերել, եւ ամենեւին շիպաւորութիւն չունէի մրաճ-
մունքի առարկայ շինելու։

Ես մտադիր էի վաշ առաւօտուց քրդի էլքաշուց առաջնորդ
սահանջել եւ ճանապարհ ընկնել, բայց այդ վաղը շատ շուտ հասաւ։

Ինձ զարթնացնողը մեր աշխարհի քաղցրութիւններով հիա-
ցած, գարնան հոտն առնելուն պէս՝ տաք երկիրները թողած, հա-
զարաւոր ասպարէզներ անցնող ու շէպի մեզ շտապող թռչնիկներն
էին, որոնք շեռ մութը գետինը չըկոխած, արեգակի մայր մղնե-
լու համար տխրում են ու իրանց բներումը կուչ գալի։ Իսկ առա-
ւօտները՝ արշալոյսը շեռ չըծագած՝ զարթնում են, կուրծքերը
հովին են բռնում, միմեանց բարի լոյս մաշթում ու ստեղծող
արարչին անոյշ շալլալիկներով գոհութիւն պալիս։

Այն ի՞նչ սրտագրաւ համեմդ էր, որ հնչում էր լեռան կապա-
րին հազար փետակ թռչնիկների փոքրիկ կոկորճներից։ Ճգնորոց,
կիկլոց, ծւծւոց, սւսւոց, շշշոց այնպէս ներշնչանալօրէն միացել
էին իրար հետ, որ լսող ու չգագողը կամ մեռած պիտի լինէր
եւ կամ զգայականութիւնից զրկուած։

Քունն էլ թռաւ գլխիցս, յոգնածութիւնս էլ մոռացայ ու լսո-
շութիւնս լարեցի։

Ամէն մի քարի, իւրաքանչիւր հողակոյտի, մէն մի թփիկի
վրայ՝ պարզ երկնականմարից ցոլացած մեծ ու մանր ասպղիւրի աղօտ
լուսի շնորհիւ՝ փոքրիկ սև սև բիծեր էին նշմարւում։

Այդ սևին տուող կէտերն էին մարդուն երաժշտութեան ար-

ուեստն ուսուցանողները. նոքա էին երգիչ մանրիկ թևաւորները, որոնց գրչի ծայրի չափ կրուցների հետ ոչ մի նուագարանի լար, ոչ մի շաշնամուրի ստեղծնք չեն կարողացել ցայտօր և չլպիտի կարողսնան ապագայում մրցել. թէկուզ՝ կարտաբլուծեան գագաթ-նակէտին հասնի երաժշտութիւնը մարդկային հանձարի շնորհիւ:

Ահա այդ քաղցրանուագ երաժիշտներն են, որոնք «Արև» աստուծոյ լուսին սիրահար՝ ճիշդ կէս դիշերից քնահարամ են լինում, առանց նուագարանի «Արևի» գովասանքը նուագում:

Ենթադրութիւն չեմ անում, կէս դիշերի վրայ էին ժամացոյցի սլաքները, երբ կենդանական բնութեան ծոցում կեանքն սկսեց եռալ արեգակի գալուստն աւելտոյ, արևի կարապետ թռչնիկների մէջ:

Բայց մի՞թէ միայն թռչնիկներն են արևի կենսատու զօրութեանը կարօտ, նրա գալարին անհամբեր սպասողները. բոյսեր կան, որոնք արեամբից սալարում, թառամում են, իսկ կէս դիշերից զուարթանում, փթթում, կազդուրւում և երեսներն արևելք շարժ-րած՝ ապաստում են, թէ Բրք պիտի վաչելն արևի կեանք տուող ցօղը:

Մոլեռանդութեան հետեանք չէ, ուրեմն, որոշ կրօնների համար շէպի արևելք աշօթելը. խաւարասէրը միայն իւր Աստուծուն փառաբանելու ժամանակ՝ երես կը թեքի իւր կեանքն և զոյութիւնը պահպանող-կեանքի ալբիւր արեգակից:

Այնքան յափշտակուած էի թռչնիկների ծլւլոցից, որ մինչև աչքիս առջևը չըցցուեցին ու բարև չըսուին, չըլսեցի երեք ձիւռորնաձայները:

Սարսափեցի և քնարեղից վեր թռչողի պէս՝ գլուխս վեր բարձրացրի ծանօթ ձայներից:

Մօտաւորապէս երեք ժամն էր:

Հեծեալներից երկուսն այնքան էլ ինձ չէին վախացնիլ. նրանցից մինը քուրդ-Հասուն էր, որ անտարակոյս, իր փնեցոնց համար պիտի վերադառնար, ու հետը չեւ բերէր Յունօջի կնոջն ու երեսներին: Այդպէս իսկ էր. Հասուն մեծ երեխային ունէր առջև նստացրած, իսկ Գիւլօն փոքրիկին էր զրկին կատիլ:

Ինձ շփոթողն երրորդ ու ինձ համար միանգամայն անսպասելի անձնաւորութիւնն էր, որ իւր ուղեկիցներից յառաջեց ու ջանկար-ծակի մթութեան մէջ շիմացս ցցուեց:

Նախապաշարմունքների ենթակայ մէկը, որքան և սրտոտ լինէր, չէր կարող չըպագիւրացնել այն ըոպէին պառաւների երեւակայութեան ծնունդ. ալքերից մէկին, որի գլուխը երկնքին է հասնում, ուրբերը գետնի վրայ են հաստատուած:

Տարբերութիւնն այսքան կը լինէր, որ շիմացս կանգնող հսկայ ալքը հետեւակ չէր, իւր պէս մի հսկայ ալք-ձի էր հեծած:

Հէնց այս ալքաչափ մարշն էր, որի կոկորդից շուրս եկած յոսորդաձայն բարեւը թմբկահարի կոմբաջի նման շոշաւացրեց ականջիս նուրբ թմբուկը:

— Բարի լոյս քեզ, աշնայ ջան:

— Աստու բարին, կմկմացի ես և մթութեան մէջ պեսուրութիւնս ուղղեցի նախածանօթիս երեսին:

Քունդ չի՞ տարել, աշնայ, ընչի՞ ես էսքան վաղ զարթնել. իսկ մեր Հասօ քիւրվան (կնքահայր)¹ մոլորուել էր, թէ քեզ ինչպէս պիտի նեղութիւն տայ ու քնահարամ անի, վերկացնի:

— Այն, Պօղոս, վաղուց եմ զարթնել, զարմացքս և սարսափս զսպելով՝ պատասխան տուի ինձ հարց առաջարկողին. հաղար քուն ու հանգիստ չեմ փոխիլ անմեղ թռչնիկների լուսադէմի երգերին, լսիր, տես՝ ինչպէս են Աստուծուն փառաբանում:

— Մեռնիմ Աստուծուն...

— Բայց այդ թողնենք, Պօղոս, շու ինձ ասա, այս ժամանակին՝ որ պեղից և ինչպէս. շու էլ հօ ինձ պէս ճանապարհից չես մոլորուել. ինչ գործ ունիս կէս գիշերին քրդերի օքաններումը:

Պօղոսն անտարակոյս, նախօրօք էր պապրասպել իր տալիք պատասխանը, բայց նա ինձանից աւելի շփոթուեց և շու բերանը չըբացած՝ քանի մի անգամ հաղաց ու կակազեց:

Մենք օգուտ քաղենք մեզ յանկարծակի շփոթեցնողի շփոթմունքից և ծանօթանանք մեր նոր բարեկամի հետ, որը՝ շուսը լաւ չըսերտած, մտամոլոր աշակերտի նման՝ չիշողութեան թելը կորցրել էր և հազի օգնութեամբ էր կամենում մոռացածը մտաբերել:

Գ. գիւղացի ջանաւար (գազան) մականուանեալ Պօղոսն այս երկ-

¹ Քիրվա կոչուով են լարդանք արտաւաչում իրարու հաւերն ու քրդերը:

րորդ անգամն էր, որ ինձ ապշեցնում և սարսեցնում էր: Նրա յաղթանդամ կազմ ու կապսը, հսկայական հասակը, խոշոր շիմագծերը, ցախաւելի չորիկների հաստութեամբ, ցից ցից բարձրացած թանձր յօքերը, բաշկշի նման իրար մէջ խճճուած և դուցէ բոսած օրից ածելու և սանտրի երես չը տեսած մօրուքը, խոր խոզած ընչացքները, աչքափոսերից ընկուզի մեծութեամբ շուրս սրծած բքերը, հովուական բեւառգլուխ ցփի բոլորշիութեամբ բռնաչափ քիթն ում չէին սարսեցնիլ: Պռօշներ ունէր, որ հաստութեամբ ուղտի շրթունքներից չէին վախենալ. վերին պռօշը բոլորակացած, յետ էր շրջուած և, համարեան, փակում էր մկան ծակի լացնութեամբ ռնդունքները: Այդ էր պարճառը, որ ստիպուած էր մի թզից քիչ վախեցող, օձի յատուկ անջնակ¹ (առանց ժաււէնի) բերանը, խօսելուս կուչ ածել: Աստուած փրկի ու ազատի, երբ Պօշոսի բարկութիւնը բռնում էր, վերինն ուռչում, բոլորականում, յետ էր շրջւում և, փոքր էր մնում, որ ծածկի եզան աչքերից մեծ մեծ քթածակիրը: Կարծում հիմա հասկանալի է, թէ ինչո՞ւ նա ընչացքները խոր խուզում էր: Այդ անում էր, որպէս զի խոզի բաշի յատկութեամբ մազերը չը ծակուին քիթը: Իսկ ներքին պռօշն երկու մարտչափ կախում էր շէպի ցած և շիպում վերեւ ծռուած կզակին: Սօժ, այդ ժամանակ շփուար էր Պօշոսի առջևը կանգնել, կամ հակառակել, մարդ եթէ երկիւղ էլ չանէր նրա կէս փթաչափ, հինգ տարեկան երեխայի գլխի մեծութեամբ բռունցքից, չէր կարող գոնէ չը մտածել, թէ ջանաւար Պօշոսը կարող էր իրան ողջ ողջ կուլ տալ ու իր ռումբի—փորումը մարսել ու հալցնել: Տեսչէնի ձայնն էլ շատ քիչ էր զանազանում արջի կոկորդային կերկեր մրթմրթոցից:

Ահա հէնց այդ ձայնն էր, որ Պօշոսին առաջին անգամ տեսած օրս խիստ փալաւորութիւն էր թողել իմ մէջ ու այսօր՝ դիշերուան մթութեան մէջ՝ սարսափս բերեց:

¹ Գեղջուկի հասկացողութեամբ՝ մարդու և անասնոց բերանի շուրջը շրթունքների ներսից ջնակով պատած է (երիզապատ) և միայն օձի բերանն է, որ երկզ չունի, ուստի և կարող է ազատ կլանել բերանի տրամագծից աւելի մեծ կենդանիներ:

— Ասա տեսնենք, ա՛յ Պօղոս, ախար շուռ ո՛վ, այս տեղ ո՞վ. ես չոյս ունէի, թէ վաղը պիտի գամ և քեզ յանձնաժառանգութիւն զլուծաքաշելուս գտնեմ, իսկ շուռ կէս գիշերներին սարերն ես չափում, կրկնեցի տուած հարցս:

— Բա սա՛յից (ի շնորհս քո), աշա՛յ, թէ քո հրամանն եմ կապարել վերջացրել, թէ կարողանում եմ մեր քնասիրութիւնի հետ կենալ (տնային հոգսերը քաշել): Մի քանի զլուխ փաւար ու ոչխար ունինք սարումը, գնացել էի ակը փալու (տեսնել): Յետ էի շառնում գիւղը, Յունոն պատահեց, խնդրեց, որ մեր քիւրմալ Հասօյի հետ իր ընտանիքը տեղ հասցնեմ, Հասօյի տնեցոնցը յանձնեմ ու էնպէս գնամ: Հասօյիցն էլ տեղակացաց, որ հրամանքդ էս գիշեր իրան հիւր ես, միտք արի, որ էս լաւ եղաւ. մեր աշին մի ծառայութիւն էլ հիմի կանեմ, կը փանիմ տեղ կը հասցնեմ, ի հարկէ, թէ որ մեծութիւնիդ կամքը կը ցանկանայ, ձայնը ցածացրեց Պօղոսը:

— Շնորհակալ եմ, շատ ուրախ եմ, բայց մի՞ թէ շուռ Յունոյի հետ ծանօթութիւն ունիս:

— Դէ ո՞նց չունենամ, աշա՛յ ջան, մի հող ու ջրի մարդ ենք, հարեւաններ ենք, աշուհացկեր ենք, կը լինի՞, որ հարկաւոր ժամանակն իրար պէտք չը գանք. Յունոն մեզ բացի լաւութիւնից ոչ մի փնաս չի տուել, Աստուած քեզ էլ ողջ պահի, մեր Յունոյի էլ կռանը կենայ. կարծեմ քեզ էլ յայտնի է, որ Յունոն ափսոս մարդ է. Ա. գիւղացի Նադոն ինձ սլաւմեց, որ ինքը Յունոյի գովքն արել է քեզ:

— Այո՛, այո՛:

— Երևում է Աստուծոյ աչքը քաղցր է եղել, աշա՛յ ջան, Յունոյի վրայ, որ շուռ ճամպանդոր ես ընկել, Հասօյին հիւր ես եկել, թէ չէ մեր Յունոյի ընտանու զլուխն էս գիշեր չափարները կը ցաւացնէին: Մեր քոյր Գիւլօն հիմի եկել է, որ հրամանացդ ոտքը համբուրի, քեզ շնորհակալութիւն անի, որ իրան ու երեսնէքանցը հայրութիւն ես արել, փէշիդ փակն ես տուել: Յունոն ինձ յարուկ խնդրեց, որ իր կողմից ձեռքերդ համբուրեմ ու շնորհակալութիւն անեմ:

Վաղուց արդէն Գուլօն ու Հասօյ, իջել էին ձիերից և կանգնած լսում էին իմ ու Պօղոսի խօսակցութիւնը:

Պօղոսի վերջին խօսքի հետ՝ Գիւլօն առաւ իր զաւակներին, մօտեցաւ ինձ, չոքեց առաջիս և ուզում էր ոտքս համբուրել:

Ես վեր թռայ տեղիցս, Գիւլօի կանիցը բարձրացրի և ձեռքը թոթուեցի:

— Յունօն ասում էր, խօսեց Պօղոսը, թէ մեր աշխարհ արդարաւոր իմ անմեղ բալուկներս էս օր իր բաշխածն են. Գիւլօն, քո շնորհքովն է, որ պարտիւն ու նամուսը տեղը՝ պարզերես առջևդ չոքել է ու ոտքդ համբուրում:

— Երանի ինձ, միքումս ծաղրեցի ինքս ինձ, աւազակի հետ եմ բարեկամութիւն անում: Հիմի տեղը չէր, որ պահակապետն ինձ ձերբակալէր:

— Դէհ, Հասօ քիրւան, ինձանից բաժանուեց ու շարժաւ քլորդին Պօղոսը, փարմեր քոյր Գիւլօյին քո ընտանիքին յանձնի ու շտապիր մեր աղայի ձիանքը քաշելու. քանի լոյսը չի բացուել՝ քեզանից հեռանանք ու հովով ճանապարհ կտրենք:

— Մութէլ քիրւան, Մութէլ քիրւան, վրանի ետին անցաւ ու ձայն տուեց Հասօն ծառայիս, ել, մի՛ ուշանալ, աղէն հրամանք արաւ, որ ձիանքը քաշես, ես էլ հիմի գալիս եմ:

— Ինձ կը ներես, աղայ, Հասօն ուզում էր էսօր քեզ համար գառը մորթել ու պարիւ տալ, բայց Յունօն ինձ խնդրեց, որ քեզ շուտ փանեմ ճանապարհ շնեմ. Յունօն կարծում է, որ եթէ դու չափարների սուլթանիցն աւելի շուտ փանուիս ռիւանի մեծաւորների հետ, իր ընտանուն միւս անգամ անհանգիստ չեն անիլ: Քո յուսովն էր, որ Յունօն շտապեց իր տնեցուն հսկէս շուտ յետ շրկել Հասօյի տունը:

Բայց դուք միթէ գիտէիք չափարների գնալը, կամ երկիւղ չունիք, թէ միւս անգամ կարող են վերադառնալ, որ վստահացել էք այսպէս շուտ յետ բերել Գիւլօյին:

— Հան, հան, հան... հեգնական ծիծաղ արձակեց Պօղոսը, Յունօն կորած, կամ եթէ սարի քամակին քուն մտած հո չի եղել. նա ինքն իր ձիաւորներով իր ընտանին կոշքին, իր երեխէքը գլորկին՝ հանգիստ ու ապահով խնդում էր չափարների իւզը աշու միամտութեան վրայ, որ աշխարհքը հետն առած՝ գուր պատրոններ (հրացանի փամփուշտ) էր փչացնում, ձորակի էս երեսից՝ մէկէլ

Թմբի ցից քարափնների հետ էր կոխ փալիս. րո՞, գլխիդ մեռնեմ, աղւն, հապած էր մարդիկն իրանց օրումը դաշտ չէն յուրս եկած, լեռ ու քարափներ չէն տեսած, գառնարած երեխէն էլ կը ջոկի մարդի ձայնը քարափի ձայնից: Կանգնել են ձորակի էս երեսին ու գոռում: Լեռ քարերն էլ մէկէլ Թմբից են ճւռում: Չարկեցէք, հարաջ է փալիս իւզբաշին: Չարկեցէք, ձէն է վեր ելնում քարերի միջից. հրացաններն իրար ետեից փրաքփրաքում են, իրանց արձակած Թուանքների ձայնը ձորի միւս երեսից իրանց է դառնում. անաճակերի լեշիները ջուր է կարւում, գլուխները կորցնում են, շունը փրոջը չի ճանաչում, ձիանոնց երեսները շրջում են դէպի քրդերի օթաները. քիչ մնաց՝ ուրնադակ էին փալիս իրանց ետեից օգնութիւն եկող քրդերին:

— Էդ ինչպէս քամի անող ստախօսն էր իւզբաշին, աղւն, շարունակեց Պօղոսը, ինչ քօռ աշուղի նաղլեր հնարեց առաջիդ, ընչէր էր պատմում քեզ. սաքի Թէ Յունօյի մարդկանցից երեքին սպանել են. Ադրի հրամանքիդ ծառան, լսեցիր՝ ինչպէս իւզբաշու գլուխը կլէկեց, խօսք առաւ, որ իր համար էլ մեղալ բերել փայ. համա դու էլ լաւ սառը սառը ուսուցրիր խելօք Դաւթին, պարզ ասացիր, որ ինքը ձորի քարափների հետ է կոխ փռել. բայց նա էլի աներեսի պէս՝ հրամանքիդ ձանձրացնում էր ու լիզու. հանած աշաչում, որ իր համար վկայութիւն փաս:

— Այդ բաները դու ճիշդից գիտես, Պօղոս, զարմացմամբ հարցրի ես:

— Դու, գլխիդ շուրթան, Յունօյին հապ աչքով մի մտիկ փալ. նա որ խելք չունենար, ինչպէս կարող էր երեսուն աժդահա փշամարդիկ իր բռի մէջ հուպ փռած պահել: Չափարների քամակից ինձ ու Հասօյին հրամայեց կրնկակոխ հասնել, ամէն բան փնտրել, իմանալ ու իրան համբաւ փանել: Ես ու Հասօն վրանիդ միւս երեսին կանգնած՝ լսում էինք քո և իւզբաշու խօսքերը. ծառադ մեր կողքից վեր Թուա ու փուն ընկաւ իր համար մեղալ ինդրելու, քարի էս երեսին Մութէլ էր պառկած, քարի մէկէլ կողմը մենք էինք կապուի պէս մկան ետեից մարաշ մտել: Հէնց որ չափարների սուլթանն իր ձիաւորներով երեսը շրջեց նոր-Բայազիդու կողմը, մենք էլ շտապեցինք Յունօյին լուրը հասցնել ու, ինչպէս փեսնում

ես, նրա հրամանով՝ իր ընտանուն ու երեխանցը հրամանոցդ ոտքերն ենք քցում: Դձու գիտես, աշակ, Յունոն ասում էր՝ վերև Աստուած՝ ներքև Դձու, իմ ձեռն է քո փէշը, իմ ընտանիքի պատիւը ոտնապակ մի զցիլ տալ, թող ինձ բռնեն կախեն, միայն թէ անեցուս ու քորփէքանցս անհանդիստ չանեն: Շտապիր, աշակ, գնանք, Յունոն իմ վրայ պարտք է Դրել, որ թռչունի թևով բեզ էսօր Նոր-Բայազիդ հասցնեմ, որ Դու չափարների սուլթանի գլխին խելք Դնես՝ չըգնայ իր մեծաւորների մօտ աւել պակաս խօսքեր ցրիւ տայ բերանից Գիւլօյի վրայ:

—Մենք այսօր քեզ հետ ձեր գիւլումը պաշտօն ունինք կատարելու, պատասխանեցի Պօղոսին, Հասօյին կուղարկենք Յունօյին միամտացնի: Ես յոյս ունիմ, որ իշխանութեան առաջին իմ միջնորդութիւնս մի որ և է պահակապետի ամենալավ շտապարկասուլթաններից աւելի արժէք կունենայ. այսօր չըլինի՝ վաղը, կամ երէք օրից յետոյ լինի, միւսնոյն է: Բայց Դու իմ մի հարցին ճիշդ պատասխան տուր:

—Աչքիս ու գլխիս վրայ. գիտեցածս եթէ թագցնեմ, հրամանոցդ մօտ սևերես մնամ:

—Շտապ լաւ. լսիր. Դու Ա. գիւլացի Նադօյին անձամբ ճանաչում ես:

—Է՞ն Նադօյին, որ մեծութիւնիդ հետ մի քանի օր ճամփորդ է եղել:

—Այո, հէնց նա է:

—Հինդ մարիս պէս եմ ճանաչում. հէնց էս իրիկուն Հասօյի հետ մօտիցս բաժանուեց ու եկաւ Գիւլօյին բերեց մեզ մօտ, էս բոպէիս էլ հետը խօսեցի ու ձիս նստայ, Հասօյի հետ Յունօյի ընտանիքն էստեղ բերի:

—Նադօն Յունօյին նման է:

—Ոնց որ մի խնձոր միջից կէս արած:

—Եւ հիմի ուր է:

—Որտեղ Յունօն է, Նադօն էլ հետն է. Նադօն շտապ էր ցաւում, որ Գիւլօյի ետեւից եկած ժամանակ՝ քեզ չի կարողացել տեսնել. հիմի էլ իմ տեղակ ինքը պիտի գար քեզ ճանապարհ Դնելու, բայց համբաւ եկաւ, թէ սարումը մարդիկ են իր տաւարի քամա-

կից պարտում, Յունօյի խումբն առաւ, շտապեց նրանց հաւարին:

—Հը՛մմմ... ծոր րուի ես և իրաւամբ մէջս լըջօրէն վշտացայ Թ. վարդապետից և Ա. գիւղի իրիցից՝ ինձ խաբելու մասին. մրաժում էի՝ ի՞նչ կարիք կար Նաշօյի գոյութիւնն ուրանալու: Ամենայն կողմով հաստատուում է, որ Նաշօն Յունօն չէ:

Մեր ձիանքն արդէն պարտաստ մեզ էին սպասում, արուսեակը շեռ քաւական միջոց ունէր իւր փառահեղութեամբն երկնքի գիշերային լուսաւորների նախանձը շարժելու և վերջին քառորդի վերջին օրերին հասած, մաշուած ու հիւծուած, եղջիւրները հագիւ երևեցնող լուսնի հետ մրցելու, որ մենք հեծանք մեր զրաստներն և լեռն ի վայր ցած իջանք:

Կիսաճանապարհից Հասօյին շնորհակալիքս յայտնեցի և յուսադրելով ուղարկեցի Յունօյի մօտ: Թէ ի՞նչ կարող էի յաջողեցնել Յունօյի ընտանեաց ապահովութեան մասին, ապագայի գործ էր, բայց ներքինս թելադրում էր յաջող ելք:

(Շարունակելի)

*
* *

ԱԻՅՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Բանդիս վրայ, սրտիս վրայ
Արծիւ երեք փաթ տւաւ.
Մենձ թւերը թափ-ծափ տալով,
Կանչեց բարձր ու թռաւ...
— Ձան Արազը հարհանդ-մարմանդ
Արփուտների հետ կուգայ.
Ալագեազը, ջանին մեռնիմ,
Ջուռ ու զարբաբ, ալալայ:
Երթամ, զարկեմ կուրծքս Արազին,
Անո՛ւշ, անո՛ւշ ջուր խմեմ.
Ալագեազի ուսին նստեմ—
Ազնւոր, հպնորս երկս ասեմ...:

1897. մարտ, Երևան.

Փաթ տւաւ==պտոյտ տւեց. հարհանդ==լուռ, հանգիստ. մարմանդ==
մեղմ. ալալայ==վառ կարմիր:

ԱՆՑԵԱԼԻՑ ՄԻ ԲԵԿՈՐ

ԱՐՇԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

I

Չեզնից ռժ է գիշերել Դուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի տակ: Ասում են՝ բանաստեղծութիւնը Դափարկաբանութիւն է. ճշմարիտ, աչդպէս ասողները իսկի չեն գիշերել Դուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի տակ. եթէ նրանք գիշերած լինէին Դուրսը, ջինջ օդի, կենսաբեր զեփիւռի, շարան-շարան Դողդոջիւն աստղերի, նազ ու թազով սահող լուսնի, անմոռնչ սար ու ձորերի, քար ու քղերի, բաշ ու բաշլաշի Դիւթանքի տակ, այն ժամանակ կ'հասկանային, թէ ինչ է բանաստեղծութիւնը: Ս', յուլիսեան գիշեր, խնկիլի, անճառելի գիշեր. հեռու գիւղից հնչող աքաղաղի ձայնն անգամ թովչանք է ազդում, ճղուռի ճիւ-ծիւը, զորտի կռուոցն անգամ խորհրդաւորութիւն են տալիս յուլիսեան գիշերին: Պառկելիս փափուկ անկողնիդ մէջ, քունդ չէ տանում, բնութիւնն օրօրում է քեզ, բայց հանդարտ, մեղմիկ, քեզ չէ յոգնեցնում, չէ շշմեցնում: Կէսգիշեր է. լուռ, ձէն ու ձուն չ'կայ, կարծես հրամայած է ամենքին սուս կենալ, կարծես ամեն ինչ մի բանի է սպասում... Յանկարծ հեռւից՝ հէհէհէ, հէհէհէ, հէյ... լըսւում է օդում մի զիւ ու ձգւող հնչիւն, արձագանք տալիս լեռ ու խորերում, հեռանում, անցնում, կորչում, մեռնում... աչդ տպեպանի, կամ անխոնջ ջրաղացպանի ձայնն է, նա կանչում է իր ընկերոջը: Կամ գիշերային աչդ խորհրդաւոր լուութեան ժամին յանկարծ հասնում են ականջիդ տխուր, մեղամաշճոտ բայաթիի թափառող խաղերը, շոյում են լսելիքդ, սիրտդ ճմլւում է, հողիդ

լայնանում, մեծանում, թւում է թէ երկնքիցն է գալիս այդ եղեմական գեղգեղանքը. լցւում ես մի քաղցր, շուրեկան ահով, կուչ գալով՝ գլուխդ ծածկում ես վերմակիդ փակ, ցօշն իջնում է վրադ... Ե՛յ, ձեզնից ով է գիշերել շուրսը, ջինջ օդի, յուրիսեան պարզ երկնքի փակ... Երկնք երկնք քունս էր փանում:

Թեւ յենած բարձիս, հայեացքս յառած հեռուն լուսնին փակ սևին փուռ մի կէտի, թաղւել էի երազանքի մէջ: Ու Սիրանոյշն էր իհարկէ աչքերիս շէմը, իր ձայն ու կապակները հնչում էին շուրականջիս. իսկ կրծքիս փակ մի երջանիկ ու անշուք թեթեւութիւն...

Ել ուրիշ ոչինչ չեմ յիշում: Երբ յանկարծ շարժւեցի ու աչքերս բացի՝ առաւօտ էր. արեածագ:

Վաղ էր շուր. արագ հագնւեցի ու սկսայ անհամբեր անցուշարձ անել մեր այգում, կանաչի միջով, չմոռացայ անօթի փորով քիչ գելաս ու հոն ուրիշ, մինչև որ մեր գործարանում բանող աշխիկները հաւաքւեցին, գործարանը կենդանացաւ:

Երևի այս աշմուկը զարթեցրած կ'լինի նրանց, գնամ, մտածեցի ես և քայլերս ուղղեցի գործարանի կողմը: Ճիշտ որ. մեր հիւրերը ու ծնողներս արդէն ժողովւել էին այգու մի անկիւնը. ծառերի փակ, սեղանի վրայ բազմած էր ինքնատեղը, և նրա կողքին շարւել էին կաթի ու սերի ամանները:

—Մ՛յ, պարոն Սրշաւիրը, բացականչեց Սիրանոյշը ձեռը մեկնելով շէպի ինձ:

—Սրշաւիր, ուր էիր կորել, կարծում էինք զայն է փարել քեզ, ժպտալով կապակեց Սոկրատը՝ օրիորդի եղբայրը:

Ես թեթեւ բարեկեցի բոլորին և նստեցի:

—Գիտէ՞ք ինչ կայ, ասաց օրիորդը, աւելի լաւ չի՞ լինիլ, եթէ դնանք գետի ափին թէյ խմենք. այստեղից մի քանի քայլ է ընդամէնը:

—Այո՛, այո՛, շատ լաւ կ'լինի, ձայն փռի ես:

—Ձէ, ինչ կարիք կայ, թէյից յետոյ մարդ կ'ուշարկենք գիւղը ձկնորսի ետեւից, ուռկան վերցնի դուց, և կ'գնանք գետը ձուկ որսալու, առարկեց Սիրանոյշի հայրը:

Ես անմիջապէս շիմեցի գործարանը, ծառաներից մէկին ու-

շարկեցի ձկնորս Խաչատրի ետեից. և երբ եկաւ, բոլորս միասին գնացինք գետի ափը:

Մինչ մեր հայրերը առևտրի մասին էին խօսում, թէ ինչպէս էր բոժոժի գինը այդ տարին, մետաքսէ թելի փութը քանիսով է գնում Մարտէջլ, կամ այս ինչ վաճառականն ինչպէս սնանկացաւ մետաքսագործութիւնից, այն ինչն ինչպէս հարստացաւ նոյն մետաքսագործութեամբ, ձկնորս Խաչատրուրը հանեց տրեխներն ու գուլպաները, վարտիկը վեր ծալեց, ափամներով կծեց ուռկանի մի ծայրը, միւս ծայրը ձախ ձեռն առաւ, թողիւ աջ ձեռը, ուռկանը յետ տարաւ և ապա ափամներից ու ձախ ձեռքից բաց թողնելով շարկեց գետի մէջ, աջ ձեռքում պահած ունենալով թուրը, յետոյ հանդարտութեամբ ուռկանը քաշեց, մինչև կապարի ծանր գնդակները յատակով քարշ գալով՝ կիտւեցին իրար վրայ, և ապա ուռկանի ճոխից բռնելով՝ արագութեամբ դուրս քաշեց ցամաք և բաց արաւ օրիորդի «բախրին»: Հինգ հար մեծ-մեծ զիրաւ ձկներ թըրպորտւով ընկան գետին:

Օրիորդը հրճեց իր այդ բախրից, և մենք շարունակեցինք գետի հունով վերև բարձրանալ. նա չէր հեռանում ինձանից, անչափ խօսում էինք, անչափ ծիծաղում: Օրիորդը շառագունել էր շոգից և բաւականութիւնից, իսկ ես պատրաստ էի փոքրիկ երեխայի նման վազելու, ցատկելու, գրկելու, երեխայի պէս չարութիւն անելու, երեխայի պէս լալու, ծիծաղելու: Իզուր չէի ենթադրել ախր, որ Սիրանոյշը բանաստեղծականը սիրելիս լինելով, պէտք է որ ինձ էլ սիրի և զգում էի, որ սիրում էր:

Ու գնում էինք միասին թթենիների տակով աշխուժ ու երջանիկ: Գնում էինք...

—Հէհէ, յանկարծ լսեցինք ծառայի ձայնը և յետ նայելով տեսանք, որ նա ձկան բեռը ցած է դրել, զլխարկը ձախ ձեռն առել և մեզ է կանչում նրանով: Մենք յետ դարձանք: Մօտ երկու ժամուայ ընթացքում Խաչատրուրը երկու փութից աւելի ձուկ էր բռնել մի վերտրից ոչ աւել տարածութեան վրայ և մտադիր էր էլ առաջ գնալու, եթէ միայն ծառան չգանգատէր բռնորութիւնից:

—Բաւական է էլի, այնքան ձուկ մի շաբաթ չես ուտիլ, բա իմ մէջքն էլ խեղճ չէ, կոտորուում է:

Մենք շարձանք մեր ծնողների մօտ: Մասաններից մէկը մորթել էր գառը, ծառի բունից կախ արել ու մաշկում էր: Միւսը խարոյկներ էր կազմել, երրորդ տեղը խորովածի համար քարեր էին շարսում: Մեր ծնողները խօսում էին, երկու ուղամարդ մի տեղ, երկու կին մի տեղ, երեսաները թամբի էին փալիս, մէկը միւսին խփում էր ու փախչում, իսկ հարւած ստացողը վազում էր յետեւից, և եթէ բռնում էր մինչև մի ուրիշից հարւած ստանալը, բռնւողն էր թամբ շառնում: Իսկ վճիռ գեղին էլ մէն-մենակ վշշում էր հն, վշշում՝ արևի արծաթէ աչք ծակող ստակն իր մէջ առած...

Սարանոյշն ու քոյրս՝ Թե. Թե. ի շուրով առանձնացան իրանց խօսք ու գրոյցով: Մնում էր, որ ես բաւականանայի Սոկրատով. չէ որ նա էլ իմ ընկերն էր. ինչ արած:

Սոկրատն սկսեց պատմել, թէ ինչպէս ունի շարունակ աւարտելուց յետոյ ուզում էր բարձրագոյն շարունակ մտնել, բայց հիւանդացաւ, առողջանալուց յետոյ այլ ևս ուշ էր, ուստի սկսեց հօրն օգնել, մինչև որ կ'գայ նոր ուսանողական տարին, կ'գնաց բախար լիորձելու. մայրաքաղաքների ճեմարաններում. բայց հասաւ հետևեալ ուսանողական տարին, և նա չ'գնաց, վճռեց բաւականանալ ունեցած պաշարով և հօրն օգնել, մանաւանդ որ հիւանդոտ էր: Նա ուսումնասիրում էր շերամաստանութիւնը և մրաշիւր էր այնպէս տնել, որ իրանց դորձարանների բոժոժն ինքը մատակարարէ. արդէն փորձեր էր արել, և աջողւում էր:

Նս էլ պատմեցի ճեմարանական կեանքից, ու դիւշում անցկացրած օրերիս մասին:

Նս Պետերբուրգի լեռնային ճեմարանի առաջին կուրսից փոխադրւել էի երկրորդ, և եկել էի ամառը ծնողացս մօտ հանգրտանալու:

Նս իսկ որ հանգստանում էի:

Մինչ այս մինչ այն, ձուկը պատրաստ էր, ծառերի շաքում փռած սփռոցի շուրջը շարւեցինք այն կարգով, ինչ կարգով որ քաժանւած խօսում էինք—հայրերս իրար մօտ, մայրերն իրար կողքի, երեսաները նրանց երկու կողմից, քոյրս ու Սիրանոյշն իրար

մօտ, ես ու Սոկրատն էլ մի տեղ: Բայց և այնպէս Սիրանոյշը միւս կողմն էր. թէև սկզբից ես մինչև անգամ մի ծանրութիւն զգացի այդ հանգամանքից, թէև ինձ թւում էր, թէ բոլորը մեզ են նայում, բոլորն էլ գիտեն մեր գաղտնիքը, բայց վերջն անցաւ ամեն բան, և սկսեցինք հանաքներ անել, անմեղ, պարզ հանաքներ: Ճաշը շատ վառ էր անցնում, խօսակցութիւնը շարունակուում էր: Գինին էլ մի կողմից էր գլուխներս փաքացնում. բայց քանի խմում էինք, այնքան ինձ զսպում էի, աւելի էի մտածում, որ մի անխոհեմ վարմունքով կամ խօսքով կարող եմ ոչնչացնել Սիրանոյշի վրայ թողած փաւորութիւնս, ուստի ինձ աւելի լուրջ էի պահում, աւելի քիչ էի խօսում. այնպէս որ ճաշը վերջանալուց ինձ հաշիւ տալով և Սիրանոյշին նայելով՝ տեսայ, որ ինձ օրինակելի եմ պահած և ստացած արդիւնքս սպասածից շատ աւելի էր. և մէջս շատ ուրախացայ:

II

Յաջորդ առաւօպը Վաղաւորի կիրակին էր, ու մենք գնալու էինք մեր մօտակայ յայտնի ուխտատեղին. արդէն Սիրանոյշենք Դրա համար էին քաղաքից եկել: Դեռ գիշերէր, ժամը երեքը, գործարանից լսում էր այն աղմուկը, որ տիրել էր գիւղում. գիւղը Դարփակում էր: Շուտով աղմուկը լսելի եղաւ գործարանի մօտով անցնող ճանապարհի վրայ: Գիւղացիք, մեծ ու փոքր, շրապում էին ուխտաշին. արեւի փայլին չենթարկւելու՝ համար էին շուտ Դուրս եկել: Այդ փոնը ամենանշանաւորն է իմ հայրենիքում, նշանաւոր է նոյն իսկ Զատիկից, Մնունդից. Այդ օրը գիւղացու միակ ուրախութեան, քէֆի օրն է, տունը լի է, հոգս չունի: Այդ օրը նրա աղօթքի օրն է. գիւղացին այդ օրն է ուխտ կնքում, այդ օրն իր ցաւերի ու հոգսերի մասին հաշիւ ուղարկում Բարձրեալին՝ սուրբի միջոցով: «Ձու հա չո՛ւ» անելով երեխաներով բեռնած էշերին, ջորիներին բզելով, ամէն մէկն աշխատում էր ինքն առաջինը հասնել սուրբին, առաջինը ծունկ խոնարհել նրա մագուռի մաշած քարերի վրայ, առաջինը լսեցնել Աստուծոյ իր աշխատանքը, քանի որ սուրբի գլուխը չի խառնւել անթիւ աղաչանքներ լսելուց:

Առաւօտեան ժամը ութին մենք էլ ուղեորւեցինք Դէպի լեռները, ուր զանաւորում էր ուխտատեղին: Չ'նսեւած մեր ուշ ճանա-

պարհակուն՝ վերջին հասնողներից չէինք, մեր երեւը մեծ ժողովուրդ թողինք:

Զեմ ուղում ձեզ ձանրացնել երկնափայ լեռների, նրանց լանջերին փռւած խնկաբոյր ծաղիկների, լեռնային կենսաբեր օդի ու ջրի նկարագրութեամբ, այդ ամենը պէտք է տեսնել միայն և ոչ թէ լսել: Հայաստանն առաջ է այդպիսի սքանչելի վայրերով, ահա թէ ինչու հրկիզեալ Պաշեստինի բնակիչները դառնալով մեր աշխարհը՝ Դրախտ որ դառնալով:

Զառիվերի ու նեղ կիրճերի միջով, ուր խռնւած է մի հոծ բազմութիւն, մարդկան մի ահագին զանգւած, դուրսների մի ծով, հազիւ էինք կարողանում ճանապարհ բանալ մեր ձիերի և մեզ համար: Տղամարդիկս իջել էինք ձիերից, և իմ ձիս կապը ծառան բռնած՝ առաջ էր տանում: Յանկարծ աղմուկն աւելի սաստկացաւ, գոռում գոչում էին այս ու այն կողմից. նայեցինք դէպի վեր. ժայռի մի ահագին բեկոր սարսափ պարածելով շուջը՝ թաւալգլոր թռչում էր վերեւից ուղիղ մեզ վրայ... Մի կողմը բարձր ժայռ էր, միւս կողմն առհելի վիհ, առաջ գնալ չէր կարելի, յետ դառնալ չէին թողնում: Ժողովուրդն աւելի և աւելի խռնեց, իրարանցումն աւելի մեծացաւ, մի գիւղացի ապուակ հասցրեց Սիրանոյշի... ձիու դնչին, ձին ծառս եղաւ, կանգնեց ետևի ոտների վրայ, Սիրանոյշը չ'կարողացաւ իրան պահել և... պիտի գլորէր անդունդի խորքը, եթէ... եթէ ես օգնութեան չ'հասնէի: Եւրեակայեցէք այն վախը, այն սարսափը, որ զգաց Սիրանոյշը. նա դեռ չէր հաւատում, թէ ազատւած է, նրան թւում էր, թէ հիմա կ'գլորւի ժայռից դէպի ցած և յետ յետ էր քաշում: Նա աւելի սարսափեց, և բոլորովին տեսաւ, որ կանգնած է անդունդի առաջ, սուր ժայռի ծայրին:

Անցաւ մի րոպէ, և նրա դէմքին վախից առաջացած գունատութեանը խառնեց երախտագիտութեան զգացմունքի արտայայտութիւնը. Սիրանոյշը մեղմիկ վերցրեց ձեռս, համբուրեց և սեղմեց կրծքին...

Մինչ մայրը հեռուից լսելով աղջկայ հետ պատահած փորձանքը ճշեց ամբոխը, անցաւ հասաւ մեզ:

—Այդ ինչ պատահեց, Սիրանոյշ. վնաս իմ աչքերս կուրանան, ասաց նա, ես ինչո՞ւ քեզ աչքից թողի:

Քարը ոտս տարաւ իմ ծանապարհը և շեռ գլորւում էր մեզնից ներքեւ գառիվայրով:

Շուտով հասանք լեռան դագաթը և տեղաւորեցինք մեր սոհա-մական տեղում: Պէտք է ասել, որ այդ սարի վրայ ամեն մի գիւղ իր սեփական տեղն ունի, գիւղի ամեն մի ընտանիք էլ իր պապենական տեղը: Եթէ մի ընտանիք որեւէ պատճառով չէ կարողանում մի վարդաւոր սուրբին աչցել, նրա տեղը դատարկ է մնում. շատ քիչ է պատահում, որ բռնեն աչգպիսի տեղերը, այն էլ քաղաքից եկած որեւէ ընտանիք. աչգպիսի դատարկ մնացած տեղերը հազա-գիւտ են լինում:

Մերոնք բոլորը գնացին առխար անելու, իսկ ես, Սոկրատը և Սիրանոյշը գնացինք սարի վրայ ման գալու, ծաղիկներ քաղելու: Մի ծառայ մնացել էր պահապան, միւս երկուսը գնացել էին խոր կորելու ձիերի համար:

Երբ վերադարձանք զբօսանքից, մերոնք արդէն բոլորել էին սիրողի շուրջը, նախաճաշում էին:

—Ախ, Աշըլ-Ալեքսանն այսպէս լինէր, Գէորգ, դարձաւ օրիորդի հայրը իմ հօրս. էլ մեր քէֆին քէֆ չէր հասնիլ:

—Աշըլ-Ալեքսանը թուրքերումն է հիմի, այսպէս նա չի երևալ:

—Ի՞նչ կ'որք, եթէ ձեզ մի բարի լուր հաղորդեմ, ասաց մի առողջ երիտասարդ. մեր հարեան վրանից:

—Հը', ինչ կայ:

—Աշըլ-Ալեքսանը եկել է, թուրքերի վրաններումն է, շուտով կ'արձրանայ սարը:

Աշըլ-Ալեքսանը մեր ամենապաշտի երգիչն էր: Եւ արժանի իր համբաւին. ես լսել եմ Կովկասի ամենապաշտի բոլոր ափական երգիչներին՝ իբրեւ երգեցողութեան սիրահար, բայց բոլորը ոչինչ են թւացել Ալեքսանի առաջ: Նրա ձայնը ուժգնութիւնն չունի, բայց խաղերը, մեղմիկ գեղեղանքը, թանձրութիւնը հասած են աներևակայելի կալարելութեան: Նա երգում է ոչ թէ իբրեւ արհեստավար, այլ իր սրտի ու հոգեւ խորքերիցն է երգում, իր ցաւերն է լալիս: Նա բնականից կրքոտ և զգայուն լինելով, աւելա-

ցրել էր այդ հոգեկան յարկութիւններին և՛ խորին վիշտն այն օրից, երբ հողին էր յանձնել իր միակ հասած որդուն: Այդ ժամանակ նա արդէն երկրորդ երկրասարդութեան շէմքը ուր կոխած տղամարդ էր, բայց նրա կորովի ձայնի ելեէջները, որ զգացմունքների միմի հրաշալի հիւսք էին, քանի գնում, այնքան աւելի էին շատնում ազդու, դուրեկան, թունաւորող, աչրող: Սակաւ չէ պատահել, որ ես լացել եմ՝ նրա սիգնահը լսելուց, կամ ապշել նրա ձայնի հարստութեան վրայ, երբ նա երգել է ռաւաւ, սկսելով ամեցածր նոսրայից, բարձրացնելով անասելի աստիճանի և էլի մեղմացնելով, հալցնելով, ցածրացնելով մինչև զեպին: Հրանք է, հրանք...

Թէ ինչ ուրախութիւններ է անում խաչ եկած հաղարաւոր ժողովուրդը, այդ արժէ տեսնել: Այս կողմում զուռնանների զիլ ձայնը որոտեցնում է ժէռ ու քարերը, այն կողմում մի երիտասարդ մահուդ չուխայի թիւքերը ծալած՝ վառւած խփում է թառի լարերին, իսկ պճնւած հարսը ամօթնածութեան ժպիտը բերանին, սպիտակ թաշկինակը ձեռին նազ թիզ, սաղ ու բազ անելով սլարում է հանդարտ, իսկ շուրջը ծափահարում են ամենայն եռանդով, սարը թնդեցնում: Մի ուրիշ անկիւնում մէկը սազը դռնին դրած՝ գլխաբաց կրակ կտրել, միւսը փափախը ձեռին կլկացնում է շիքնաստան. մէկը փողն է լարում և սկսում ուզողնդարան, միւսը մի «հն» անելով թռչում է փելից, ծուլ-ծուլ անելով, կուսնալով, ցածրանալով, բարձրանալով կաքաւում: Մի ուրիշ փել հեռու գիւշերից մի քանի ազգական-բարեկամ կանայք են նստել, դարդ դարդի են ալիս, խօսում, ծիծաղում, լալիս ու հրճում: Ո՞րն ասեմ, հրը թողնեմ:

Մենք ևս քէֆ քաշելու նպատակով էինք եկած, պէտք է որ միւսներին նմանէինք: Ալեքսանն ու Մանասը, որ իրիկնադէմին վրայ հասան, մեր քէֆին քէֆ աւին: Շուտով ահագին ժողովուրդ հաւաքեց մեր շուրջը: Ժողովրդի միջից խրախուսական, շնորհակալական բացականչութիւններ էին հն, որ թափւում էին Ալեքսանի հասցէին և աւելի վառում նրան:

—Ալեքսան, մի բացաթի վերցրու, խնդրեցին:

—Ձէ, եղբայր, ուրախութիւն խանգարելը լաւ բան չէ, դեռ

նոր ենք սկսում. վաղը ճանապարհին կ'անեմ, պատրասխանեց Ալեքսանը, որ առանց բայաթիի էլ լացացնում էր:

Բայց ժողովուրդն սկսեց խնդրել, պահանջել, որ նա մի բայաթի կանչէ. էլ չկարողացաւ գիմարել, բոլորի գէմ գնալ, սկսեց: Բոլորը լարւել էին, սիրտները թնշում էին, բոլորն էլ պարտասոււում էին հիանալու, թախծելու, արտասուելու, խնշալու: Նւ ահա սկսեց՝ սարսուռ ազդելով ամենքի վրայ. յետոյ աննկատելի կերպով անցաւ մի սող, երկրորդ սողի միջից բոլորն արդէն կախարդւել էին, արդէն շուրսները կախել էին, խոնարհւել, երեսները շառագունել, խեղճացել. իսկ երբ վերջին երկու սողը կրկնեց և վերջացրեց մի մեռնողի խաղով, կարծես քարացան ամենքը, միայն թեթեւ հառաչանքներ էին, որ լսուում էին գլխի թեթեւ օրօրոցի հետ: Լուեց Ալեքսանը, ինքն էլ գլուխը քաշ գցեց, այդպէս մի րոպէ սիրեց ընդհանուր լուռութիւն. յետոյ սկսեցին մէկ-մէկ գլուխները բարձրացնել, հառաչել, նայել Ալեքսանի գէմքին ապուշ ժողով և հիանալ. բայց ոչ ոք չէր կարողանում արտայայտել իր հայեացքը, որպէս ցանկանում էր:

— Պահ, պահ, աշտմորդի չէ անիծւածը, մեզ սպանեց, մեզ կոտորեց, հոգիներս առաւ. սաղանաչի ճուղը, շան որդին, լսուում էին ամեն կողմից:

— Ա՛ Մանաս, մի ուրախ պնդ ածա, դու էլ ի՞նչ ես քիթ ու մուտք կախել, Կարձաւ Ալեքսանն իր եղբօրը:

Մանասը ոչինչ չ'ածեց, բայց քեամանչա ածողը Դիդիլ-խան նւագեց, որը կայանում է նրանում, որ ոչ թէ իսկապէս նւագում է, այլ խօսեցնում է քեամանչային (Դիդիլ-խանին), զանազան հարցեր է տալիս նւագողը, քեամանչան պատրասխանում է. յետոյ քեամանչան նւագողից լսելով՝ որ իր ծնողները մեռել են, սկսում է ողբալ. ապա նւագողը քեամանչային յայտնում է, որ խաբել է, ծնողները կենդանի են, քեամանչան սկսում է ուրախութիւն անել, պարել, նւագողի ծնկան վրայ և գլխի վրայ անել (պարի եղանակ նւագել):

Ամենքին ծիծաղ պատճառեց այդ կարանկախալը, ուրախութիւնը կրկին վերականգնեց:

Հապա իմ Սիրանձէշը:

Նա լռել էր. ու այնքան էլ ուրախ չէր երևում: Նստել էր կանանց մէջ, կծկւել, շաւր քիչ էր ժպտում. մանաւանդ երբ արեւը մայր մտաւ, ցուրտն ընկաւ, Սիրանոյշի գոցնը թռաւ, Դոշում էր ցրտից, մտաւ շորերի տակ և այդպէս մնաց մինչև առաւօր: Ինչպէս երևում էր նրա տհաճ Դէմքից, շաւր էլ գոհ չէր ինչ զաւլուց, նա չէր կարողանում ընդհանուր ուրախութեանը մասնակից լինել: Նա օտար էր այդտեղ:

III

Առաւօտեան լուսածագին բոլորս ոտի վրայ էինք, միայն երեխաներն ու Սիրանոյշն էին քնած. նա էլ էր երեխայ հոգով. նրա երեսը բացւել էր, հովը փչում էր ւլ-վարդ երեսին, ճակարի վրայ ընկած խոպոպիկները ետ մղում, բաց էլի դալիս՝ յամառութեամբ նստում էին իրանց տեղը: Մի, ինչքան գեղեցիկ էր նա, ինչքան գրաւիչ. ո՞վ չէր ցանկանալ նրա տէրը լինել, նրա ընկերը, նրան իրը անւանել:

Մերոնք զնացին մի վերջին անգամ ուխտ անելու, Սոկրատը նոյնպէս, մնացի ես քնածների մօտ: Նայում էի Սիրանոյշին, նայում այդ հանգստացող Դիցուհուն և չէի կշտանում: Երբնեքանդ արշալոյսը միացել էր նրա Դէմքի հետ, վառել, մի կախարչական փայլ էր տալիս: Ես նախանձում էի արշալուսին, թէ ինչո՞ւ ես էլ չեմ կարող զարդարել սիրած էակս, ինչպէս նա:

Վերջապէս աչքս Դարձրի սարը փաթաթած ամպերի ծովին, որ մեզնից ներքև ալեկոծւում էր, Դէպի վեր սողում, ժայռին փաթաթւում որպէս ապարոշ: Սողալով, սողալով եկաւ մեզ պարեց մառախուղը, մինչև որ մերոնք եկան. Սիրանոյշն ու երեխաները վեր կացան սառստալով ցրտից, երես լւանալուց էլ հրաժարւեցին ցրտի պարծառով. ձիերի կապից բռնած իջանք Դէպի ցած: Սարը համարեա Դադարկ էր, բոլորը ցած էին իջել, մենք վերջիններից էինք:

Մի ժամից հասանք սարի ստորոտում դրնուղ աղբւրին, որի ջրից յուլիսեան ամենասաստիկ տապի ժամանակ անգամ չէ կարելի կէս բաժակ խմել՝ այնքան սառն է: Այդտեղ լացւեցին ովքեր չէին լացուել, հեծանք ձիերը, և ես ու Սոկրատն առաջ անցանք մերձակայ անտառում յարմար տեղ պարտասպելու մերոնց համար: Մա-

ռաները մեզնից շուտ էին ճանապարհել՝ մի քանի մատաղացու ոչխար և ուտելիէններով բեռնաւորւած ջորիներն առաջները գցած: Մենք նրանց պատահեցինք կէս ժամից յետոյ և առաջ անցանք:

Տեղը պատրաստեցինք անրառի խորքում, ճանապարհից կէս վերստաւի հեռու մի աշբիւրի մօտ, արշինից բարձր խորերի մէջ և շուրս եկանք ճանապարհէ: Քիչ յետոյ հասան ծառաները, մէկին թողինք ճանապարհի վրայ, միւսների հետ վերադարձանք մեր տեղը, ոչխարը մորթել փւինք և խարոյկի համար փայտ պատրաստեցինք: Բայց իմ սիրտը հանդարտ չ'մնաց, ես ձիւ քշեցի շէպի մերոնց կողմը: Խելքս այնտեղ էր:

Ահա երկու ձի սրարշաւ գալիս են շէպի մեզ: Կին չէն հեծեալները: Օ՛ր զարմանք, Սիրանոյշն ու քոյրս: Ես ընդառաջ ելայ և յայտնեցի հիացքս: Սիրանոյշը նոյն կենսութեամբ, նոյն առոյգ աղջիկն էր, անցել էր նրա շէպից երեկոյեան և առաւօտեան թախիծն ու շալուկը. ժպտում էր երջանիկ, շեշտ աչքերիս խորքը նայելով:

— Սիրանոյշ, չես վախենում, ձիուց կարող ես ընկնել. դարձայ ես պտտալով:

— Ի՛նչ, երեկայ պէս. հեզնեց նա քմծիծաղ: Ես ամազոնուհի եմ, այդքան էլ թուլամորթ չ'կարծես ինձ: Ա՛յ, թէ ուզում ես, արի ոյժ փորձենք:

Եւ առանց իմ համաձայնութիւնն ստանալու՝ առաջ մտրակեց իմ ձիւ և ապա իր ձին խթելով՝ սլացաւ: Ես ժամանակ չ'ունեցայ հիանալու, ձիս փաքացաւ և առաջ արշաւեց: Մի ակնթարթում հաւասարեցի օրիորդի հետ, և ձիս կորեց, առաջ ընկաւ: Ես չ'կամենալով օրիորդին վշտացնել՝ քաշեցի ձիուս սանձը, հանդարտեցրի քիչ. օրիորդի ձին առաջ ընկաւ գնդակի պէս. ես այդ ժամանակ լուռ ու բաւական հիանում էի, թէ ինչպէս օրիորդը իրան գեղեցիկ նստած էր պահում թամբի վրայ: Մի կիրճի առաջ ձիուս սանձը քաշեց:

— Դու զարմանալի հեծելորդ ես եղել, և ես ոչինչ չեմ գիտացել. պոռացի ես յետեւիցը՝ միանգամայն ապշած:

Մենք անցանք կիրճը: Սիրանոյշը ժպտում էր:

— Բայց դու ինչ բարի փղայ ես, Արշաւիր, ես նկատեցի, որ

ձիուդ գլուխը դիտմամբ պահեցիր. ասաց օրիորդը, երբ ես հաւասարեցի նրան:

—Ես ինձ աւելի բախտաւոր վճարէի, եթէ ասէիր՝ «ինչ գրաւիչ տղայ ես», և ոչ թէ բարի. ասացի ես իսկոյն զղջալով ասածիս համար:

—Ուզում ես, որ գրաւիչ էլ անւանեմ քեզ. բայց, զիտես, գրաւիչներին սիրում են:

—Է՛, միթէ ես անարժան եմ սիրոյ. անարադ, սրտագին սիրոյ:

—Գճ... Տէր Աստուած. հիմ ասաց քեզ այդ բանը. կակազեց նա ու հայեացքը գցեց ցած:

—Երևում է...

—Ո՛չ, չի երևում, դու գրաւիչ էլ ես, գեղեցիկ էլ, հողիդ էլ դեղեցիկ. ես չեմ մոռանալ այն, ինչ որ դու երեկ արիր ինձ համար: Ուզում ես ապացոյց...

Եւ նա յանկարծ կռանալով թամբի վրայ փաթաթեց վիզս համբուրեց ինձ. նոյն արագութեամբ քաշեց ու առաջ խոյացաւ:

Մի համբոյր... ինչ է մի համբոյրը. բայց ես արեւել էի այդ մի համբոյրից: Շուր հետեւեցի Սիրանոյշին, մինչև հաւասարեցի նրան: Նա ձին հանդարտեցրեց, ես նոյնպէս:

—Սիրանոյշ, եթէ այս համբոյրը լոկ երախտագիտական զգացմունքից բխեց, ես այնքան էլ ուրախ չեմ:

—Ո՛չ... ինչո՞ւ... ան մի՛ տանջիր ինձ... կարծես չես հասկանում...

—Սիրանոյշ...

...Քէֆ, քէֆ առաջներիս էր դեռ, երեկոյեան ինչ քէֆ էինք արել որ: Իմ սիրած անպառուժ մարմնի վրայ տեղաւորել էինք, սիւռոցը գցել, խոնջոյնքն սկսել: Գինին հոսում ականջներից: Ս՛, չկարծէք թէ ես շաւի էի խմում, իսկի չէի էլ խմում, ես առանց այն էլ հարբած էի: Սիրանոյշը նստել էր քրոջս մօտ, շոյում, գուրգուրում էր նրան: Մէկ-մէկ էլ աչքի տակով նայում էր ինձ, ժպտում երջանիկ: Նա երեկւայ հակառակ մեծ ուշադրութեամբ էր լսում Ալեքսանի երգերը, և նրա շէմքի վրայ արտայայտում էր փոթորկոյ զգացուն հոգին:

Ո՞վ չէ փառք տւել սիրոյ պայծառ աստծուն իր սիրելի էա-

կին Երջանկութիւն բաշխելու համար: Ես ինձ Խօթերորդ երկն-
քումն էի զգում՝ սիրածին բախտաւոր փեսանելով. ինձ թուում էր,
թէ զլխաւորապէս ես էի նրա երջանկութեան պատճառը, և իհար-
կէ ես էի:

Երբ իմ կենացն առաջարկեցին, Սիրանոյշի ծնողները կրկին
շնորհակալութիւն յայտնեցին նախորդ օրւայ պատահարի համար.
ես ինձ հերոս զգացի, և հոգիս լցեց խնդութեամբ, երբ մանաւանդ
Սիրանոյշը թոյալութիւն խնդրեց ծնողներից ինձ հետ քրուտըրշաֆտ
խմելու. նրանք ազատութիւն տւին:

Փառաւոր ճաշը վերջացնելուց յետոյ հեծանք ձիերը, մերոնք
ճանապարհը ծռեցին շէպի մի ուրիշ ուխտաւորի... ճշմարիտ, թիւ
չկայ այդ անպառնների, սարերի, ձորերի մէջ գտնուող ուխտաւոր-
իներին: Ուր որ մի ասուածապաշտ ճգնաւոր է երևացել, այն
տեղ ժողովուրդը սրբացրել է, շատ անգամ հաստապարանոց արջերի
որջերը ճգնաւորի խուցի տեղ ընդունելով:—Մերոնք ճանապարհները
ծռեցին շէպի մի ուրիշ ուխտաւորի, ի միջի ալոց և՛ Սիրանոյշն
ու Սոկրատը՝ երեսաներին իմ խնամապարտութեանը յանձնելով: Մի
այնպիսի ուրախութիւնից յետոյ շայեակի շեր պրանձնելը շատ ան-
շնորհակալ պաշտօն է ջահէլի համար, բայց ի՞նչ կարող էի անել:
Եւ իմ փոքրիկ կարաւանը սկսեց առաջ ընթանալ կրիայի քայլե-
րով. մինչև որ մի ժամից յետոյ մերոնք եկան, ես ու Սոկրատը
թողինք նրանց և առաջ անցանք. ջահէլը համբերութիւն չունի
ծերի քայլովը քայլելու: Օրւայ ուրախութիւնը կատարեալ անելու
համար ես երկու օր առաջ պատուիրել էի Խաչապրին՝ որ տանն էր
մնացել, ձուկ որսալ և սպասել մեր գալուն: Մենք շտապեցինք
պատրաստութիւն փեսնելու գործարանում: Խաչապուրն ահագին քա-
նակութեամբ ձուկ էր բռնել նորից, թափել այգում աւազանի
ափին, փորները ճղում էր ու լւանում:

—Ա՛ճճէրիմ, Խաչապուր, կանչեցի ես ձիու վրայից: Նա նա-
յեց ինձ և փխրեց, որ արդէն դարձել ենք:

—Իսկ ես յոյս ունէի, որ կ'հասցնեմ ձեր գալստին. բայց դուք
վերադարձել էք, իսկ ես նոր եմ տեսնում մաքրել, առաջ Խաչապուրն
ափսոսալով, որ չ'կարողացաւ ցանկալի պաւառութիւնը գործել:

—Ոչինչ, միայն երկու հոգի ենք եկել, մերոնք հազիւ երկու ժամից երևան, միամտացրի ես:

—Հա, դէ լաւ է, լաւ է:

Տւի հարկաւոր պատէրները. և Սոկրատի հետ միասին անցանք դէպի գետը՝ լողանալու:

IV

Միւս օրը խօսակցութիւն ունեցայ Սիրանոյշի հետ... մեր ամուսնութեան մասին...

—Սիրանոյշ, ասացի ես՝ ոչ առանց ներքին դուլի. կարիք չ'կայ էլ երկար բարակ խօսքերի. մեր սրտերն իրար լիովին հասկանում են, մնում է մեզ միայն մի բանի մասին խօսել լրջօրէն...

—Հասկանում եմ, ընդհատեց Սիրանոյշը, թէ ինչի մասին է խօսք:

—Հապա՛ ինչի:

—Ձէ դու ասա տեսնեմ:

—Ես ուզում էի խօսել մեր... ամուսնութեան մասին:

—Լաւ:

—Դու ի հարկէ՛ համաձայն ես ինձ հետ ամուսնանալու:

—Ես ոչոքի չեմ սիրել, բացի քեզնից, հետեապէս և ոչոքի հետ չեմ ամուսնանալ, բացի քեզնից: Բայց...

—Բայց ի՞նչ...

—Բայց դու դեռ ուսանող ես:

—Է՛, ի՞նչ նշանակութիւն ունի:

—Ո՛չ, այդպէս թեթեւ աչքով չ'պէտք է նայել. դու ամուսնանալով՝ ինձ այստեղ չես թողնիլ, ինքդ գնալ:

—Ի հարկէ՛ ո՛չ:

—Իսկ քեզ հետ գալով ես ծանր բեռ կ'դառնամ քեզ համար:

—Ինչո՞ւ:

—Ես կ'խանգարեմ քեզ. չես կարող պարապել:

Ես մտածեցի և տեսայ, որ միանգամայն արդարացի է Սիրանոյշի առարկութիւնը:

—Հապա ի՞նչ անենք, դարձայ ես:

—Նշտնեւել ու գնալ. ես դեռ փասնութ փարեկան եմ, դու

քսան. այս հասակում մինչև անգամ ծիծաղ կարող է պարծառել շատերին, փարօրինակ կարող է թւալ ամուսնանալու միտքը. Դեռ կարող ենք համբերել մի երեք-չորս տարի:

Ուրիշ ելք չունէի, ստիպւած պէտք է համաձայնէի. բայց նշանւել, անպարծառ նշանւել, այդ անհրաժեշտ էի համարում սիրեցեալիս նոր-նոր փեսաներից ապահովելու համար, որովհետև չ'նշանւած աղջիկը մեր աշխարհում մի խորթ մայր ունեցող վառիկ է, ցինը կ'գայ կ'յափշտակէ, ինքդ էլ չես իմանալ, թէ ինչպէս մայրը իր ճանկերով նրան ցինին յանձնեց:

Պէտք էր խօսել ծնողներիս հետ, նոյնպէս և առնել Սիրանոյշի ծնողների համաձայնութիւնը: Մտածեցի Դիմեմ մօրս. ես մօրիցս չէի քաշւում, և վստահ էի, որ ինձ կ'օգնէ, ու հօրս կը պատրաստէ: Եւ... Եւ ինչ երազներ, ինչ ծրագիրներ...

Բայց վերջը:

Վերջը. ինչ վերջ էք ուզում: Վերջը շատ պարզ: Սիրանոյշը հիմի քաղաքում շատ հարուստ վաճառականներից մէկի կինն է. ու զարնանը ծնաւ իր չորրորդ երեխան:

Իսկ ես է՛, ձեզ ինչ իմ կեանքը. ձեզ խոստացայ միայն մի բեկոր իմ կեանքիցս:

*
* *

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Ա՛խ, այն փարիքը հւր կորան, անցան,
Ինչպէս էլ կորան և յուշեր չարձան.
Եւ հւր ես հիմայ, գիտնամ երանի,
Եւ փեսնես ինձ էլ յիշում ես հիմի...

Ա՛խ, ուր էլ լինիս, հումն էլ որ լինիս,
Այդ ազիզ սիրտդ ումն էլ որ փանիս, —
Քո շարդդ իմն է, էրնէկ շարդդ առնեմ,
Դու անո՛ւշ ապրիր, թող ես սե մեռնեմ...

Եւ սիրտս հիմի սե փան է նման,
Ձւր մի ժամանակ շու էիր ապրում,
Կարօտս լցած, նստել է դրան,
Եւ ճամբիդ մնում և ծով է կտրում...

ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ

ԱՆՏՕՆ ՉԵՄՈՂ-ԻԳ՝ Թարգ. Մ. Նալասարդեանի

Կիրակի կէս օրին էր: Կալաածաւէր Կամըշէը իր տանը՝ ճոխ պարբաստած սեղանի մօտ նստած նախաճաշում է: Ճաշակցում էր նրան մի մաքուր հագնւած ու լաւ սափրած ծերունկ՝ Փրանսիացի պարոն Շամպունջը: Շամպունջը երբեմն Կամըշէի մօտ շատիւ արակ էր, նրա երեխաներին սովորեցնում էր պարշաճ ձևեր, լաւ արտասանութիւն և պարել, իսկ յետոյ, երբ Կամըշէի զաւակները մեծացան և սպաներ եղան, Շամպունջը մնաց արական սեռի մի տեսակ աշխին: Բարդ չեն նախկին շատիւ արակի պարպաւորութիւնները: Նա պարպաւոր է ճաշակով հագնւի, բոյրերի հօտ փշի վրայից, Կամըշէի ցնդախօսութիւնները լսի, ուրի, խմի, քնի— ու աւելի ոչինչ, կարծում եմ: Այս բոլորի փոխարէն նա ստանում է անունդ, սենեակ և անորոշ ռոճիկ:

Կամըշէը ուրում է և, ըստ սովորականին, ցնդաբանում:

— Սարսափելի է, ասում է նա, արտասուենքները սրբելով, որ ցայսեւ էին նրա աչքերից խոգսպուխտի կրորին խիտ թանձր քսած մանանեխից: Ո՛ւ՛՛՛, գլխիս տեղ ու ամբողջ մարմնովս անցաւ: Բայց տեսէք, ձեր Փրանսիական մանանեխն այդպէս չի անի, թէկուզ ամբողջ սրւակը շաւարկես:

— Մարդ կայ, որ Փրանսիականն է սիրում, մարդ կայ ուր սականը... — Յայտնում է համեստաբար Շամպունջը:

— Փրանսիականն ոչ ոք չի սիրում բացի միայն Փրանսիացիներից: Ինչ կուզես որուր Փրանսիացուն— ամենը կուտէ. և զորտ, և մոկը, և բողոճներ... Ետիւք: Օրինակի համար ձեզ չի շուր

գտլիս այս խոզապուխտը, որովհետեւ ուսական է, բայց թող ձեզ մատուցանեն տապակած ապակի և ասեն թէ Ֆրանսիական է, շուք կուտէք լեզուն չըփփացընելով... ձեր կարծիքով ուսական ամեն բանը զազրելի է...

—Ես այդ չեմ ասում:

—Ռուսական ամէն բանն էլ զարշելի է, իսկ Ֆրանսիականը — ո՛հ, սէ տրէ ժողի: Ձեր խօսքին նայելով՝ Ֆրանսիացից առաւել լաւ երկիր չը կայ, իսկ իմ կարծիքով... Դէհ, ի՞նչ բան է Ֆրանսիան, բարեխեղճաբար ասած: Հողի մի կտորիկ: Եթէ մեր շատաւորներից մէկին այնտեղ ճամփենք, նա մի ամսից յետոյ իսկոյն վերադարձի մասին խնդրամատոյց կը լինի. շրջելու տեղ չկայ: Ձեր ամբողջ Ֆրանսիան մի օրում կարելի է շրջագացել, իսկ այսպիսի շէմքից շուրս ուրք կոխեցիր՝ էլ վերջ ու սահման չկայ: Գնում ես, գնում ես...

—Այո, monsieur, Ռուսաստանը լայնատարած աշխարհ է:

—Իհարկէ, հէնց այդպէս է: Ձեր կարծիքով Ֆրանսիացիները ամենից լաւ մարդիկն են: Ուսում առած ու խելքով ժողովուրդ: Քաղաքակրթւած: Համաձայն եմ, Ֆրանսիացիները բոլորը ուսումով մարդիկ են, նուրբ ձեւեր ունին... այդ ճշմարիտ է... Ֆրանսիացիներ իրեն երբէք չի թոյլ տայ զռեհիւթիւն. պէտք եղած միջոցին փիկիններին աթոռ կառաջարկէ, պապառաքաղով կարող իթ (ракъ) չի ուտի, չի թքի չտալի վրայ, սակայն... ոգի չկայ: Այն ոգին չկայ նրանում: Միայն թէ անկարող եմ ձեզ բացատրել, ի՞նչպէս արտայայտել այդ, Ֆրանսիացու մէջ ի՞նչ որ մի այնպիսի բան չկայ... (խօսողը մտքները շարժում է) ի՞նչ որ մի բան... իրաւաբանական: Յիշում եմ, կարգացել եմ մի տեղ, որ ձեզանում, բոլորի խելքը ձեռք բերովի է, դրքերիցն է, բայց մեր խելքը բնածին է... թող սովորեցնեն ուսին գիտութիւններ ինչպէս հարկն է, այն ժամանակ ձեր պրոֆէսորն էլ չի կարող համեմատել:

—Կարելի է...—կարծես ակամայից ասում է Շամպունյը:

—Ձէ, ոչ թէ կարելի է, այդպէս է: Նեղանալու հարկ չկայ, ուղիղն եմ ասում: Ռուս խելքը—հնարագէտ խելք է: Միայն ի հարկէ, չեն թոյլ տալիս նրան: Պարծենալ չգիտէ... կը հնարի որ և բան և կը կոտորի, կամ թէ երեսաններին կը տայ իբր խաշալիք:

իսկ Ֆրանսիացիին թող հնարի մի չնչին իր, իսկոյն ամբողջ աշխարհում աշմուկ կը հանէ։ Անցեալներում կառապան Եոնան փայտից մի մարդուկ էր շինել։ հէնց թելը ձգէիր լմէ չէ, իսկոյն այդ մարդուկը անպաշտօնութիւն կը գործէր... բայց և այնպէս Եոնան չի պարծենում։ Ընդհանրապէս... չեմ ակորժում Ֆրանսիացիներին։ Ասածս ձեզ չի վերաբերում, այլ առ հասարակ... բարոյազուրկ մարդիկ են։ Սրտաքինով կարծես թէ մարդու են նմանում, բայց շների պէս են ապրում։ Վերցնենք օրինակի համար հէնց ամուսնութիւնը։ Մեղանում պսակեցիր՝ Դէհ, մեխիւր կնկանդ վրայ ու էլ մի խօսի, իսկ ձեզանում ստրանեն գիպէ թէ ինչ է։ Երիկն ամբողջ օրը սրճարանն է նստած, իսկ կնիկը ողջ փունը Ֆրանսիացիներով կը լցնի ու, հայդէ, նրանց հետ վստի է փախի։

—Այդ ճշմարիտ է, ժայթքում է Շամպունը չամբերելով այլ ևս։— Ընտանեկան սկզբունքը խիստ բարձր է Ֆրանսիացու մէջ։

—Գիտէ՞ք մենք այդ սկզբունքը։ Իսկ ձեզ ամօթ է պաշտպանել այդպէս... անկողնակալ պէտք է լինել։ Խոզեր են, իսկ ու իսկ խոզեր... Շնորհակալութիւն գերմանացիներին, որ նրանց ծեծեցին... Ատրած է վկայ, շնորհակալութիւն... թող Ատրած նրանց կեանք փայ...

—Այս Դէպքում, monsieur, ես չեմ հասկանում, ասում է Ֆրանսիացիին փեղից վեր թռչելով ու աչքերը կաշճափելով,—եթէ Ֆրանսիացիներին ասում էք, էլ ի՞նչի էք ինձ պահում։

—Ի՞նչ անեմ, ռար շրկեմ ձեզ։

—Արձակեցէք—ու ես Ֆրանսիա կը վերադառնամ։

—Ինչպէ՞էս։ Բայց միթէ ձեզ կը թողնեն Ֆրանսիա մօնել։ Ձէ որ ձեր հայրենիքին Դուք Դաւաճանեցիք։ Ձեզանում մէկ կը լսես, Նապոլէոնն է մեծ մարդ, մէկ էլ կիմանաս Պամբուրան է... ինքը ստրանէն չի հասկանալ։

—Monsieur, ասում է Ֆրանսերէն Շամպունը պորթկալով ու անձեռնոցը փրփրելով,—առաւել խիստ վիրաւորանք, որը Դուք այս վայրկեանին հասցրիք իմ զգացմունքներին, անկարող էր երեւակայել թշնամիս անդամ։ Ել մեր մէջ ամէն ինչ վերջացած է։ Ու ձեռքը եղբւակոն ձեռով շարժելով Ֆրանսիացիին շնորհալիութեամբ նետեց անձեռնոցը սեղանի վրայ և Դուրս գնաց պատուաւոր կերպով։

Մօրաւորապէս երեք ժամից յետոյ սեղանի սպասները փոփոխում են և ծառան ծաշ է մատուցանում: Կամըշը ծաշի է նըստում մենակ: Մի բաժակ օշի ընդունելուց վերջը նա ցնդաբանելու ծարաւ է զգում: Ուզում է լեզւագարել իսկ ունկնդրող չկայ...

— Ի՞նչ է անում Ալիֆոնս Լիւդովիկովիչը, հարցնում է նա սպասաւորին:

— Պայուսակն է կապում...

— Ա՛յ յիմարանաս, մեղաց քեզ Ասուած ..

Շամպունջը նստած յատակի վրայ սենեակի մէջ տեղում դարստութեամբ է, դողդոջ ձեռքերով, պայաստկում ձերմակելէնը, բոցբերը, աղօթագրքեր, վարդիքակիրներ, փողպատներ... Նրա ամբողջ պատշաճաւոր էութիւնը, պայուսակը, մահճակալն ու սեղանը տոգորւած են ամբողջապէս կոկիկութեամբ և կանացիութեամբ: Նրա մեծ մեծ, կապուտ աչքերից հոսող արտաւուքի խոշոր հարիկները կաթում են պայուսակի մէջ:

— Դէպի ուր, հարցնում է Կամըշը փոքր ինչ կանգնելուց վերջը:

Լուռ է Ֆրանսիացին:

— Ճամփայ էք դնում, շարունակում Կամըշը: — Ի՞նչ կայ որ, ինչպէս կամենաք... սակայն իմացէք առանց անցագրի: Զարմանում եմ: Զգիտէք միթէ, ձեր անցագիրը կորցրել եմ հօ: Թշտերիս մէջ դրի ու կորել է... իսկ մեզանում անցագրի մոտին խիստ են: Հաղիւ հինգ վերստ կը կարենաք անցնել ու ձեզ կը ձերբակալեն:

Շամպունջը զլուխը բարձրացնում ու առանց հաւատ ընծայելու նայում է Կամըշիին:

— Այո... Այ, կը տեսնէք: Փողոցում կը նկատեն, որ անցագիր չունէք և իսկոյն— ո՞վ ես: Ալիֆոնս Շամպունջ. ճանաչում ենք աչդ: Ալիֆոնս Շամպունջներին: Զէք բարեհաճի արդեօք ոչ այնքան էլ հեռաւոր կողմեր:

— Դուք հանաք էք տնում:

— Հանաք որն է: անում: Շատ հարկաւորս է: Միայն լսեցէք պայմանը, յետոյ չսկսէք ողբալով նամակներ գրելու: Մասը մարիս չեմ խփի, երբ ձեզ բխոված ոտերով մօտովս անցկացնեն:

Շամպունյը վեր է ցատկում տեղից գունաւաւած, աչքերը լայն շրպած ու քայլում է սենեակում:

— Ի՞նչ էք անում շուք ինձ, ասում է նա յուսահատութիւնից գլուխը բռնելով. — Ի՞նչը Ասուած: Օօօ, անիժւի այն րոպէն, երբ մորթիս մեջ ծաղեց այդ շարաքաշդ գաշափարը, թողնել հայրենիքս:

— Այո է, լաւ... ես կտրակ արի: — Այս տուփուցը հանաք չի հասկանում: Խօսք ասել չի կարելի:

— Իմ անգլին, հեծկլտում է Շամպունյը Կամըշէի տոնից անդորրւած: — Երգում եմ, որ արդէն կտաւած եմ Ռուսաստանին, ձեզ և ձեր երեխաներին... Ձեզանից անջատել մեռնելու չափ ծանր է ինձ համար, սակայն ձեր ամեն մի խօսքը սիրտ է կտրատում:

— Էէ, տուփուց: Ես որ Փրանսիացիներին յիշոցեմ, շուք ի՞նչ ունէք վիրաւորելու. ումը չենք յիշոցում, ուրեմն ամենքն էլ պիտի նեղանան: Իսկ շուք թքեցէք... Այ, օրինակի համար վերցրէք ապալառու Լազար Իսակիւին... Ես նրան ըսենց ընենց, ջհուդքիոսոյ շուն եմ ասում, փեշիս ծայրով խողի ականջ եմ ցոյց տալիս կալիքներիցն եմ քաշում, բայց նա չի նեղանում:

— Բայց նա սփրուկ է. կոպէկի համար պարտասփ է իր երեսին թքել տալու:

— Դէ՛հ, լաւ է, լաւ, բաւական է: Գնանք ճաշելու:

Հաշտութիւն...

Շամպունյը ճերմակում է արգասաւալից շէմքը ու Կասըշէի հետ գնում է շէպի սեղանատուն: Առաջի կերակուրը ուտում են լուռ ու մոռնջ, երկրորդից յետոյ սկսում է նորէն նոյն պատմութիւնը, և այսպէս Շամպունյը-ի տանջանքներին վերջ չկայ:

ԼԱՅՈՒՄ Է ՔԱՄԻՆ...

ԱՐԵՍԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Լացում է քամին, կոծում է քամին,
Ողբում է անթիւ փանջանքը մարդու.
Դիզւել են ամպերն էն սարի ծէրին,
Ճնշում են ծանրը, մռայլ ահարկու:

Օ՛, որքան մեծ է մեր ցաւն ու վիշտը,
Որքան կեանքն անցուկ, որքան շառն-ունայն,
Որքան խափուսիկ հոգու ժպիտը—
Անցաւ մի վայրկեան, արտասում է այն.

Եւ մեր մրքերը լուսաւոր, փայլուն՝
Պահւած են ահա մահու պափանքով,
Պայծառ յոյսերը արդէն քայքայուն,
Ու սիրտը լցւած սև փռապանքով...

Հեծում է քամին, ծեծում է քամին,
Ողբում անցաւոր խեղճ կեանքը մարդու.
Դիզւել են ամպերն էն սարի ծէրին,
Ճնշում են ծանր, մռայլ, ահարկու:

ՄԻ ԾՆՈՂԱՍՊՈՒՆ

Գի ԴԸ ՄՈՊԱՍԱՆԻ՝ Թարգմ. Մ. Նալապարդեանի

Փառաբանեն իր սաղարկանեալի խելագար եղածն էր հասարակութիւնը:

Այլապէս ինչ կերպ բացատրել այս տարօրինակ ոճիրը:

Մի առաւօտ, Շապուի մօտերքում եղեգների մէջ, գտել էին երկու շիակ իրար փաթըթւած, կինն ու էրիկը, երկուսն էլ յայտնի զարճասէրներ, հարստական, մանաւանդ բոլորովին նորարի և միայն նախընթաց տարին ամուսնացած կինը հազիւ երեք տարւայ աչրի էր:

Սրանք ոչ մի թշնամի չունէին, և այժմ էլ կողոպտւած չէին: Այնպէս էր թւում թէ սրանց ժայռ իցն էին գահավիժել գետի մէջ մի սրածայր երկաթի ձողով, մէկը միւսի ետևից, նախապէս սպանելուց վերջը:

Խուզարկութիւնը բան չապացուցեց: Հարցաքննւած նաւագները ոչինչ չըզիտէին. մնում էր գործը առանց հետևանքի թողնել, երբ մօտակայ գեղի մի ջահէլ ապաշճագործ Ժորժ Լուի անունով, մականւանւած Լը Բուրժուա, ինքն իրեն յանձնեց շաղարանին: Բոլոր հարց ու փորձին նա միմիայն այս էր պատասխանում: — Երկու տարուց ի վեր ես ճանաչում էի այն մարդուն, իսկ կնոջ՝ վեց ամիս է. նրանք յաճախ էին զալիս մօտս հին կարասիները նորոգել տալու, որովհետև արհեստիս մէջ հմուտ եմ:

Եւ երբ նրան հարցնում էին.

— Ինչի սպանեցիք նրանց:

Նա պատասխանում էր յամառութեամբ.

— Ես նրանց սպանեցի, որովհետև կամենում էի սպանել:

Աւրիշ պատասխան չլսեց նրա բերանից:

Այս մարդը մի ապօրինի զաւակ էր անկասկած, որ տւել էին մի դելշուկ յայեակի, յետոյ թողել անտէրուն: Նա յայտնի էր միայն ժորժ Լուի անունով, բայց մեծանալով՝ իւր բնածին քնքշութիւնների ու հակումների համար, որոնցից գլխովին զուրկ էին սրա ընկերները, մականւանեցին ւթաղքըցի, ու աջնուհետեւ էլ ուրիշ կերպ չէին կոչում: Նրան ճանաչում էին իբր շատ հմուտ վարպետ իր արհեստում, որին ամբողջովին անձնագուր էր եղել: Գիտէր նաեւ փոքր ինչ փայտի վրայ փորագրել: Նա յայտնի էր նոյն իսկ իբրեւ տաք-գլուխին մէկը, մինչև անգամ կուսակից կոմունիստական ու նիհիլիստ վարչապետութիւնների, սիրահար արկածալից վէպերի, արիւնս ուշտ տրագիկ շրամանների, այլ և ազդեցիկ քւէ-արկոշ և հմուտ ծառախօս արհեստաւորների կամ զեղացիների հասարակական ժողովներում:

*
* *

Փաստաբանը իր պաշտպանելի խելագար եղած լինելն էր հաստատել:

Ի՞նչպէս կարելի էր ընդունել, որ այս արհեստաւորը սպանէր իր ամենալաւ մուշտարիներին, հարուստ և առապաձեռն (ինչպէս ինքն էր խոստովանում), որոնք նրան, երկու տարւայ ընթացքում, երեք հազար Փրանկի նորոգութեան աշխատանք էին տւել. (նրա մայրեաններն էլ հաստատում էին այդ): Մի բացատրութիւն կար միայն. խելագարութիւնը, *idée fixe* մի շատագուրկ մարդու, որը բոլոր բուրժուանների շէմ իր տաճած վրէժխնդրութիւնը լուծում է երկու բուրժուաններից, և փաստաբանը ծարպիկօրէն ակնարկեց նրա Լը Բուրժուա մականւան վրայ, որ նրան տւել էին գեղացիները և թողել նրան իր բաղդին. նա բացականչում էր.

— Հեգնութիւն չէ այս արդեօք և մի հեգնութիւն, որ կարող է աւելի ևս մոլեգնել այս թշուառ մարդուն, որ ոչ մայր ունի և ոչ հայր: Սա մի եռանդուն հասարակական է: Ի՞նչ եմ ասում, սա կուսակից է նոյն իսկ այն քաղաքական գաղափարի, որ առաջ հանրապետութիւնը հրացանի էր բռնում, և աքսորում, իսկ այժմ ընդունում է գրկաբաց. նա պատկանում է այն կուսակցութեան,

որի համար հրձիւութիւնը մի սկզբունք է և սպանութիւնը մի շար հասարակ միջոց:

Հասարակակ սն ժողովներում ծափահարւած այս փոքր վար-
դապետութիւններն էին որ կորցրին այս մարդուն: Սա լսել է հան-
րապետականներին, կանանց նոյն խի, այն կանանց, որոնք պարոն
Գամբերայի, պարոն Գրեիի արիւնն էին պահանջում: միւլքը մո-
լորել է, նա արիւն է ցանկացել, բուժուալի արիւն:

Սա է Դաւապարտելին, պարոններ, այլ կոմունը (la Com-
mune):

Հաւանութեան շնորհներ լսեցին: Ամենքը լաւ զգում էին, որ
փաստաբանն իր Դաւը վաստակեց: Դատախազը չպատասխանեց:

Այն ժամանակ նախագահը մեղադրեալին սովորական հարցը
դրեց:

—Ամբաստանւած, բան ունի՞ք աւելացնելու ձեր պաշտպա-
նութեանը:

Մարդը ոտի կանգնեց:

Նա կարճահասակ, շէկ մազերով, գորշ, սևեւուն և վճիւր աչե-
րով մի մարդ էր: Այս փոքր մարդու կոկորդից ձաջնը բլխում էր
ուժգին, ազատ և հնչուն և առաջին քանի մի խօսքերով դրաւեց
ունկնդիր հանդիսականների համակրանքը:

Նա խօսեց բարձրաձայն, ճարտասանական ձևով ու այն աստի-
ճանի պարզ, որ նրա ա.մեն մի խօսքը լսելի էր մեծ Դաշիճի
խորքից:

—Յարգոյ նախագահ, որովհետև չեմ կամենում դժանոց մտնել
ու առաւել ղերադասելի է ինձ համար կառաւինոցը (guillotine),
այս պարծաւով բոլորը կը պտրմեմ ձեզ:

Ես սպանեցի այն մարդ ու կինը, որովհետև նրանք իմ ծնու-
ներն էին:

Սրդ, լսեցէք ինձ և Դաւեցէք:

Մի կին արու զաւակ ծնելով՝ շրկեց նրան ղեղջուկ մի Դա-
յեակի մօտ սըննդելու: Այն կնոջը միայն յայտնի էր թէ ուր Դա-
րաւ իր մեղսակիցը փոքրիկ անմեղ արարածին, որ Դաւապար-
տւած էր յաւիրենական թշուառութեան, ապօրինի ամօթանքի.
Դեռ աւելին՝ նա մահւան էր յանձնւած, քանի որ նրան բարձի

Թողի էին արել. որովհետև շաշեակը չը ստանալով այլ ևս իր ամսական վճարը՝ կարող էր, ինչպես որ պատահում է յաճախ, երեսի վրա գցել, սովի տանջել կամ անտէրունջ Թողնելով Թշուառի սպանել:

Իմ ստընդուն ազնիւ գոնեց, աւելի ազնիւ, աւելի կանացի, աւելի մեծ և մայրագութ քան թէ մայրս: Նա ինձ մեծացրեց: Նա յանցանք գործեց իր պարտաւորութիւնը կապարելով: Արդեօք գերաշատելի չէ Թողնել, որ մօտակա գիւղերում գցած այդ Թըշուառները ոչնչանան ինչպէս աղքատները վրայ Թափուած մի անպէտք իր:

Ես աճեցի այն անորոշ զգացումով թէ վրաս անպարտութիւն եմ կրում: Միւս երեսները մի օր ինձ շփոթեցին. նրանք չը զիտէին թէ ինչ էր նշանակու այդ խօսքը, որ նրանցից մէկը լսել էր իր ծնողներից: Անգիտանում էի և ես այդ խօսքի իմաստը, սակայն զգում էի:

Կարող եմ հաւատացնել, որ ուսումնարանում ամենաընդունակներից մէկն էլ ես էի: Կարող էի աշնիւ մարդ շառնալ, պարոն նախագահ, կարելի է մեծ մարդ, եթէ ծնողներս ինձ լքելու յանցանքը չը գործէին:

Նրանք իմ շէմ գործեցին այդ յանցանքը: Ես գոհ էի, նրանք շարագործները: Ես անպաշտպան էի, նրանք գոնեցին անգութ: Պարտաւոր էին ինձ սիրելու, բայց հեռացրին իրանցից:

Գոյութեամբս նրանց էի պարտական—սակայն կեանքը մի պարզ և արդեօք իմ ղոնէ շփոթութիւն էր միմիայն: Ամօթալի լքումից յետոյ ես նրանցից միայն վրէժ պէտք էր լուծէի: Նրանք իմ շէմ առաւել ամարդի, առաւել վարանուն, աւելի հիշաւոր յանցանք գործեցին, քան ինչ որ կարելի է մի որ և է արարածի շէմ:

Նախապէս մարդը զարկում է, կոշտաբանութիւն ոյժով չեւ է ստանում իր գոյքը, խաբածը, նենգածը, փանջածը սպանում է, անպարտած մարդը սպանում է: Ես բարոյապէս աւելի խիստ էի կոշտաբան, խաբած, փանջած, ապտակած քան թէ նրանք, որոնց բարկութիւնը շուք արդարացնում էք:

Վրէժս լուծեցի, ես սպանեցի: Այդ իմ օրինական իրա-

ուռնքս էր: Ես նրանց զրկեցի երջանիկ կեանքից իմ երջանիկ կեանքիս փոխարէն:

Դուք պիտի առարկէք թէ ես ծնողնսպսն եմ: Ծնողներս էին նրանք արդեօք, այդ մարդիկ, որոնց համար ես մի անտանելի բեռ, մի սարսափ, մի անւանարկու արտօք էի, որոնց համար իմ ծնունդը մի չարիք, ու կեանքս՝ ամօթաբեր սպառնալիք էր: Նրանք եսամոլ զարծանք էին որոնում, անսպասելի կերպով երեխայ ունեցան, և անյայտացրին երեխային: Հերթը հասաւ ինձ նոյն կերպ վարւելու նրանց հետ:

Սակայն վերջերս ես պատրաստ էի նրանց սիրելու:

Ահաւաստիկ երկու տարի կը լինի, ինչպէս ասացի, որ հայրս, առաջին անգամ մտաւ իմ մօտ: Ես ոչինչ չէի կասկածում. նա ինձ երկու կտոր կարասի պատւիրեց: Աւելի ուշ իմացայ միայն, որ նա իմ մասին տեղեկութիւն էր հարցրել զիւշի երէցից, որը ի հարկէ դաշտնիքը ուրիշներին յայտնելու չէր:

Նա յաճախում էր մօտս աշխարհեցնում և ինձ առատօրէն վարձաւորում: Երբեմն էլ նոյնիսկ խօսում էր փոքր ինչ Դէսից, Դէնից: Սկսեցի սէր տածել Դէսի նա:

Այս տարւայ սկիզբներում նա հետը բերեց և կնոջը: Երբ մայրս մտաւ այն աստիճան խիստ Դողում էր, որ կարծեցի թէ նեարդային հիւանդ է: Նստեց և մի բաժակ ջուր խնդրեց: Նա ոչինչ չէր ասում, կարասիներիս նայում էր խելացնորի պէս, և հօրս սուս հարցերին անթերի կերպով պատասխանում էր միայն այդ և ոչ:

Նրանց գնալուց յետոյ կարծեցի թէ այդ կինը փոքր ինչ փնասւած է մտաւորապէս: Յաջորդ ամսին նորից եկաւ, արդէն հանգիստ ու անշփոթ: Այս անգամ բաւական երկար խօսեցին ու մի խոշոր պատէր յանձնարարեցին: Տեսայ նրան մի երեք անգամ ևս առանց մի բան դուշակելու. ահա, մի գեղեցիկ օր խօսեց կենցաղիս, մանկութեանս, ծնողներիս մասին: Ես պատասխանեցի—Տիկին, ծնողներս թշուառականներ են, որ լքել են ինձ: Այն ժամանակ ձեռքը տարաւ սրտին և ընկաւ ուշաթափ: Իսկոյն ևեթ ասի ինքս ինձ—ամայրս է: Սակայն զգուշացայ զգացնել տալուց: Ուղում էի Դարձեալ տեսնել նրան մի քանի անգամ:

Նրանց օրինակին հետևելով ես ևս սկսեցի տեղեկութիւններ:

հաւաքել. իմացայ, որ նրանք միայն նախընթաց յուխսին էին ամուսնացել, մայրս երեք դարի առաջ էր այրիացել: Քէն շար էին մարդիկ իրար ականջին շնչել թէ նրանք հօրս կենդանութեան միջոցներին արդէն չարարերութիւն են ունեցել, բայց ոչ մի ապացոյց չկար: Ես էի ապացոյցը, ապացոյց, որ նրանք քաղել էին սկզբներում, ապագայում անհետացնելու յոյսով:

Ես ապաստեցի: Մի երեկոյ կրկին յայտնեց մօտս իր ամուսնու հետ: Այս անգամ նա ինձ խիստ յուզւած թւաց, չգիտեմ ինչ պատճառով: Ապա, մեկնելուց առաջ, ինձ ասեց— «Ձեզ բարիք եմ ցանկանում, որովհետեւ կարծում եմ թէ շուք մի ականիւ ու աշխատասէր ջանէլ տղայ էք. մորադուել էք, անշուշտ, մի անգամ ամուսնանալ, եկել եմ ձեզ օգնելու, որ կարենաք ազատօրէն ձեր հաւանած պղծկան կնութեան ընտրէք: Ինքս ամուսնացել եմ մի անգամ հակառակ կամքիս ու գիտեմ թէ ինչքան են դանջում այդպիսի շէպերում: Այժմ ես հարուստ, անզաւակ, ազատ և հարստութեան տէր եմ: Ահաւասիկ ձեր բաժինքը:»

Նա մեկնեց ինձ մի մեծ փակ ծրար:

Ես նրան նայեցի սևեռուն աչքերով ու յետոյ ասի. «Դուք իմ մայրն էք:»

Նա երեք քայլ ընկրկեց ու ինձ էլ չտեսնելու մտքով ձեռներով ծածկեց աչքերը: Իսկ նա, ամուսինը, հայրս նրան կռների վրա պահելով դռնացի վրաս:

«Դուք խելագար չէք, հօ:»

Ես պրպտասխանեցի. ամենեւին ոչ, հաստատ գիտեմ, որ շուք իմ ծնողներն էք: Ձեք կարող այդպէս ինձ խաբել. խոստովանեցէք, ու այդ գաղտնիքը իմ մէջ կը մնայ. ես ձեզանից չեմ նեղանայ: Կը մնամ նոյն արաղձագործը:»

Նա ընկրկում էր շէպի ելքը կնոջը շարունակ գրկած, որ հեկեկում էր արդէն: Շտապով շուռը գոցեցի ու բալնիքը գրպանս շնելով նորից ասի. «Նայեցէք շրան և ուրացէք շարձեալ թէ նա մայրս չէ:»

Այն ժամանակ նա կատաղեց և փոզունեց, սարսափելով աջն մտքից, որ մինչև օրս խոցս փռած խալտառակութիւնը կարող էր յանկարծակի յայտնել, ու նրանց շրութիւնը, նրանց հուշակն ու

պարիւր կոչընչանար մի ըստէս մի ճիշդ սինլքորի մէկն էք—կա-
կազեց նա—ու կամենում էք մեզանից փող շորթել. արի՛ւ ու բա-
րութիւն արա ժողովուրդին, այս գոեհիկներին, օգնիր, նպաստիր
սրանց:

Մայրս շփոթեալ կրկնում էր շուրջ-շուրջ. «Հեռանանք, հեռա-
նանք այստեղից»:

Բայց որովհետեւ շուրջ գոց էր, ամուսինը գոռաց.

«Եթէ այս ըստէին շուրջ չբանաք, ես ձեզ բանորը նետել կը
դամ բռնութեան և շանտաժի պատճառով»:

Ես շփոթեալ չէի, բացի շուրջ և տեսայ թէ ինչպէս նրանք
անհետացան մթութեան մէջ:

Այն ժամին ինձ թեաց յանկարծ թէ նոր որբացայ, լքեալ,
ու անգէր: Սոսկալի տրտմութիւնը բարկոյթի, զզւանքի, արեւու-
թեան հետ խառնեալ տիրեց ինձ. արդարութեան, շիտակութեան,
պարտի և մերժեալ սիրուս բոլորը զգացի մէջս: Սկսեցի վազել
Սենայի ղերափով, որտեղից նրանք պիտի հասնէին Շատուրի կայա-
րանը:

—Շուրջով հասայ նրանց: Անասելի մութ գիշեր էր: Ես գի-
լաքաշ էի քաջում արօտի վրայ, այնպէս որ նրանք չլսեցին ուր-
նաձայնս: Մայրս լալիս էր շարունակ: Հայրս ասում էր. «Դուք էք
մեղաւորը, ինչնձրիդ էր պէտք տեսնել նրան անպատճառ: Խեղ-
ութիւն է մեր արածը. կարելի էր նրան բարիք անել առանց երե-
ւալու: Ի՞նչ կարիք վտանգաւոր տեսակցութիւնների, քանի որ ան-
կարող ենք նրան մեր զաւակ ընդունել»:

Այն միջոցին ես նրանց առջև յայտնեցի. «Ի՞նչ տեսնում էք,
որ շուք ծնողներս էք, շուք մի անգամ ինձ մերժեցիք, այժմ նո-
րից պիտի աքացէք»:

Այն ժամանակ, պարոն նախագահ, նա ձեռք բարձրացրեց
վրաս, երէւում եմ պարտովս, օրէնքով, հասարակապետութեան
անունով: Նա ինձ հարաւանց, և որովհետեւ նրա օձիքից բռնեցի,
զրպանից պարճանակ հանեց:

Աչքերս շաղկեցին, չգիտեմ այլ ևս, կարկինս մօտս էր, հար-
ւածեցի նրանով, հարաւանցի որչափ կարողացայ:

Այդ միջոցին մայրս մօրուքս փետելով սկսեց աղաղակել «օգ-

նութիւն, սպանում են: Երևում է, որ նրան էլ եմ՝ սպանել: Կարող եմ գիտենալ թէ ինչ եմ արել այն րոպէին:

Ապա, երբ նրանց երկուսին էլ գեղնադարած գրպա, նետեցի Սենա գետը՝ առանց մտածելու: Վերջացրի Այժմ շապեցէք ինձ:

Անբաստանաճը նստեց տեղը: Այս յայտնութեան առիթով գործը յետաձգեց յաջորդ նիստին և շուտով կը քննէ: Եթէ մենք երդւեալ շաքաւորներ լինէինք, ինչպէս կը վարէինք այս ծնողասպանի հետ:

*
* *
Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Ո՞վ ես, լնու ոգի,
Իմ հոգնու հոգի,
Որ ինչպէս եղեմ
Կամ թարմ լուսադէմ՝
Ինձ մ'օր ես թռչում,
Միշտ ինձ ես կանչում
Տոչոր ու վառման
Կարօտի նման...
Կամ ասես թէ մի
Կորած, վաղեմի՝
Սրտի բարեկամ՝
Տեսել այս անգամ —
Հի՛ն երգն ես ասում,
Եւ անուշ խօսում
Կեանքի թարմ օրից,
Յուշերի խորից...
Եւ ձայնդ առնելիս՝
Այնպէս սրտիս մօր,
Ախ այնպէս ծանօթ
Ճանանչ ես գալիս:
Զգիտեմ ով ես,
Բայց սիրու ծով ես...
Դու սէրն ես բարի,
Ախ, արի, արի...

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆԵՐ

Ա. ԱՂԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹)

Ես ասացի, որ առևտրական փորձնականութիւն ձեռք բերելու նպատակով ցանկալի է, որ սպառող ընկերութիւնը սեպհական խանութ բացանելուց առաջ իր անդամներին անհրաժեշտ պիտոյքները գնէ մասնաւոր մթերաւաճառից, վերջինիս հետ ձեռնարկ պայմաններ կապելով: Սակայն այդ միջոցը ամեն տեղ իրադրութիւն չէ: Դա հնարաւոր է միայն քաղաքներում, ուր մրցում կայ և ուրեմն գների վերաբերմամբ գիշում կարելի է ստանալ: Գիւղերում և մանր քաղաքներում այդ միջոցը անդործադրելի է, և ահա այսպիսի տեղերում ընկերութիւնը սեպհական խանութով պիտի սկսէ իր գործը:

Եւ այսպէս ուրեմն մասնաւոր մթերաւաճառների հետ մթերքների գների վերաբերմամբ համաձայնութիւն կայացնելով կամ սեպհական խանութ հիմնելով՝ սպառող ընկերութիւնը նախապէս կամ անմիջապէս ձգտում է մատակարարել իր անդամներին էժան գնով, լաւ որակի եւ ուղիղ չափսի ու կշռի ապրանք: Յետոյ, երբ ընկերութիւնը մեծանում է, երբ նրա ծաւալը լայնանում է, նա, այդ նպատակից բացի, ծառայում է և ալ խնդիրների, որոնց մասին փոքր ինչ յետոյ կը խօսեմ: Իսկ առաջժամ ցոյց դամ, թէ ինչի

¹ Տես Մուրճ 1900 թ. № 3:

արդիւնք են հասարակական խանութները, ինչն էլ դրդել առանձին տնտեսական միանալ և այդպիսի ընկերութիւններ կազմել:

Այդ երեւոյթի պատճառը հետեւեալն է. մանրավաճառութեամբ զբաղելը որպէս գոյութեան միջոցի ամենահեշտ ձևը, վերջին ժամանակներս շուրջերին է զբաւել, որի պատճառով և բաւականին բազմացել է մանր խանութների թիւը: Վերջիններիս բազմանալը նպաստում է վերադարձի ծախսերի (накладные расходы) աճման, իսկ այս հանգամանքը բարձրացնում է մթերքների գները: Կան և այլ հանգամանքներ, որոնք նոյնպէս նպաստել են մթերքների թանկանալուն. օրինակ, դիւղական խանութի մոնոպոլ դրութիւնը, այն հանգամանքը, որ մանրավաճառները կարողանում են գների չափի մասին հեշտութեամբ համաձայնութիւններ կապացնել իրար մէջ և այդպիսով միշտ բարձր պահել գները: Մի խօսքով մանրավաճառութիւնը ստիպել է և ստիպում է հասարակութեան շատ թանկ վճարել մանրավաճառների ծառայութեան համար և հէնց պարտւում է, որ նոցա աշխարհում ապրանքների գները անասելի կերպով բարձրանում են: Արեւմտեան Եւրոպայում մանրավաճառների մօտ ապրանքների գները քանակի (оптовый) գների հետ համեմատած, բարձրանում են 20—127⁰/₆-ով: Ախոս որ Ռուսաստանի և մասնաւորապէս Կովկասի մասին այդպիսի տրամաբանական պնդելութիւններ չունինք: Դրանից արդէն հասկանալի է հետեւեալը. Պրանսիան ընդհանուր առմամբ սպառում ապրանք 25 միլիարդ ֆրանկ, որից 7¹/₂ ժողովում է մանրավաճառների գրպանը: Այդ թիւը (7¹/₂ միլիարդ ֆրանկ) երկու անգամ մեծ է Պրանսիայի բիւջէից և 1¹/₂ անգամ—այն ահադին, պարմութեան մէջ չլսած փոքրից, որ Պրանսիան ստիպւած է իշխել 1871 թւականին վճարել Գերմանիային: Սեղանում մանրավաճառութիւնը այդ պնակէտից անկասկած աւելի վաղ է դրւած և իսկապէս հետաքրքիր է իմանալ, թէ արդեօք իր քան օգուտ ենք վճարում մեր մանրավաճառներին:

Եւ այդպէս մանրավաճառութեան մէջ գոյութիւն ունեցող մթերքների թանկութիւնը, բարձր գները յառաջ են բերել սպառող ընկերութիւններ, որոնք ուղղակի չարաքերութիւններ հաստատելով խոշոր արդիւնաբերողների կամ քանակով վաճառողների (оптовый торговец) հետ, աղափուում են մանրավաճառի թանկ

միջամտութիւնից և ծառայութիւնից և այդպիսով հնարաւորութիւն են տալիս իրանց անդամներին կամ խնայողութիւններ անել և կամ հեշտութեամբ ընդարձակել իրանց սպառման կամ պահանջների շրջանը:

Սպառողների ընկերութիւնները ոչ միայն իրանց անդամների համար են էականացնում մթերքները, այլ և ընդհանրապէս անուշադակի կերպով ազդում են գների վրայ, որովհետեւ հասարակական խանութը առևտուր է անում և կոշմակի անձերի հետ: Այդպիսով նա ստիպում է մանրավաճառներին աչք չհեռացնել հասարակական խանութի գներից և վարել շոցա համաձայն:

Հասարակական խանութների ծագման նույնատիպ է և այն հանգամանքը, որ մանրավաճառները մեծ մասամբ վաւորակի ապրանք են բաց թողնում իրանց գնորդներին: Ո՞վ չգիտէ, որ շատ խանութպաններ, ձգտելով աւելի շատ օգուտ ստանալ, շաքարի, թէյի, ալիւրի և այլ մթերքների մէջ վնասակար կամ անվնաս նիւթեր են խառնում և ապա ծախում:

Մեզանում կայ մի հանգամանք ևս, որ պահանջում է անպարփառ հասարակական խանութներ հիմնել. դա գիւղերի անջատւած լինելը, քաղաքներից հեռու գտնւելն է: Եւ գիւղացին կամ գիւղում ապրող ժամանակաւոր հիւրը ստիպւած է լինում մի որ և է կարևոր մթերքի համար կամ քաղաք գնալ և կամ գիւղի խանութպանից անասելի գներով ապրանք գնել: Խանութպանը լաւ հասկանալով իր և գնորդների շրջութիւնը, կտրակի կերպով առաջարկում է իր քէֆին տւած գինը, և գնողը, ուզէ-չուզէ, պիտի համաձայնէ նրա հետ: Գիւղական խանութպանների կեղեքիչ դերը ի միջի այլոց և դրանից է իր սկիզբն առնում *:

Ահա զլիաւորապէս այն պատճառները, որոնցից ծնունդ են առել հասարակական խանութները: Այժմ անցնեմ շոցա համառօտ պատմութեանը:

*) Արաստանում մի-երկու փորձեր եղած են հասարակական խանութներ պահելու գիւղերում. անցեալ տարի շոցանից մէկը փակեց կրած վնասների պատճառով. բայց այդ չի հասարակական խանութների անցործնական լինելու արդարացի լինելը: Ծան. խմբ.

Մթերքների բարձր գները զգալի ծանրութիւն են հանդիսանում բանւոր շատակարգի համար: Այդ պատճառով զարմանալի չէ, որ հասարակական խանութների օրրանը բանւորական միջավայրն է եղել: Բանւորները հասարակական խանութների միջոցով ձգտելիս են եղել բարելաւել իրանց անտեսական դրութիւնը՝ անհրաժեշտ մթերքների գները էժանացնելով:

Սպառող ընկերութիւնների հայրենիքը Անգլիան է: Դոցա պարտութիւնը սկսւում է 1844 թւականից: Նոցանից առաջինը, որ մեծ հռչակ է ստացել և հանդիսացել է որպէս օրինակ այլ ընկերութիւնների ծաղման, Ռոչքեյեան ընկերութիւնն է: Այդ ընկերութիւնը հիմնել են Մանչեսթրի մօտ գտնուող Ռոչքեյ քաղաքի բանւորները: Բանը այսպէս էր եղել. Ֆլանելի արդիւնաբերութիւնը, որ ծաղկած էր Ռոչքեյում, 1843 թւականին ենթարկեց մեծ կրիզիսի: Բանւորական վճարը իջաւ, աշխատանքի պայմանները վարժարացան, բանւորները չգիտէին ինչ անել և նրանց դրութիւնը ուղղակի անտանելի էր դարձել: Այդ հանգամանքներում բանւորների մի փոքրիկ խումբ վճռեց մի թեթև գումար կազմել, որպէս զի դորա միջոցներով կարելի լինէր օգնել ամենաաղքատ բանւորներին: Այդ նպատակով նոքա մի կասսա հիմնեցին և իւրաքանչիւր բանւոր շաբաթական 8 կոպէկ էր մտցնում այդ կասսան: Մի անգամ երկկոյեան բանւորները ժողովել էին և երկար ժամանակ խօսում էին իրանց անելանելի դրութեան մասին: Այդ դրութիւնը բարեփոխու համար շատ միջոցներ էին առաջարկում, սակայն դոցանից ոչ մէկը գործնական բնաւորութիւն չէր կրում: Երկար խորհրդակցելուց յետոյ բանւորները վճռեցին մի պարզամաւորութիւն ուղարկել գործարանատէրերին և խնդրել, որ նոքա աւելացնեն բանւորական վարձը և բարելաւեն նոցա դրութիւնը: Միայն մի քանի գործարանատէրեր համաձայնեցին կատարել այդ խնդիրը, մնացածները պատասխանեցին, թէ նրանք աւելի յարմար են դատում փակել իրանց գործարանները քան աւելացնել ստրայնանկների օրավարձը: Բանւորները մտածում էին, թէ արդեօք իրանք չեն կարող սեփական գործարան բացանել: Այդ միտքը քաջալերում էր շատերին՝ շարունակելու 8 կոպէկանոց վճարները. սակայն աւելի զգաստ և փորձաւոր ուտայնանկներ սեփական

գործարան ունենալու գաղափարը մի երազ էին համարում, աչքի առաջ ունենալով 8 կոպէկներից կազմող դումարի շանդաշ անունը։ Այդ կարելի էր իրագործել միայն շաւր և շաւր հեռու ապագայում։ Բայց աշխարութիւնը օրեր չէ սպասում, ուր մնաց՝ տարիներ... Յուսահատութիւնը կամաց-կամաց տիրապետում էր բոլորին։ Ձայներ էին լսում թէ ժողոված դումարը հարկաւոր է բաժանել ընկերների մէջ, որպէս զի հնարաւոր լինի գոնէ առժամանակ կառավարել մի կերպ, մինչև որ իրերի գրութիւնը կը փոխէր։ Չէ որ իւրաքանչիւր անշամ մի բան էլ է կը ստանար կասալից։ Բարեբախտաբար այդ առաջարկութիւնը չանցաւ։ Սեփական գործարան ունենալու տենչը այնուամենայնիւ գրաւիչ էր։ Բանւորները մտածում էին, թէ արդեօք նրանք ինչպէս փոշ գործեն այդ նպատակի համար։ Պարտք վերցնել—սակայն ո՞վ նրանց պարտք կը տար։ Բացի գրանից, այդ շէպքում անգամ նրանց գրութեան բարեւաւութիւնը շարձեալ հեռու ապագային էր մնում, այն ինչ ներկան պահանջում էր այնպիսի միջոց, որ կարճ ժամանակում կարողանար բաւորել նոցա վիճակը։ Ծրաւարձի բարձրացնելը նոյն իսկ բանւորական շարժումով անհնարին էր։ Ի՞նչ էր մնում անելու։ Միթէ իսկապէս նրանց վիճակած էր միշտ վար կերակրել և և վտար հազնելը։

Եւ բնականաբար նրանց գլխում ծագեց հետեւեալ միտքը. եթէ չէ կարելի աւելացնել աշխատանքի վարձը, արդեօք հնարաւոր չէ իջնցնել մթերքների գները և այդպիսով նոյն վարձով ստանալ աւելի շաւր մթերքներ, ուրիմն և լաւ կերակրել ու հազնել։ Իսկ դա միևնոյնն էր, թէ արդեօք ձեռնարկ չէ սեփական խանութ բացանելու։ Խանութք, մտածում էին նրանք, մեզ օգուտ կը տայ, որով կարելի կը լինի սեփական գործարան հիմնել։ Այդ միտքը, որ բարեռք վիճակ էր խոստանում, բանւորների մէջ մեծ հաւանութիւն գտաւ։ Այդ նպատակով նրանք հիմնեցին 40 հոգուց բաղկացած մի ընկերութիւն։ Անշամակցական վճարը 8 կոպէկից բարձրացրին 12-ի։ Ընտրեցին երեք հոգի, որոնք իւրաքանչիւր կերակրի անշամների մօտ պիտի գնային և ժողովէին վճարները։ Գործի շէկը գործում էր եռանշուն և ազնիւ մարդկանց ձեռքում և սոքա մի առանձին ոգևորութեամբ ու հաւատով էին աշխատում։

Այդպիսով բանւորները ժողովեցին մինչև 280 ո. և ահա այդ փոքրիկ գումարով նոքա պիտի բացանէին իրանց խանութը: Նոքա վարձեցին խանութ, գնեցին ապրանք և 1844 թւականի գեղարեւոյթի 21-ին հրկոյեան պիտի բացէին խանութը: Վերջինս գործնւում էր մի յետ ընկած փողոցում: Ամբոխը կանգնած սպասում էր շուկայի բացման: Ոստայնականները կանգնած էին գլուխները կախ, շէմքները մուշկ և վիճում էին այն մասին, թէ արդեօք ով շուկա կը լինի խանութի պատուհանի շուկայները յետ տանելու և հասարակութեանը խանութի ապրանքների սուղ պաշտօրը ցոյց տալու: Եւ խիստապէս այդ գործը կատարելու համար տանջողներ, ամաչողներ կային: Վերջապէս գործեց մի քաջը, որ արագութեամբ պատուհաններին մօտ վազեց և բացաւ շուկայները: Ամբոխը քրքրեց: Այդպէս սկսեց հասարակական խանութների գործը, որ յետոյ տարածեց ամբողջ աշխարհում:

Խանութի գործը սկսեց արագութեամբ առաջ գնալ: Դրան նստաստում էին թէ անշամների ընդհանուր ոգևորութիւնն ու անձնէր գործունէութիւնը և թէ այն հիմնական կանոնները, որոնք մինչև այժմ էլ առաջարկւում են ամեն մի նոր բացւող հասարակական խանութի համար: Այդ հիմնական կանոնները, որ առաջ գործադրւած է Ռոջեյլ քաղաքում, յայտնի են Ռոջեյլեան սիստեմ անունով: Դոքա հեղեղեալն են. 1) Ապրանքը խանութում ծախւում է առանձին շաբաթով: Ապառիկ ծախելը շատ վտանգաւոր է. այս հանգամանքը յաճախ շատ ընկերութիւնների կորստեան պատճառ է դարձել, և այնպէս, ուր անհրաժեշտ է սպառիկ առևտուր անելը, պիտի սահմանափակ շրջանների մէջ շնել: 2) Ապրանքը ծախւում է շուկայի չափաւոր գներով: Սա ունի իր առաւելութիւնները. ա) այդ կանոնը պարզապէս է խանութին աւելի կայունութիւն և բ) մասնաւոր մթերաւաճառների մէջ խիստ թշնամութիւն չէ յառաջադրւում, որ գոյութիւն կունենար, եթէ շուկայի գներից պակաս գներով ծախէր ապրանքը: 3) Ձուր աշխատանքը բաժանում են ոչ թէ իւրաքանչիւր անշամի դրած կապիտալի համեմատ, այլ կապիտալին հասնելիք տոկոսը դուրս եկած, մնացածը բաժանում են համեմատութեամբ թէ ով որքանի մթերք է գնել խանութից: Այդ սիստեմը, այսինքն շուկայների բաժանելը իւ-

րաքանչիւր անշամի սպառման համեմատ և մինչոյն ժամանակ մթերքների գներն որոշելը համաձայն շուկայի գների՝ միջոց է տալիս ամենքին խնայողութիւն անել սե օրւոյ համար Կան սպառողների ընկերութիւններ, որոնք բացառապէս հողում են միայն էփան ապրանք մատակարարելու իրանց անշամներին և այդ նպատակով նրանք ապրանքը ծախում են համարիա նոյն գնով, ինչ գնով որ առել են Գների վրայ աւելացնում են աջնքան, որ կարելի լինի խանութի ծախքերը ծածկել: Պարզ է, որ այդ միջոցով անկարելի է խնայողութիւն անել: Այն ինչ ուղիքեան սխառեմով իւրաքանչիւր անշամ կարող է մի քանի տարուց յետոյ որոշ գումարի տէր դառնալ: Նա միայն հասարակական խանութից պիտի առնուր անէ: Եւ իսկապէս այն խանութը, որի մասին պատմում ենք, հնարաւորութիւն ունեց իւր անշամներէց ոմանց կիտել բաւականաչափ գումար: Օրինակ մէկը 5—6 տարուց յետոյ արդէն ունէր 230 ռ., որ գոյացել էր նրան հասնելիք գումարից. մի կին խնայել էր մինչև 380 ռ. և այլն: Ռուսացիան ընկերութիւնը աճում էր շատ արագ և սկսելով իր գործունէութիւնը 280 ուրբլով, 1891 թւականին (47 տարւոյ ընթացքում) ունէր արդէն 31½ միլիոն ուրբլի, իսկ զուտ արդիւնք 1,5 միլիոն ուրբլի: Իւր գոյութեան ընթացքում ռուսացիան ընկերութիւնը իր անշամներին 12 միլիոն ռ. օգուտ է տուել: Ընկերութիւնը հետեւում է և այլ նպատակների. յիշենք, որ լուսաւորութեան գործի համար (ուսումնարաններ պահել, գրադարան, ընթերցարան, դասախօսութիւններ կազմակերպել և այլն) մինչև 1887 թւականը ընկերութիւնը ծախսել է մօտ 200.000 ուրբլի: Ռուսացիցիք հետեւում են և բարեգործական նպատակների. իրանց հիւանդ անշամները բժշկւում են ձրի, իսկ մեռելները նոյնպէս ձրի են թաղւում: Բացի այդ, ինչպէս փոքր ինչ առաջ ասացի, նրանք շատ են գնահատում ուսումն ու կրթութիւնը և ահա այդ նպատակով իրանց զուտ օգուտից 2,50/0 նւիրում են ուսումնական-կրթական գործի: Ընկերութիւնը ունի մի ուսումնարան, որպէս չսովորում են մինչև 450 աշակերպներ. ունէ մի գրադարան, որպէս 17 հազար զիրք կայ. մի ընթերցարան—մի ընդարձակ և 19 հազար փոքրիկ դահլիճներով: Նոյն նպատակով ռուսացիցիք երկրորդներ, ներկայացումներ և զբո-

սանքներ են սարքում, հիմնում են զանազան կուրսեր (մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի և այլն) և առ այդ հրաւիրում են զանազան մասնագէտներ: 1893 թվականին ընկերութիւնը հիմնեց մի շարժական կաթնափայտե սական ուսումնարան՝ իւշի արդիւնագործութիւնը սովորեցնելու համար: Վերջերում հիմնեցին նոյն իսկ ֆլանելի սեփական գործարան և այդպիսով հասան իրանց մօլորադին:

Ռուշէլեան ընկերութեան յաջողութիւնը մի փայլուն օրինակ էր նորանոր սպառող ընկերութիւնների ծաղման համար: Եւ իսկապէս 1892 թ. Մեծ Բրիտանիայում նոցա թիւը հասնում էր 1500-ի: Ազգաբնակչութեան 20, 90/0-ը մասնակցում էր այդ ընկերութիւններին: Անգլիայի սպառողների ընկերութիւններին մէջ այժմ շրջաւաթ է 115 միլիոն ուլրի: 1891 թիւն բոլոր իւանութիւններից 315 միլիոնի ապրանք է ծախած և զուր օգուտ վերցւած է 43 միլիոն ուլրի: Եւ այդ բոլոր յաջողութիւնը ձեռք է բերւած 50 տարւայ ընթացքում:

Սպառողների ընկերութիւնների զարգացման նպաստում է և այն հանգամանքը, թէ որքան ձեռնպու պայմաններով են ձեռք բերում ապրանքները: Վերջիններս ընկերութեան համար վաճառականական տեսակէտից լաւ դնելու համար բաւական չէ գնողի ագնութիւնը, այլ և պէտք է բազմակողմանի տեղեկութիւններ ունենալ շուկայի դրութեան և ընդհանրապէս ապրանքների մասին: Մի խօսքով առևտրական փորձնականութիւն և հմտութիւն ևս հարկաւոր է: Այդ նպատակով իւրաքանչիւր խանութ ունենում է ապրանքներ ճանաչող մարդիկ, որոնց ծառայութիւնից և օգուտում է: Մի ընկերութեան համար ծանր կը լինէր այդպիսի մարդիկ պահել, բայց հասարակական խանութների դաշնակցութիւնը կարող է վարձապրել այդպիսի ծառայողների: Վերջիններիս դերը նշանաւոր է. շոցա կարելի է երաշխաւոր համարել լաւ որակի ապրանք ստանալու համար. այդպիսի մարդկանց ծառայութիւնից օգուտելու համար սպառողների ընկերութիւնները պիտի դաշն կապեն և միասին նոցա միջոցով մեծ քանակութեամբ ապրանք գնեն: Այդ պիտով ամեն մի ընկերութեան մնում է միայն պատուէրներ անել, ապրանք գնելու պատասխանապաւութիւնը իրանցից դէն ձգելով:

Վաճառելը միայն մնում է խանութներին: Եւ Անգլիայում այս բանը շուտ հասկացան: Արդէն 1863 և 1868 թւականներին հիմնւեցան այդ փոսակ ընկերութիւններ, որոնք միանգամից մեծ քանակութեամբ ապրանք էին գնում և կտրարում սպառողների ընկերութիւնների պատէրները: Վերջինները լինում էին առաջինների անշահները, մտնում էին որոշ գումար (համեմատ իրանց անշահների թւին) և նոցանից ստանում կարևոր մթերքներ:

Սպառողների ընկերութիւնները ունին և ընդհանուր կօօպերատիւ շաշնակցութիւն, որի նպատակն է բարոյական կապ հաստատել բոլոր սպառող ընկերութիւնների մէջ և փոխադարձ խորհուրդներ ու օգնութիւններ հասցնել միմեանց: Սակայն դրանով չեռ չէ վերջանում սպառող-ընկերութիւնների ամբողջ կազմակերպութիւնը: Ամեն տարի Հոգեգալտիւն կայանում է բոլոր ընկերութիւնների ներկայացուցիչների համագումար ժողովը, ուր տեղի է ունենում մոքերի փոխանակութիւն այդ ընկերութիւնների հոգսերի և անելիքների վերաբերմամբ: Բացի այդ, զանազան հոգսերներ ձառեր են կարդում՝ ձգտելով ամրացնել սպառող-ընկերութիւնների բարոյական կապը, անշահների վերաբերմունքը յէպի այդ հաստատութիւնները աւելի և աւելի զիրակցական դարձնելու նպատակով:

Հասարակական խանութների թիւը բազմանում է Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարեայում և Բելգիայում: 1894 թւականին Գերմանիայում նոցա թիւը հասնում էր 1412-ի. Ռուսաստանում միայն վերջին ժամանակներս է սկսել այդպիսի մի շարժում: Շատ գործարաններ և փերունական երկաթուղիների ծառայողներ հիմնել են սպառողների ընկերութիւններ: 1893 թւին գոյութիւն ունէր 91 ընկերութիւն: 1893 թւականին 87 ընկերութիւն ունէին 1.356.940 ու ընկերակցական գումար. Օգոստ ստացւած է 489.197 ու, որ ասել է ամեն մի ընկերութիւն ստացել է զուտ օգուտ 5.755 ուրբլի: Ընդհանրապէս Ռուսաստանում սպառող-ընկերութիւններ չեռ չաք քիչ են տարածւած, եղածներն էլ ոչ մի կապ չունին միմեանց հետ: Մեզ մօտ Կովկասում կան մի քանի ընկերութիւններ, որոնցից ինձ յայտնի են Նօբելի և Շիրակի

գործարանների բանտորների համար հիմնած հասարակական խանութները *):

Այդ խանութների օգուտը անորոշական շահերի տեսակէտից ակնյայտնի է: Մինչև այժմ մեր խօսքը բանտորների մասին էր: Բայց մեր գլխաւոր նպատակն է հրաւիրել զիւղական հասարակութիւնների ուշադրութիւնը շէպի այդ օգտակար կազմակերպութիւնը: Ամեն մի զիւղական հասարակութիւն առանձին կամ միացած ոչ թերով պիտի ձգտի ազատել զիւղական կեղեքիչ մանրավաճառների ձեռքից, հասարակական խանութներ հիմնելով: Այդպիսով նոքա խանութպանի խլածը իրանք կը արանան և, բացի այդ, կունենան լաւ որակի մթերքներ: Ռոչշեկեան ընկերութեան համառօտ պատմութիւնը մի պատկեր է, որ ցոյց է տալիս այդ հիմնարկութեան օգտակարութիւնը՝ անորոշական տեսակէտից: Եթէ այդ ընկերութիւնները մեզանում անգլիական ընկերութիւնների չաջողութիւնը չունենան, գոնէ որոշ չափով կը թեթեւացնեն մեր զիւղական տարրի անորոշական դրութիւնը: Մեր զիւղական աշխարհով հետաքրքրուողների հոգսն ու մտածմանքը գլխաւորապէս պիտի ուղիւի շէպ այն կողմը, թէ ինչ միջոցներով կարելի է զարկ տալ զիւղացոյց անորոշական զարգացման:

Հասարակական խանութները հիմնելը այդ միջոցներից մինն է: Մնում է ցանկալ, որ մեր այս առաջարկութիւնը արձագանք գտնէ շատ զիւղերում և որ այս խնդրի վերաբերեալ մասնագէտ մարդիկ մամուլի մէջ հանդէս գալին իրանց խորհուրդներով և խնդրի բազմակողմանի ուսումնասիրութեամբ: Սորա վերաբերեալ մենք չունինք ոչ թէ մատչելի ալ նոյն իսկ անմատչելի գրականութիւն: Հարկաւոր են դրքոյկներ, ձեռնարկներ, որոնք գրււած են և բանտորին բացատրէին թէ ինչու՞ն է կոչանում սպառողների ընկերութիւնների էութիւնը, նշաւակը և այլն¹:

*) Այդ կարգի ամենախոշոր ընկերութիւնը կոլկասում պիտի համարել օֆիցերական ընկերութիւնը, որի կենտրոնը Թիֆլիսն է: Ծան. խմբ.

1) Յիշենք որ Մեղրի գիւղի հասարակութիւնը վճել է հասարակական խանութ բանալ և խնդիրքը հաւանութիւն է գտել սահանգապետի մօտ:

Ցանկալի է որ Հրապ. ընկ. հրատարակէր սպառողների ընկերութիւնների նորմալ կանոնադրութիւնը (нормальный уставъ потребителей обществъ), որ արդէն հաստատուած է քարձրագոյն իշխանութիւնից և հրատարակած:

Ներկայ լուծածի համար օժանդակ է ծառայել Օգերովի Что такое потребительное общество գրքովը:

ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆԵՐԸ

ԸՍՏ ԴՈՒՍԱՑ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ

ՄԻՔ. ԱԹԱԲԵԳԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹)

Գրական օրէնսդրութեան տեսակէտից հեղինակի իրաւունքի տէր ճանաչուած են ամենից առաջ, բնականաբար, իրենք՝ հեղինակները, իսկ չեղուց նրանց իրաւաբանական գոյութեանը—ժառանգները, հրատարակիչները: Հետեւաբար տէր կարող է լինել մի անձ—նաւորութիւն, որ ամենեւին չէ մասնակցել երկասիրութեան արեղծագործութեան մէջ:

Սակայն պէտք է նկատել, որ իրաւունքը սկզբնական է միայն (первоначальное право) ի շէմս հեղինակի, այն ինչ որ իշխերին անցնելիս այդ միևնոյն իրաւունքը շաւնում է անցողական (производное право). բայց այդ մասին չեմոյ: Համարեա բոլոր օրէնսդրութիւնները պահպանում են հեղինակների շահերը կամ նրանց սկզբնական իրաւունքը մինչև նրանց կեանքի վերջը, իսկ մեռնելու դէպքի համար զանազան պետութիւնների մէջ այլ և այլ ժամանակամիջոցներ են սահմանում հեղինակների իրաւաբանական յաջորդների պաշտպանութեան համար:

Ռուսական օրէնսդրութիւնը հեղինակի շահերը պահպանում է նրա ամբողջ կեանքի ընթացքում, իսկ մեռնելուց չեմոյ նրա յաջորդներին պաշտպանում է մինչև 50 տարի ²: Օրէնսդրու-

¹ Տես Մուրճ 1900 թ. № 4:

² Օրինագրքի հատոր X, մաս I, լուծած 1185.

Թիւնը հեղինակի շահերի պաշտպանութեան հարցում խորութիւն չի դնում ուս եւ օտար քաղաքացիների մէջ. նա միակերպ հովանաւորում է օտարահապառակների երկերը, ի հարկէ, այն շէպքում, որքա՞յ երկերը տալած են Ռուսիայում: Բացի այս՝ ուսական օրէնքը՝ ինչպէս երկատիրոջներին, նոյնպէս և Թարգմանիչներին ընդունում է որպէս ինքնուրոյն և համահաւասար տէրեր հեղինակի իրաւունքի: Բոլոր այն յօդաւածներում, որոնց մէջ խօսւում է երկատիրոջների իրաւունքների մասին, նրանց հետ միասին չիշոււմ են և Թարգմանիչները: Ամեն մի հեղինակ կամ Թարգմանիչ իրաւունք ունի օգտւելու իւր գրքի հրատարակութիւնից իւր ամբողջ կեանքի ընթացքում... և այլն: 3-դ յօդաւածը. «գրքի երկրորդ հրատարակութեան համար հարկաւոր է նախ կայացնել համաձայնութիւն հեղինակի, Թարգմանիչի միջև: 6-դ յօդաւած. «Այն մարդիկ, որոնց հեղինակը կամ Թարգմանիչը կտակել է կամ մի ուրիշ կերպ յանձնել է իր բոլոր կամ մի քանի գրաւածները, պէտք է...» և այլն:

Հետեւաբար ուսական օրէնքով Թարգմանիչն ևս, ինչպէս հեղինակը, պաշտպանութեան ենթակայ է մինչև իւր կեանքի վերջը, իսկ մեռնելուց չկողմ նրա ժառանգների շահերը պահպանւում են մինչև 50 տարի:

Մինչև այժմ՝ երբ խօսւում էինք հեղինակ-երկատիրոջների իրաւունքների պաշտպանութեան մասին, մենք հեղինակի իրաւունքի տէր ենթադրում էինք միայն մի անձն, մի անհատ. սակայն գրական կեանքը առաջ բերաւ և այնպիսի օրինակներ, որք մի հեղինակութեան արեղծագործողները լինում են երկու և աւելի անհատներ. այսպիսի օրինակները հետեանք են այսպէս կոչւած հեղինակցութեան (соавторство) և աշխատակցութեան:

Արեւմտեան եւրոպայի օրէնագրութիւնը ուշադրութիւն դարձրեց այսպիսի հաղինակցութեան շէպքերի վրայ. օրինակ 1870 թւի գերմանական օրէնքը հեղինակցութեան վերաբերեալ շէպքերը այսպէս է որոշում. «մի քանի անհատների, որպէս հեղինակիցների ստեղծած երկերի պաշտպանութեան ժամանակամիջոցը տեւում է մինչև 30 տարի այդ հեղինակիցներից վերջինի մահից չկողմ: Ռուս օրէնագրութեան մէջ ոչ մի ցուցում չկայ հեղինակցութեան հարցի վերաբերմամբ, թէև ուսական գրականութիւնն

այդպիսի օրինակներ արտադրել յանձին, օրինակ, Սարգսյան և Սալաւեովի (Женитьба Блугина, Дикарка) և ուրիշների:

Վերև յիշեցինք նաև աշխարակցութեան մասին. սա մի քիչ տարբերում է հեղինակցութիւնից:

Հեղինակցութիւնը ենթադրում է երկու, և, երբեմն, աւելի մարդկանց մասնակցութիւն, որոնք հաւասար իրաւունք ունին այն երկի նկարմամբ, որ հանդէս է զալիս իբրև հեղինակ. նրանց միարտն զործակցութեան և մի ամբողջացրած աշխատանքի տպագրութիւն է թողնում: Աշխարակցութեան դէպքերում՝ սակայն վրայ կարելի է նայել երկու կողմից. ամբողջ աշխատասիրութեան հեղինակի և առանձին յօդւածների հեղինակների տեսակէտից¹:

Այդպիսի միաւորութեան օրինակ կարող է ծառայել ասեմբլէնց Բրոկհաուզի և Եւֆրոնի «Հանրագիտական բառարանը». ամբողջովին վերցրած այդ բառարանը կամ նրա նման մի աշխատութիւն կարող է հրատարակել կամ ձեռնարկողը կամ այն տնձր, որին սա զիջանում է իր իրաւունքը. այն ինչ զանազան յօդւածների հեղինակները իրենց են վերապահում նաև բառարանում տպած առանձին յօդւածները հրատարակելու իրաւունքը: Եւրոպական շատ օրէնսդրութիւններ այդ տեսակէտից էլ նայում են խրմբագրի և առանձին յօդւածների հեղինակների յարաբերութիւնների վրայ: Այս հարցում բացառութիւն չէ կազմում և ռուսական օրէնսդրութիւնը. մի ամբողջ աշխատութեան խմբագիրների և հրատարակիչների մասին 420-րդ յօդւածի յաւելւածի 7րդ յօդւածը ասում է. «Հրատարակիչները՝ ամսագիրների և ուրիշ տարբերական գրւածների նոցնպէս և ալմանախների և առհասարակ այնպիսի գրքերի, որոնք կազմւած են զանազան փոքրիկ հեղինակութիւններից կամ յօդւածներից, ունին բացառիկ իրաւունք արտատպելու այդպիսիները նոցն ձևով, ընդհանուր կանոնով»:

Սրա հետ միասին ռուսական օրէնսդրութիւնը ի նկատի ունինալ և օրինակի համար՝ որ և է համայնագիտական բառարանում կամ ամսագրում զետեղւած առանձին յօդւածների հեղինակների շահերը:

¹ Շերշենիչ. Հեղինակի իրաւունքը, էջ 138

Առանձին յօդաձևների հեղինակների այդպիսի շահերի պաշտպանութիւնը ռուսական օրէնքն այսպէս է ձեռնարկում. Հեղինակը կամ թարգմանիչը փեղաւորելով իրանց հեղինակութիւնը կամ թարգմանութիւնը մի ամսագրում կամ մի ժողովածուի մէջ, չեն զրկւում այդպիսիները առանձին տպելու իրաւունքից, եթէ նոցա չի արգելում իրանց պաշմանը նոյն հրատարակչի հետ¹:

Այս կէտից երևում է, որ առանձին յօդաձևների հեղինակները՝ եթէ մի ամբողջ աշխատութեան հրատարակչների կամ խմբագիրների հետ նախնական համաձայնութիւն չեն կայացրել, իրաւունք ունին իրենց յօդաձևները հրատարակել նաև այլ ծանապարհով՝ լինի այդ մասնաւոր տետրակների ձևով, թէ ուրիշ ամսագիրներում ղետելով, և այլն: Ինչ վերաբերում է այնպիսի աշխատութիւններին, որոնց մասնակից հանդիսանում են միաժամանակ և՛ հրատարակիչը և՛ խմբագիրը և՛ աշխատակիցները, ինչպէս որ պարեքերական հրատարակութիւնները, — աշխատակիցների Դրութիւնը այստեղ էլ ոչ մի բանով չէ զանազանւում վերոյիշեալ առանձին յօդաձևների հեղինակների Դրութիւնից, բայց եթէ նրանով, որ այստեղ հաշիւ չեն առնւում լրահաւաքներն և մանր նկատողութիւնների կազմողները: Հեղինակի իրաւունքը մի լրագրի վրայ՝ իբրև մի ամբողջութեան՝ պարկանում է խմբագրին կամ փոխադարձ համաձայնութեան հիման վրայ՝ հրատարակչին, որը Դրա փոխարէն որոշ վարձատրութիւն է տալիս առաջինին:

Այժմ անցնելով անանուն կամ կեղծանուն գրաւորների հեղինակներին՝ այսքան միայն կը նկատենք, որ օտար օրէնսդրութիւնների որոշումներին նայելով՝ այդպիսի գրաւորների վրայ հեղինակի իրաւունքը ձեռք է բերում հրատարակիչը, մինչև որ հեղինակին քը կամ նրա ժառանգները կապացուցանեն թէ ով է գրական երկի իսկական ստեղծագործողը: Իսկ Ռուսական օրէնսդրութիւնը նոյն խնդրի նկատմամբ ոչ մի շեղում արժեք չունի, նոյն իսկ Դէպք չէ եղել որ այդպիսի խնդիրներ Դատաւարութեան և մասնաւոր վճռաջինջ արտնի քննութեան առարկայ եղած լինին: Ռուսական օրէնսդրութիւնը հեղինակի իրաւունքի տէրերի թւում

¹ X 4. I մ. 420 1870. (2 ծանօթ.) լաւեւածի 8 1870.

շատում է և բերանացի աւանդութեամբ պահած ժողովրդական երգերի, առակների, հեքիաթների և պարմածքների առաջին հրապարակչներին,¹ նոյնպէս և հին ձեռագիրների հրապարակչներին և այլն: Առասպելան օրէնքը՝ վերջիններիս ճանաչելով հանդերձ որպէս տէրեր հեղինակի իրաւունքի իրենց հրապարակութիւնների նկատմամբ, ուրիշներին չէ արգիլում հրապարակել միւսնոյն տարեգրութիւնները կամ որեւէ հին ձեռագիր՝ վերցնելով աւելի ամբողջացրած կամ ընդհանրապէս այլ օրինակներից:

Անկախ Ֆիզիկայէս գոյութիւն ունեցող անձերի վերոյիշեալ իրաւունքներից, ռուսական օրէնսդրութիւնը բովանդակում է մի քանի որոշումներ հեղինակի իրաւունքի տէր ներկայացող իրաւաբանական անձնաւորութիւնների պաշտպանութեան հարցի վերաբերմամբ: Իրաւաբանական անձնաւորութիւնները մեղանում աւելի քիչ ժամանակամիջոց են վաչելում օրէնքի հովանաւորութիւնը, քան հեղինակի յաջորդները՝ ժառանգներն ու հրապարակիչները: Յայտնի է՝ որ վերջիններիս վերաբերմամբ հեղինակի իրաւունքը ոչ թ ունի մինչև 50 տարի հեղինակի մահից յետոյ, այն ինչ իրաւաբանական անձնաւորութիւնները կարող են հեղինակի իրաւունքի տէր համարել մինչև 50 տարի՝ սկսելով միայն հեղինակութեան առաջին հրապարակութեան օրից: Պրոֆէսոր Շերշենեիչը այս դրութիւնը համարում է անհետեւողականութեան արդիւնք ռուսական օրէնսդրութեան կողմից: Ենթէ բացառիկ իրաւունքն անցնում է միայն գրավաճառ-հրապարակչին, չրա հետեւանքն այն է լինում, որ նա չիսնամեաց արտօնութեան իրաւունք է արանում՝ հեղինակի մահից յետոյ. իսկ եթէ այդ իրաւունքն անցնում է մի հրապարակչական շրջանի կամ ընկերութեան, ինչպէս է Посред-НИКЪ-ը, այն ժամանակ ձեռք է բերում չիսնամեաց արտօնութեան իրաւունք՝ միայն հաշուելով հեղինակութեան հրապարակութեան օրից ²):

Մեզ մնում է շեռ մի քանի խօսք էլ ասել հեղինակի օրինա-

¹ Շերշենեիչ. Հեղինակի իրաւունքը:

² 420 լօդ. (Ման. 2) լաւելածի 2 լօդ. X հ. I մ.

³ Շերշենեիչ. Հեղինակի իրաւունքը, էջ 144

կան յաջորդներն շրութեան մասին. խօսքը հեղինակի ժառանգ-
ների մասին է: X հ. I մ. 1185-րդ յօդաձևը ընդունում է, որ
հեղինակի իրաւունքը կարող է նրա ժառանգներին անցնել ուղիւ-
կան երկու ճանապարհով՝ օրէնքով և կրակով. սակայն այս իրա-
ւունքը, ասում է յօդաձևը, չի կարող 50 տարուց աւելի տեւել՝
հեղինակի մահից յետոյ: Այսպէս ուրեմն՝ բոլորովին նման այն ան-
ձերին, որոնք օրինական կերպով ժառանգում են որեւէ գույք, հե-
ղինակի ժառանգն էլ, իր հեղինակ-նոր մահից յետոյ ամբողջովին
ձեռք է բերում նրա իրաւունքը հեղինակութեան վրայ, միայն
կրճատւած ժամանակամիջոցով, որի ընթացքում ժառանգը իր իրա-
ւասութեան սահմանում հետեւում է, ի հարկէ, ժառանգական իրա-
ւունքի այս սկզբունքին թէ *nemo plus juris, quam prior trans-*
ferre non potest: (Ո՛, դք չի կարող իր ունեցած իրաւունքից
աւելի բան թողնել իր ժառանգին):

Բայց շեռ մնում է այն հարցը, թէ մի քանի ժառանգներ
ինչպիսի իրաւունքներ ունին իրենց օգտին թողած մի գրեթէ վե-
րաբերմամբ:

Այս հարցին ուղիղ պատասխան չկայ հեղինակութեան վերա-
բերեալ ուստական օրէնքների մեջ, բայց նրա լուծումը կարող է
հեշտանալ եթէ հեղինակութեան վրայ նայենք որպէս մի անբաժան
գույքի վրայ¹: Այդպիսի հայեացքով շեղավարեւիս պարզ է որ իւրա-
քանիւր ժառանգին բաժին կընկնի մի երկասիրութեան վերա-
բերմամբ հեղինակի իրաւունքի՝ այսպէս տասն իշէալական մասը
(идеальная доля²) և այսպիսի իրաւունքի այս կամ այն կերպ
գործադրութիւնը կարող է տեղի ունենալ միայն բոլոր մասնաւորե-
րերի համաձայնութեամբ: Ինչ վերաբերում է հեղինակի մահից յե-
տոյ լոյս տեսած երկերին, X հ. I մ. 1, 1185 յօդաձևից անուղղակի
կերպով կարելի է եզրակացնել, որ մի այդպիսի երկասիրութեան՝
ինչպէս և ամենայն գույքի իրաւունքը պատկանում է հեղինակի
ժառանգին: Սակայն օրէնքը ոչինչ չի որոշում այն մասնաւոր շէպ-

¹ Зап. Граж. т. X ч. I ст. 393

² Այսինքն բաժանում է ոչ իրը ինքը (=գիրքը), այլ նորա դրա-
մական արդիւնքը:

քերի վերաբերմամբ, երբ մահից յետոյ լոյս տեսած երկասիրութեան հեղինակը անժառանգ է: Հաւանօրէն՝ այդպիսի յէպօքորում կամ ամբողջ հասարակութիւնն է ժառանգ հանդիսանում և նրա իւրաքանչիւր անդամը սահմանափակած չէ գրեածքի հրատարակութիւնից օգուելու համար, և կամ այդպիսի աշխարհութիւնների վերաբերմամբ զործադրում է անսկզբ (выморочное) գոյքերի ժառանգութեան կարգը:

Պարզելով ռուսաց քաղաքացիական օրէնսդրութեան տեսակէտը հեղինակի իրաւունքի տէրերի վերաբերմամբ մեզ համար անհրաժեշտ է կանգառնել նաեւ հեղինակի իրաւունքին ենթակա այն առարկաների (объекты) վրայ, որոնց գոյութեան հետ անխզելի կերպով կապւած է և այդ իրաւունքի տէրերի (субъекты) գոյութիւնը:

Հեղինակի իրաւունքի առարկայ ընդունւած է անւանել ամենայն երկասիրութիւն, որ արդիւնք է հեղինակի մտաւոր աշխարհութեան և կարող է գրական շրջանառութեան նիւթ լինել:

Հեղինակի իրաւունքի հաստատութեան ռուս հեղափոխութեան Տաբաշնիկով, Շերշենեւիչ, Սպասոժիչ և ուրիշները հեղինակի իրաւունքի առարկայի անհրաժեշտ, բնորոշ նշանը համարում են այն արտաքին ինքնուրոյն ձեւը, որով արտայայտուած է ոգեկան ստեղծագործութեան արդիւնքը, լինի այդ բանաւոր թէ գրաւոր: Այդ հիման վրայ, դադարում է Տաբաշնիկովը, մի հեղինակութեան միայն բովանդակութեան յիշատակումը, առանց նրա արտաքին ձեւի պահպանութեան, չէ կարող հեղինակի իրաւունքի խանգարում համարել:

Պրոֆէսոր Շերշենեւիչը ասում է. «Բանի որ գաղափարը չի արտայայտուել, նա չի կարող հեղինակի իրաւունքի առարկայ լինել, որովհետեւ արտաքին անհրաժեշտ ձեւը չունի»:

Սպասոժիչը ևս գտնում է, որ հեղինակութեան արտաքին կողմը պէտք է նոյնքան ամշողջացրած ներկայանայ, որ վերարտադրութեան համար յարմար լինի:

Մի խօսքով աշխատասիրութիւնը, լինի այդ բանաւոր թէ գրաւոր, Պաքէդանոսցեւի ասածով, «գրական արժէք պէտք է ունենայ»:

Երկրասիրութիւնների հրատարակութիւնը հասարակութեան մէջ տարածելու, այսպէս ասած գրական շրջանառութեան համար:

անհրաժեշտ է որ այդ երկրասիրութիւնները հեղինակի իրաւունքի առարկայ ճանաչին. այս հիման վրայ է, որ ամենայն տեսակ յայտարարութիւններ, ծրագիրներ, հրաւիրաթղթեր և այլն չեն համարուում հեղինակի իրաւունքի առարկայ, որովհետեւ դրանց նպատակը գրական չէ, այլ հնար եղածին չափ շատ տարածելը. այնպէս որ իրաւացի է դատուում պրոֆէսոր Շէրշէնեւիչը որ առանց իրաւունք ստանալու դոցա հրատարակողը պարտ է միայն ծառայութիւն մատուցանել հեղինակներին, բայց ոչ երբեք փնտսել նրանց շահերին:

Բացի այս, ամենայն տեսակ կառավարական կարգադրութիւնները, դատական վճիռներ, օրէնքներ, հրամաններ և այլն, առանձին վերցրած, գրական շրջանառութեան նիւթ չեն կազմում և հետեւաբար հեղինակի իրաւունքի առարկայ չեն կարող լինել. բայց, որպէս Կ. Պ. Պրեդոնոսցեն է ասում, «երբ հրատարակում են որոշ նպատակով կամ ժողովածուի ձևով, կարող են առևտրի, գրավաճառութեան նիւթ կազմել», ապա դառնում են հեղինակի իրաւունքի առարկայ:

Ռուսական օրէնսդրութիւնը առարկայի (=օբյեկտի) վերաբերմամբ ընդհանուր որոշում չունի, այլ բովանդակում է լոկ պատահական նիւթերի բնաւորութիւն կրող ցուցակ, հեղինակի իրաւունքի ենթակայ նիւթերի վերաբերմամբ, այն է գրքեր, շարադրութիւններ, թարգմանութիւններ, երգեր, առակներ, հէքիաթներ, մասնաւոր նամակներ և մասնաւոր նկարողութիւններ, որոնք չեն նշանակւած հրատարակութեան համար, ամսագիր, յօդւածներ, օրացոյցներ, հրապարակով արտասանւած կամ կարդացւած ճառեր կամ այլ շարադրութիւններ, բառարաններ և այլն և այլն (տես յաւելւած 420 յօդ. հանօթ. 2):

Սակայն պէտք է կարծել, որ մի այդպիսի թւականութեան մէջ, ինչքան էլ նա կատարեալ լինի, հազիւ թէ կարողանայ պարփակել հեղինակի իրաւունքի բոլոր գոյութիւն ունեցող առարկաները, առաւել ևս այնպիսիները, որոնք կարող են ծնունդ առնել ժամանակի ընթացքում. և արդարացի է նկատում Տաբաշնիկովը, որ «այդպիսի մասնաւոր թւումները, ընդհանուր սահմանման փոխարէն, գործնականի մէջ յաճախ հասցնում են շատ նշանաւոր տարածացնութիւնների և նոյն իսկ պարծառ են դառնում,

որ աջնդիսի տառականն, որոնք՝ իրենց բնաւորութեամբ և անտե-
սական յատկութիւններով՝ պէտք է միակերպ օրէնքի պաշտպանու-
թեան ենթակայ լինէին, ինչպէս են օրէնքի մէջ յիշարարւածները,
մնում են առանց օրինական պաշտպանութեան: Այսպէս թէ
աջնդէս, օրէնսդրութիւնն իր հովանաւորութեան փակ է աւնում
գրական երկերի վերոյիշեալ առանձին փեսակները: Դիմենք նրանց
Ռուսական օրէնքն աջնքան զիջողաբար է վերաբերում հաւաքածուի
կերպարանք ունեցող աշխարութիւններին, մասնաւոր խրեարմա-
տիւններին, որ հազիւ թէ կարելի լինի այդպիսի հրապարակու-
թիւններ կազմողին մերկացնել ու բիշի հեղինակութեան իրաւունքը
ոյնակոխ անելու մէջ: (420 յօդ. յաւելւած 14) Այս նկարմամբ օտար
օրէնսդրութիւնների մեծամասնութիւնը պահանջում է, որ գոնէ
մասնանիշ անւի վերցրած յօդւածների ալբիւրը, որպիսի բան
մենք չենք փեսնում վերոյիշեալ յօդւածում: Բացի այս, Շերշենեւիչի
կարծիքով, «այդ փեսակ հաւաքածու աշխարութիւնների, կրճա-
տումների, համառօտութիւնների վերաբերմամբ օրէնքը ոչ մի շե-
կավարող որոշում չէ փալիս, եթէ կրճատումը ներկայացնում է ու-
րիշի հեղինակութեան փոխադրութիւնը՝ սեպհական խօսքերով»: Օրէնքը,
յիշուի, չէ յիշում այդպիսի համառօտութիւնների մա-
սին, որոնք մի այլ գրքի բովանդակութեան կրճատումն են ներ-
կայացնում: սակայն պահպանելով հեղինակի իսկական շահերը, իբրեւ
օրինակ կարելի է բերել այսպէս կոչւած ռեպիտիտորիումները (շա-
սախօսութիւնների կրճատ շասընթացները), այսպիսի հրապարա-
կութիւն է Բոկլի «Քաղաքակրթութեան պատմութիւնը Անգլիայում»
գրքի նոսրացրելի փոխադրութիւնը: հազիւ թէ օրէնքը կարողանայ
բոլորովին ապահովել հեղինակի շահերը, պահանջելով որ հաւաքած-
ուները վերցնելիս միաժամանակ պահպանւին երկու պայմանները: առա-
ջին որ այդ մէջ բերւած կտորները բոլորք միասին գրքի երրորդ
մասից աւելի չլինեն, և երկրորդ որ հեղինակի բնագիրը երկու-
անգամ աւելի մեծ լինի քան մի որեւէ է գրքից վերցրած քաղ-
ւածները: Այս երկրորդ պայմանը, մեր կարծիքով, կարող է առաջ
բերել զանազան մեկնութիւններ, նայելով թէ ինչ ենք հասկա-
նում «բնագիր» խօսքով: Եթէ օրէնքը պահանջում է, որ հեղինակն
երկու անգամ աւելի շարադրած լինի, քան որեւէ գրքից վերց-

բաժնի հատուածները, այն ժամանակ շատ քիչ էին այդպիսի պահանջները հիմնադր ներկայանալու ամեն մի քաղաքական կարելի է հանդիպել լուրջ հեղինակութիւններին, որոնց մէջ մի որոշ հարցի մասին վիճարկութիւն է բերւած մի այլ զբաղման, բայց և այնպէս հեղինակի կողմից այդ հարցի վերաբերմամբ երկու անգամ աւելի նիւթ աւելացրած է, որպէս պահանջում է օրէնսդրութիւնը: Իսկ եթէ օրէնքը թույլ է տալիս, որ ամբողջ հրատարակութիւնը երկու անգամ աւելի մեծ լինի, քան որի է զբաղման վերցրած քաղաքացիները, այն ժամանակ կարող են լինել շէտքեր, երբ ամբողջ հրատարակութեան մեծագոյն մասը զանազան զբաղման վերցրած վիճարկութիւնների կամ հատուածների հիւսւածքը կ'ներկայացնէ և, կարծում ենք, որ վերցրած բոլոր քաղաքացիների գումարը յամենայն շէտք կարող է մի որ և է զբաղման առած հապտածներից երկու անգամ աւելի լինել: Իսկ եթէ ենթադրենք, որ հեղինակի բնագիրը խօսքը քաղաքացիների համար չէ տալիս, այլ ինկարի են առնւած լուր հեղինակի սեպական արտայայտութիւնները, այդ շէտքում վերեւում իբրեւ օրինակ վերցրած քաղաքացիների կազմւած գիրքը ներկայանում է մի աւելի և նոյն իսկ մի քանի այլ հեղինակների հեղինակութեան իրաւունքի զիջումներ: Մեր կարծիքով, նպատակադրմամբ կը լինէր այսպէս մեկնել, որ օրէնքը ի հարկէ, թույլատրում է շարադրութիւններին մէջ քաղաքացիների կապարել, բայց պահանջում է որ այդպիսի աշխատութիւնը մի զբաղման վերցրած քաղաքացիներից զատ պարունակէր երկու անգամ աւելի կողմնակի նիւթ, որպիսի շէտքում օրէնքի համար միևնոյն է, թէ այդ նիւթը այլ քաղաքացիներից է բաղկացած, թէ հեղինակի սեպական արտայայտութիւններից:

Հեղինակութեան իրաւունքի տէրերի շարքում առաջին օրէնսդրութեան սեպակէտից քննելիս չիշենք որ հեղինակների հետ հաւասար կերպով թարգմանիչներն ու հրատարակիչներն էլ հանդէս են գալիս իբրեւ անկախ տէրեր հեղինակութեան իրաւունքի և որ նրանց իրաւունքներն էլ պաշտպանւում են նրանց ամբողջ կեանքի ընթացքում և ՏՍ Կոմիտէն էլ մահից յետոյ: Այստեղ աւելորդ չի լինիլ չիշել և այն, որ կառավարիչ սենատի վճռադիր որոշման համաձայն թարգմանութիւնների ազատութիւնը ճանաչւում է

նոյն իսկ առանց հեղինակի համաձայնութեան, բայց 420 յօդաւոր չաւելաւոր 16-դ հարաւոր հիման վրայ մի անգամ թարգմանաւոր գրքի նոր թարգմանութիւնը թարգմանչի իրաւունքների շէմ գործել կը համարուի, եթէ նոր թարգմանութեան երկու երրորդը կարգով բառ առ բառ վերցրած է նախկին թարգմանութիւնից, որոնք շեռ կազմում են մի ուրիշի բացառիկ սեպականութիւնը: Այսուամենայնիւ թարգմանութիւնների ազատութեան սկզբունքը կատարելապէս չէ պահպանուում ուսական օրէնսդրութեան մէջ, օրինակ նա չէ տարածում աշխարհի հեղինակութիւնների վրայ, որոնց համար, օրէնքի ասելով, անհրաժեշտ են եղել առանձին գիտնական հետազօտութիւններ: աշխարհի գիտութեան աշխարհութիւնների հեղինակները իրենց են վերապահում թարգմանութեան իրաւունքը, եթէ այդ մասին յայտնում են բնագրի հրատարակութեան ժամանակ և բնագիրը լոյս ընծայելու համար գրաքննական ատեանից թոյլատրութեան փոխալը ստանալու օրից երկու տարւայ ընթացքում իրենց թարգմանութիւնն են ներկայացնում: Այս պայմանների պահպանութեան գէպքում միայն օրէնքն ապահովում է հեղինակի թարգմանութեան բացառիկ իրաւունքը: Որոշ չափով ուսական օրէնսդրութեան ուղարկութեանը արժանացել են նաև գրական երկերի այլ ընտրութեան արտ փեսակները, որոնք, սակայն բաւականաչափ ամփոփւած չեն օրէնքի մէջ: Օրէնսդրութիւնը այդպիսի աշխարհութիւններից յիշում է ամսնաւոր նամակները, որոնք հասարակութեան համար չեն նշանակւած, և ամսնաւոր նկարադրութիւններն ու այլ թղթերը, որոնք չեն նշանակւած տպագրութեան համար: վերջիններիս, աշխարհի նկարադրութիւնների հրատարակութեան գէպքում օրէնքը միայն պահանջում է հեղինակի համաձայնութիւնը, իսկ եթէ նա մեռել է՝ նրա ժառանգների թոյլատրութիւնը: Ի հարկէ, այդ այդպէս է. բայց ամսնաւոր նամակների վերաբերմամբ օրէնքը ընդհանուր կերպով է խօսում, առանց նրանց բովանդակութեան արժէքը գնահատելու. բանն այն է, որ օրէնսդրութիւնը այդպիսի նամակների հրատարակութիւնը թոյլատրում է միայն նամակների հեղինակի և ստացողի մէջ կայացած փոխադարձ համաձայնութեան հիման վերայ, իսկ նրանց մահից յետոյ՝ նրանց ժառանգների: Սակայն հազիւ թէ հնարաւոր լինի բոլոր ամսնաւոր

քաղմագան նամակների հրապարակութիւնը կապել նաեւ նրանց սրացողի անպայման համաձայնութեան հետ անկախ այն բանից, թէ այդ նամակներն արդեօք արժէք ունին հասարակութեան համար կամ, դուցէ, հեղինակը իր պատիւը պաշտպանելու համար անհրաժեշտ է համարում նրանց հրապարակութիւնը: Ռուսական օրէնսդրութիւնը, ինչպէս երևում է, փոխադարձ համաձայնութիւն պահանջելով ի նկատի ունէր, մի կողմից, պաշտպանել արտաքուստ հեղինակութեան իրաւունքի շահերը: Իսկ միւս կողմից՝ նամակների տիրոջ՝ սրացողի շահերը: Ուրիշ խօսքերով ասած, օրէնսդրութիւնը կամեցել է միացնել այս երկու շահերը...

Յամենայն դէպս հեղինակի նիւթական շահերը այսպէս կապարելապէս չեն ապահովւում: Բայց եթէ մասնաւոր, դուցէ թանկադին նամակներից օգուտ ստանալու կարելիութիւնը կարող է իրագործւել միայն նամակատիրոջ համաձայնութեան դէպքում, ուրեմն և վերջինս իրաւունք ունի արդիւնքից մաս պահանջել, թէև ինքը ոչ մի անմիջական մասնակցութիւն չէ ունեցել նամակների սրեղծագործութեան մէջ:

Այժմ անցնենք ամենից աւելի տարածւած գրական երկերին, գրաւոր և բանուոր աշխատութիւններին նեղ մտքով վերցրած (շաստխօսութիւններ, ճառեր, քարոզներ): Այս առարկաների վերաբերմամբ ռուսական օրէնսդրութեան մէջ դոյութիւն ունին որոշումներ, որոնք ոչ մի զանազանութիւն չեն դնում նրանց մէջ: Օրէնքի առաջ հաւասարապէս խարդախութիւն կամ օրէնքի խօսքերով ասած Վինքնագլուխ հրապարակութիւն է համարւում, եթէ մէկը առանց հեղինակի համաձայնութեան տպագրէ նրա հրապարակաւ արտասանած կամ կարդացած ճառը կամ մի այլ աշխատութիւնը: Ուստի օրէնսդրութեան տեսակէտից վերցրած օրէնքի հակառակ վարմունք պէտք է նկատուի, օրինակ փաստաբանի և շարախազի ճառերի սղազիր հաշորդումը կամ արանց տուանձին հրապարակութիւնը, եթէ նախապէս այդ մասին յիշեալ անձնաւորութիւնների հաւանութիւնը չէ առնւած: Համեմատաբար աւելի ընդարձակ քաշւածքներ կատարող գրական երկերի շարքին

պատկանում են պարբերական հրատարակութիւնները, լրագիրները և ամսագիրները: Ուրիշ պարբերական հրատարակութիւններից արտատպումներ կատարելու համար լրագիրներին փրւած լայն ազատութիւնը բացաւրւում է լրագրական գործի բացառիկ բնաւորութեամբ: Երբ արգելւում է մի երկասիրութեան արտատպումը, ի նկատի է առնւում հեղինակի կամ հրատարակչի նիւթական շահերի պահպանումը, որը կարող է իրագործել միայն այն Դէպքում, երբ հեղինակին թոյլ է տրւում որոշ ժամանակով օգտւել իւր ծախս հանած երկասիրութեան արդիւնքից, իսկ կողմնակի մարդիկ իրենց հեռու են պահում նմանօրինակ գործողութիւնից: Սակայն միևնոյնը չի կարելի ասել լրագրի վերաբերմամբ, որ ծառայում է օրւայ հարցերին: Ամէն քիչ շարաչքի ընկնող լրագիր շահագրգռւած է միայն այն բանով, որ նրանից վերցրած տեղեկութիւնները կրեն նրա վաճառատան Դրոշմը, որպէս զի հասարակութիւնը իմանայ, թէ ինչ աղբիւրից են նրանք առնւած: Ինչքան չաճախ կրկնւի լրագրի անունը, նոյնքան աւելի կը բարձրանայ նրա նշանակութիւնը, որովհետեւ աղբիւրը չիշատակելով քաղածքներ կատարելը ամենալաւ միջոցն է ուկկամի համար, վաճառատան անունը պարածելու ամենալաւ եղանակն է:

Պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ ռուսական օրէնսդրութիւնը ասում է թէ խարշախոշ է համարւում մի «փոքր նալիփ», որը զրախօսութեան կամ այլ պատրւակով մշտապէս արտատպւում է նաեւ ամենափոքրիկ յօդւածները, նոյն իսկ եթէ նոքա դրուեն մի թերթից պակաս րոշ. բայց, շարունակւում է օրէնքը, «մի թերթից ոչ աւելի մեծ յօդւածի, որպէս նաեւ քաղաքական կամ գրականութեան, զխրութիւնների և գեղարեստների վերաբերեալ լուրերի պատահական արտատպութիւնը որ և է հրատարակութեան մէջ, աղբիւրների ցուցմունքով, արգելւում է»: Հեղինակութեան իրաւունքին ենթակայ գրական երկերի շարքին պատկանող վերոյիշեալ առարկաներից զանո, օրէնքը պահպանում է հեղինակութեան իրաւունքը և այլ այնպիսի նիւթերի վերաբերմամբ, ինչպէս են բառարանները, աշխարհագրութեան քարտէզները, պատմական ցուցակները, ոչ շեցոյցները և այլն:

Անցնելով վերջին, այն է հեղինակութեան իրաւունքի ստացման և ոչնչացման հարցին, կրկնութիւններից խոյս տալու համար մենք պէտք է կանգ առնենք սոյն հարցի միայն այն կարեւոր կէտերի վերայ, որոնք իրենց այս կամ այն լուծումը գտնում են ուսաց քաղաքացիական օրէնսդրութեան մէջ: Հեղինակութեան իրաւունքը ձեռք բերելու հարցը բարդ խնդիր է համարւում այն մտքով, որ նրա մէջ զանազանում են հեղինակութեան իրաւունքը յանձին հեղինակի և հեղինակի ժառանգներին անցնելու և այդ իրաւունքի վերացման բոլորները: Ռուսական օրէնսդրութեան համաձայն, յանձին հեղինակի՝ նրա աշխատութեան հրատարակութեամբ առաջ է գալիս և նրա հեղինակութեան իրաւունքը: միևնոյն ժամանակ հաւաքական արեղծագործութիւնների հրատարակութիւններին ևս նոյնքան իրաւունք է յաւկացւում, որքան և հեղինակներին: Ահաւասիկ երկու կարգի մարդիկ, որոնք օգտւում են հեղինակի այսպէս ասած սկզբնական իրաւունքից, այն ինչ նրա ածանցական իրաւունքի պէրերը կարող են լինել հեղինակի ժառանգները, նրա երկերի հրատարակողները և իրաւաբանական անձնաւորութիւնները: Սկզբնական իրաւունքի նշանակութիւնը կայանում է այն առաւելութիւնների մէջ, որոնք տրւում են այդ իրաւունքն ունեցող հեղինակներին: Ի միջի այլոց սկզբնական թէ ածանցական իրաւունքի տէր լինելը առանձին նշանակութիւն ունի մահից յետոյ մնացած հեղինակութիւնների վերաբերմամբ: Մեզ յայտնի է, որ հեղինակութեան իրաւունքի արտօնութիւնը տրւում է հեղինակի ամբողջ կեանքի ընթացքում և 50 տարի նրա մահից յետոյ:

Իսկ այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ հեղինակութիւնը շառնում է հասարակութեան սեփականութիւն: Եթէ ժառանգները կարողացան մինչև 50 տարին հրատարակել մահից յետոյ մնացած հեղինակութիւնը, այն ժամանակ նրանք ձեռք են բերում հեղինակութեան անւանական իրաւունքը, որը նրանց վերաբերմամբ ոչ ոք ունի մինչև 50 տարի՝ սկսած հրատարակութեան բոլորից: Ենթադրենք թէ ժառանգները ժամանակամիջոցը անցկացրին և երկը շարձաւ ընդհանուր սեփականութիւն: այս դէպքում կողմնակի անձնաւորութեան ձեռքով հեղինակի մահից յետոյ մնա-

ցած աշխատութեան տպագրութիւնը առաջ է բերում հեղինակութեան սկզբնական իրաւունք յանձին հրատարակչի և այդ իրաւունքի չիսնամեաց ժամանակամիջոցը սկսում է ոչ թէ հրատարակութեան օրից, այլ հեղինակի մահւան օրից հաշւելով: Այդ շէպքում հրատարակչի իրաւունքի համար մեծ նշանակութիւն ունի նաև յանձնարարողի և հեղինակի փոխադարձ յարաբերութիւնները քննելիս: Ռուսական օրէնքի տեսակէտից, Սպասովիչի կարծիքով չհանձնարարողը ոչ մի կերպով չէ կարող վայելել հեղինակութեան սկզբնական իրաւունքը, այլ կարող է ստանալ լոկ անւանանիւն իրաւունք, որը նրան զիջանում է հեղինակը: Թէև նա ինքը տւած լինի հեղինակին հեղինակութեան գաղափարը, նրա ծրագիրը և աշխատութեան վերաբերեալ բոլոր նիւթերը: Սպա պիտի նկատել, որ երբ մի երկասիրութիւն կամ ընդհանրապէս գիրք քաղկացած է զանազան յօդւածներից, որոնք միասին կազմում են մի հրատարակութիւն, այդ շէպքում այդպիսի երկի հրատարակիչը և խմբագիրը ձեռք է բերում հեղինակութեան սկզբնական իրաւունքը ամբողջ հրատարակութեան վերաբերմամբ. նաև առանձին կերպով այդ իրաւունքը ստանում են յօդւածների հեղինակները, ոչ սինքն իւրաքանչիւր հեղինակ ստանում է իւր հեղինակութեան սկզբնական իրաւունքը: Այստեղ, այսպէս ասած, երկու տեսակ իրաւունք կայ: Հեղինակութեան սկզբնական իրաւունքը (և իր ածանցականը միայն յանձին ժառանգների) մնացած անւանական իրաւունքների հետ համեմատած այն առաւելութիւնն ունի, որ հեղինակի կենդանութեան ժամանակ նրա երկերը չէ կարելի հրապարակով ծախու հանել առանց նրա համաձայնութեան, ոչ էլ մահից յետոյ՝ առանց նրա ժառանգների հաւանութեան: Այստեղ պէտք է նկատել, որ մէջ բերւած յօդւածը նախատեսում է և այն շէպքերը երբ ձեռագիրները կամ երկրասիրութիւնները շեռ. ծախու հանւած չեն, թէև կարող են տպագրւած լինել: Սրանից կարելի է եզրակացնել, որ եթէ հեղինակի մօտ գտնւին նրա սեպհական երկերը, որոնց մի մասը արդէն ծախու է հանւած, այն ժամանակ մնացած օրինակներն ևս կարելի է հրապարակով վաճառել: Իրաւարանական անձնաւորութիւնները, համալսարանները, ակադեմիաները վայելում են հեղինակութեան լոկ ածանցական իրաւունք այնպիսի

հրապարակութիւնների վերաբերմամբ, որոնք իրենց հեղինակներին կողմից նրանց են յանձնւած եղել. այսինքն նրանք հեղինակութեան իրաւունքի տէր են համարուում 50 տարի հրապարակութեան օրից սկսած: Հեղինակութեան իրաւունքը գոյքի իրաւունքի պէս իր փերօջ մահից յետոյ անցնում է նրա ժառանգներին համաձայն ընդհանուր քաղաքացիական կանոնների -- օրէնքով և կտակով: Ենչպէս արդէն մի քանի անգամ կրկնեցինք, օրէնքը ժառանգներին թոյլ է տալիս օգտուել հեղինակութեան իրաւունքից 50 տարւոյ ընթացքում և մինչև այդ ժամանակամիջոցի լրանալը ժառանգներն ամեն կերպ տէր են համարուում այդ իրաւունքի, այլ հեղինակների նման համահաւասար չափով: Պարտաւորերի պահանջներին գոհացում տալը, հրապարակական ածրոյով վաճառումը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ գրական երկերի վերաբերմամբ հեղինակութեան իրաւունքը երրորդ անձերի ձեռքն է անցել: Այսպէս ուշադրութեան արժանի է այն կէտը, որ քաղաքացիական դատարարութեան կանոնադրութիւնը, իրաւունքի յետագայ ձեւակերպութեամբ, պահանջում է, որ հրապարակելու համար ձեռք բերած ձեռագիրը ծախելիս՝ նոր զնոյր նախապարտաւորի կատարել այն բոլոր պայմանները, որ յանձն է առել ձեռագրի նախկին տէրը: Թէև հեղինակութեան իրաւունքին վերոյիշեալ յայտուկ որոշումների մէջ ոչ մի չիշարակութիւն չկայ այն մասին, թէ հեղինակը կարող է ուրիշին զիջանել իր իրաւունքը, սակայն ուստաց քաղաքացիական իրաւունքի ընդհանուր դաշտի արի հիման վրայ կարելի է եզրակացնել ինչպէս ամենայն իրաւունքից նոյնպէս և հեղինակութեան իրաւունքից հրաժարումը կարող է թոյլատրուել բոլոր օրինական ճանապարհներով ինչպէս և հրապարակով յայտարարելով իր հրաժարումը հեղինակութեան իրաւունքից յօդուտ հասարակութեան, ձրի կերպով ուրիշին յանձնելով իբրև պարգև և որոշ վարձատրութեան փոխարէն ուրիշին զիջանելով առևտուրի փոխանակութեան ձեռով: Հեղինակութեան իրաւունքի մի անձից միւսին անցնելու հարցը ենթադրում է, ի հարկէ, այդ իրաւունքի ոչնչանալը առաջի անձի վերաբերմամբ: Հեղինակութեան իրաւունքի ոչնչացման կանոնաւոր եղանակը համարուում է օրէնքով որոշւած ժամանակամիջոցի լրանալը, բաց ղ ոչնչացումը տեղի է ունենում և

այն ժամանակ, երբ հեղինակը շապարանի վճռով զրկւում է իր քաղաքցիական բոլոր իրաւունքներից, մի վճիռ, որ ստրածւում է մարդու բոլոր իրաւական կողմերի վերայ: Աերջապէս ուստական իրաւաբանական զրականութեան մէջ ցուցում կայ և այն մասին, որ հեղինակութեան արտօնութիւնը վերանում է և այն շէպքում, երբ զրական սեպհականութիւն կազմող հեղինակութիւնը շառնում է հասարակական սեպհականութիւն. իբրև ապացոյց այդ միջի Սպաստիչը մարտնիշ է անում անդլիական այն օրէնքը, որի հիման վրայ կողմնակի անձեր կարող են հրապարակել հեղինակի մահից յետոյ մնացած գրքերը, եթէ նրա ժառանգները անհոգութեան պատճառով չէպի իրենց շահերը կամ չհամակրելով նրա գաղափարին իրենք չհրապարակեն այդ երկերը: Զմյնելով անդլիական օրէնքի քննութեան մէջ, միայն այսքանը կ'ասենք, որ ուստական օրէնսդրութեան նկատմամբ հեղինակութեան իրաւունքի հասարակական շառնալու մասին խօսք չէ կարող լինել, քանի որ այդ հարցի վերաբերմամբ ոչ մի որոշում չկայ ուստական կայսերութեան օրէնքների ժողովածուի մէջ: Գրական երկերի վերաբերմամբ հեղինակութեան իրաւունքի մասին մեր ներկայացրած աշխատութիւնը վերլուծութիւն է ներկայացնում զործադրող քաղաքացիական օրէնսդրութեան, որի հիմքը կազմում է, ինչպէս մենք արդէն առիթ ունեցանք յիշելու, 1828 թ. օրէնքը, որը մինչև 1857 թիւը աննշան փոփոխութիւնների միայն ենթարկեց: Այսպէս ուրեմն վերջին չորս սասնեակների և աւելի ժամանակի ընթացքում ուստական հեղինակութեան իրաւունքի բովանդակութիւնը մնացել է և մնում է անփոփոխ: Այսպիսի մի երկար ընթացքում ուստական հեղինակութեան իրաւունքի պարմութեան մէջ ուստական արդարադատութեան համար աւելի զգալի զանցառութիւն կըթւի եթէ մտաբերենք, որ լոկ վերջին կէս դարի ընթացքում արևմտեան եւրոպայի մեծ ազդեցութեան տակ փոխեցան ուստ հասարակութեան ճաշակը ու ոգեկան պահանջները, զարգացաւ գրքերի փոխանակութիւնը գրավաճառարներում, յայտնեց գրական երկերի նոր տեսակներ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ երկերի այսպիսի դրութեան մէջ, նոր առաջ եկած շատ հասարակական երևոյթները չէին կարող չմերկացնել ուստական քաղաքացիական օրէ-

նսդրութեան մէջ նկատուող թերութիւններն ու կիսադ մոքերը հեղինակութեան իրաւունքի հարցի վերաբերմամբ:

Մեր սոյն աշխատութիւնն արդէն պատրաստ էր, երբ լրագիրներում կարդացինք, որ Քաղաքացիական օրէնսդրութիւնը կազմելու համար կարգւած Խմբագրական մասնաժողովը Պետական խորհրդի քննութեանն է ենթարկել հեղինակութեան իրաւունքին վերաբերեալ կանոնների մի նոր ծրագիր, որի համաձայն պահպանւում է հեղինակի ժառանգների իրաւունքների պաշտպանութեան ներկայումս գոյութիւն ունեցող չիսմամեայ ժամանակամիջոցը: Անփոփոխ է թողնւում և արտասահմանում օտարների ձեռքով հրատարակւած երկերը թարգմանելու ազատութեան վերաբերեալ կէտը: Ընդհակառակը՝ հայրենի հեղինակներին շնորհւում է իրենց աշխատասիրութիւնները թարգմանելու բացառիկ իրաւունքը, մի իրաւունք, որից նրանք այժմ զուրկ են: Սակայն այս իրաւունքը նրանց տրւում է մեծ սահմանափակումներով, այն է՝ ընդամենը տասը տարի ժամանակով և այն պայմանով, որ սեպհական թարգմանութիւնը լոյս տեսնէ աշխատասիրութեան հրատարակութիւնից յետոյ երեք տարւայ ընթացքում: Նշանաւոր կատարելագործութիւն է ներկայանում խարշախութեանց նշանները որոշելու այժմեան մեքենայական եղանակի (երեսների և տողերի քանակութեան համագումարի) փոխարէս շատավարութեան թողնւած մեծ ազատութիւնը՝ ինչպէս այդ նշանները պարզելու հարցում, նոյնպէս և քնասի չափը որոշելու խնդրում: Օտար երկերի արտատպութիւնն արգելւում է միւլնոյն հիմունքների վրայ, ինչ հիմունքների վրայ և հայրենի երկերի արտատպութիւնը. բացառութիւն է արւած միայն օտար երաժշտական երկերի վերաբերմամբ, որոնց արտատպութեան արգելումը վտանգաւոր է համարւած Ռուսաստանում երաժշտական գործի ապագայ զարգացման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵՍՆԻ

Քսաներորդ Դարի շէմքը անցնելով՝ Եւրոպան ունի իր ուսերի վրայ ծանրացած շար մեծ հասարակական բեռն, որի հետեւանքները կրելու, ըստ երևոյթին, վիճակած է շեռ ևս գալոց նոր Դարին։ Խօսքս վերաբերում է աշխատութեան և անգործութեան խնդիրներին, որոնք ծագել են Եւրոպայի փոփոխական-հասարակական պակասաւոր կազմակերպութիւնից։ Մարդկային այն հասարակութիւնները, որոնց փոփոխական գործունէութիւնը շեկավարւում է լոկ շահադիտական սկզբունքով, ուր անհատները ոչ մի միջոցից չեն խորշում Դրամով ձեռք բերելու իշխանութիւն իրենց նմանների վրայ, ուր իսկական չարքաշ աշխատանքի արդիւնքը գրեթէ ամբողջովին ուժեղների սեփականութիւն է դառնում, այնտեղ աշխատութիւնը խորը արմատներ է գցում և ընդունում սպառնալի ձևեր։ Աշխատութիւնը շար մեծ չարիք է, որ չիշեցնում է ժողովուրդներին իրենց փոփոխական կազմակերպութեան խոշոր պակասութիւնը։ Նա այն հասարակական դժբաղդութիւնն է, որ ընդունակ է սե քօշով ծածկելու բոլոր այն ազնիւ գործերը, որ քաղաքակիրթ հասարակութիւնները կարարում են։ Նա անպարտաբեր երևոյթ է քաղաքակրթական տենչ ունեցող ազգերի համար։ Անհոգութեան և անուշադրութեան մատնեւած լինելով՝ նա շար ծաւալւում է և ապականում իր գոյութեամբ ժողովրդական խաւերը։ Ով դիտակցօրէն ըմբռնել է ներկայ փոփոխական-հասարակական պայմանները, ուր կազմուղ ժողովրդական հարստութիւնը չէ բաշխւում Դասակարգերի մէջ արդարութեան պահանջին բաւարարութիւն

պալու կերպով, նա կը համոզուի, որ ուրեմն միմիայն այդ պայման-
 ների կնարարանափոխումը կարող է չեղոքացնել կամ մեծ մա-
 սամբ նոյն իսկ անհետացնել աշխատութիւնը: Մենք պնդում ենք
 առանց երկբայելու, որ արդարութեան սկզբունքը մի օր պիտի
 յաղթող հանդիսանայ և իշխի մարդկանց գործերի վրայ: Սակայն
 մենք կարծում ենք, որ իրերի այս ուղղութեամբ ընթացող զար-
 գացման միջոցին՝ հասարակութիւնների պարտքն է սահմանել այն-
 պիսի հիմնարկութիւններ, որոնք մի կերպ ամփոփելով և շարմանե-
 լով մեր մեծ ցաւին՝ իրենց ներգործական շերտով մերձենում են
 արդարութեան պահանջին և անշուշտ պիտի համարեն իբրեւ
 նպաստող գործոններ չքաւոր շասակարգի կացութեան փոփոխ-
 մանը: Աշխատութիւնը առաջ է զալիս ուղղակի անգործութիւնից: Ար-
 դիւնաբերութեան կենտրոններում աշխատաւոր շասակարգը խորա-
 նում է և պահանջում գործ: Յայտնի է, որ գործարանատէրերը շնոր-
 հիւ մեքենաների կաւարելագործման և նորերի ներմուծմանը՝ էլ
 չեն պահանջում նոյն չափով մարդկային աշխատանքի ոյժը, այն-
 պէս որ բազմաթիւ անգործ մնացած աշխատաւոր ձեռքերը իրար
 հետ մրցելով գործ ճարելու համար՝ շատ նւաղեցնում են իրենց
 օրավարձի գինը: Վարժ բանւորները շեռ ևս էլի գործ են ճարում,
 իսկ անվարժները մնում են անգործ, այնպէս որ աշխատութիւնը
 նոցա միակ ապաստարանն է շաւնում: Հէնց վարժ բանւորները այնքան
 վարձ չեն ստանում իրենց աշխատանքի համար, որ նոքա գոնեա
 բաւականացնէին մարդավայել ամենահասարակ պահանջները: Նո-
 ցա բազմամարդ ընտանիքները շեղիւրում են գրեթէ միշտ աշխա-
 տութեան մէջ, նամանաւանդ երբոր նոցա ապրուստ հայթայթողը
 մեռնում է: Աշխատութիւնը անպետական պայմանների արդիւնք է,
 իսկ անգործութիւնը այդ պայմաններից է առաջանում, որոնք
 շուկաներում կուտակուող մարդկային արդիւնաբեր ոյժերը աւելորդ
 են դարձնում: Աշխատ և անգործ մարդիկ աւելի ևս շարմանում
 են, երբոր այդ պայմաններին միանում են պարբերաբար անբերու-
 թիւն, հեղեղներ և նման դժբաղդութիւններ, որոնք պաճառ են
 դառնում մեծ քանակութեամբ չքաւոր գիւղացիներին թափառել և
 գաղթել են Իտալիա, Դէպի քաղաքներ, ուր նոցա համար գոյու-
 թեան կռիւը միմիայն յետին չքաւորութեան շուռն է բացում:

Աշխարհութեան հետ սերտ կապ ունի բանւորական խնդիրը: Եւրոպացում այսպէս կոչւած բանւորական միութիւնները նպատակ ունին պաշտպանել իրենց շատակարգացին շահերը կապիտալի բռնութեան դէմ, որը տասնապատիկ շահելու նպատակով իջեցնում է բանւորների վարձագինը: Բանւորական միութիւնները անշաշար կռիւ են մղում գործարանատէրերի կամայականութեան դէմ վարձագինի վերաբերմամբ: Նոքա աշխատում են վարձագինը մի յայտնի աստիճանի վրայ պահպանել՝ անվարժ անգործ բանւորների կատաղի մրցման հակառակ, որ աշխատում է շատ իջեցնել շուկաներում եղած վարձագինը: Այսպէս ուրեմն միութեան ուժերով զինւած՝ նոքա ընդդիմադրում են կապիտալիստ արդիւնաբերութեան հետեւանքներին, որոնք անգէն աշխատաւորների գոյութիւնը լուծում են միմիայն աշխարհութեամբ: Բաց ինչ պիտի անեն այն բազմութիւ մարդիկ, որոնք չիշած պայմանների զօրութեամբ ընկել են աշխարհութեան մէջ և անօգնական են, անվարժ լինելով մի բան անելու, ոչ մի գործ չեն ճարում և չգիտեն թէ ում դիմեն սովամահ չլինելու համար: Ում սիրտը զուրկ չէ մարդկային արժանաւորութեան զգացմունքից, հա չէ կարող սառնասիրտ նայել և չբողբել այդ սոսկալի երկուցթի դէմ, որի հետեւանքների մասին վայրկենաբար մտածելիս՝ մարդս գրեթէ մոռանում է սցիալական այն բարիքները, որոնցով հպարտանում են քաղաքակիրթ ազգերը: Հասարակութիւնները պարտաւոր են իրենց կարգերից ծագող այդ համաճարակ ցաւին դարման անել: Այդ գործի համար եւրոպական երկիրներում սահմանւած են նաեւ աշխատանքի տներ, ուր ընդունւում են չքաւոր ու անգործ և անօգնական մարդիկ վարձով բանելու և զանազան գործերի և արհեստների վարժելու նպատակով: Այսպեղ ուրեմն չքաւոր մարդիկ գտնում են իրենց համար գործ, որ նոքա երբեմնայէս փրկում է կատարեալ կորստից: Խօսքս չի վերաբերում իսկական աշխատանոցներին, որոնք մուրացկանների բուն են դարձել: Խնդիրը աշխատանոցների մասին է, որոնք պիտի գործել և աշխատել տան աշխարհութեան մտնւած մշակ շատակարգը, որ հալածւում է ներկայ հասարակական պայմանների մէջ: Աշխատանոցները մի քանի երկիրներում այն բաւարար աստիճանի վրայ են, որ նոքա կարողանում են անօգնական

մարդուն ուրի կանգնեցնել և նորա հացը հայթայթելու ճանապարհը հարթել: Նոքա զանազան տեսակի են: Ոմանք նոցանից գործ են տալիս իրենց շինող անգործ մարդկանց, վարձագնով, որ միաժամանակ վարժեցնում է մի որ և է արհեստի, նալած թէ մի ինչին է ընդունակ երևում: Աշխատանոցներում ընդունաձները զիշերթիկ են կամ երթեկէ: Նոցնպէս ընդունւում են երեսաներ, որոնք այդ հաստատութիւնների մէջ կարարեալ արհեստ են սովորում: Առատարակ աշխատանոցներում պարտաստում են այնպիսի արդիւնքներ, որոնց համար շուկաներում մեծ պահանջ կայ: Աշխատանոցները նորագոյն ձեւի խնամող հաստատութիւններ են, որոնց աջակցում են հասարակութիւնների խոշոր նպաստները: Նոցնպէս քաղաքները և պետութիւնները փորձնական քայլեր են անում մասնակցելու այդորինակ գործերին: Այսպէս զնալով՝ աշխատանոցները կը կորցնեն իրենց այժմեան բարեգործական բնաւորութիւնը: Նոքա կը շատնան հասարակական անհրաժեշտ հաստատութիւններ, որոնց սլաշօնը կը լինի պաշտպանել և հովանաւորել աշխատաւոր շատակարգը անգործութեան շէպքերում, որ նորան շփաշղացնում են: Բայց այդ ապագայի գործը լինելով՝ ներկայ համեմանքներում հասարակութիւնները պարտաւոր են աշխատանոցներ հիմնել և մշակած արդի ձեւերով օգնել աշխատացած մշակին:

Թէ որ չափով աշխատանոցները բաւարարութիւն կը տան աշաղակող պահանջներին, որ իրականութիւնը առաջադրում է, դա կախած կը լինի նոցա ներքին կազմակերպութիւնից: Մենք իսկպէս չենք համակրում այն ձեւի բարեգործութեանը, որ ողորմաբար վայրկեանական օգնութիւն է հասցնում կարօտեալներին, որոնց մեծ մասը մուրացող աշխատողներ են: Այդպիսի բարեգործական օգնութիւնը բացասական է, մինչև անգամ վնասակար, որովհետեւ սպասածին հակառակ արդիւնք է տալիս: Մեծ պահանջ է զգացում այնպիսի հաստատութիւնների, ուր շինարար կարօտեալը չափաչէ և իմանայ, որ այդ տեղերում ոչ մի օգնութիւն ձրի չէ տրուում, այլ աշխատանքով է ձեռք բերում, որից նա ժամանակաւորապէս զրկւել է: Մեզնում բարեգործական ընկերութիւնները չեն վայելում ցանկալի ժողովրդականութիւն: Նոցա

գործերը չեն թողնում մնացուն հեղքեր հասարակական զիտակցութեան մէջ: Վերջինս պիտի արթուն պահել այնպիսի գործերով, որոնք համակրութիւն վայելելով հանդերձ, հրապարակ բերեն նիւթական զոհողութիւններ՝ օգնութեան գործին ժամանակակից պահանջի համեմատ կերպարանք տալու: Ինչպէս տեսնում էք, անելու շարք բան կայ, և միայն անհեռադեսութիւնն և կարծամբութիւնը թերեւս ոմանց թելադրում են ասելու թէ ինչ կարող են այսուհետեւ անել մեր բարեգործական ընկերութիւնները: Ի հարկէ մենք չենք սպասում աշխատանոցներից կտրաբեալ փրկութիւն չքաւոր շասակարգի համար, որի շփաշղութիւնը առաջ է եկած ժողովրդական փորձութեան օրգանական պակասութիւնից. մենք կարծում ենք, որ ժողովուրդների փորձասական և հասարակական զարգացումը կը սպեշծի այնպիսի պայմաններ, որոնք կը կերպարանափոխեն այժմ գործող աշխատանոցները և կը չարկացնեն նոցա խնամող և բարեգործող բնաւորութեան տեղ՝ շասակարգային շահերի պաշտպանի շերտ: Հէնց այս աստիճանին նրանց հասցնելու համար՝ հասարակութիւնները պարտաւոր են հարթել ճանապարհը: Սա մի գործունէութիւն է, որ կը զարթեցնի մարդկանց մէջ համակրութիւն գէպի սպորադիկների անհրաժեշտ ապահովութիւնը ժամանակակից պահանջների համեմատ:

Ռուսիայում 1882 թւականի սկզբից են հիմնւել աշխատանոցները, որոնց թիւը տարեցտարի աւելանալով՝ հասած էր արդէն 1898 թ. 130-ի: Նրանց մէջ այսօր կան այնպիսիներ, որոնք օժտւած են խոշոր կարողութիւններով. օրինակ ռուսաց Կրոնշտատ քաղաքում 1896 թւին հիմնւած աշխատանոցը ունի 400.000 ռ. Դրամով և 350.000 ռուբլի արժեցող անշարժ կապքեր: Խոշոր կարողութիւն ունեցող աշխատանոցները զոհնում են նոյնպէս Պետերբուրգ և այլ ռուսական մեծ քաղաքներում: Աշխատանոցներում ընդունւում են երկու սեռի մարդիկ և շատերի մէջ նոյնպէս երեխաներ, որոնք բացի արհեստներ սովորելուց՝ տարրական կրթութիւն են ստանում: Արհեստներին անվարժ մարդկանց տալիս են փոքրիկ վարձագնով մասուցելի և թեթեւ աշխատանքներ. իսկ վարժ մարդկանց աշխատեցնում են լուրջ արհեստներով՝ ինչպէս արաղձագործութիւն և այլն, որոնց համար խոշոր կապիտալ ունեցող

աշխատանոցները սահմանում են արհեստանոցներ: Յամենայն դեպս աշխատանոցները արդիւնաբերում են այնպիսի ապրանքներ, որոնց համար շուկաներում մեծ պահանջ կայ, ինչպէս կարգոնի արկղիկներ, որ արագութեամբ են ստորաւարտում: Աշխատանոցներում գործ զգնող չքաւոր մշակ մարդիկ մեծ մասամբ թերուս կամ անուս են: այց ինչ կ'ասէք դուք այս ապշեցնող երեոյթի մասին, երբոր դուք նկատում էք և հանդիպում արւարածիւ ուսում ստացած մարդկանց, որոնք գործ չզգնելու պատճառով, չքաւորութեան դռան մօտ են: Կապիւրալիստական հասարակութեան այս չարիքը ստորացնող և անպարւարեր է: Սա մի ապացոյց է, որ ամենքից դուրս աւաճ և փայփայած ուսումը գոյութեան կռւի ներկայ պայմաններում չէ ապահովում մարդկանց ընկնելուց և կորչելուց: Ձէ որ մտաւոր կոչւած պրոլէտարիատի այսօրինակ անկումը ոչ միայն անպարւարեր է, նաև անտանելի է հասարակական և բարոյական փեսակէպներից: Պետերբուրգում գոյութիւն ունի մի աշխատանոց, ուր ընդունում են միայն ուսում ստացած անգործ մարդկանց, որոնց տրւում են, հարկաւ, իրենց մտաւոր զարգացմանը համապատասխանող պարապմունքներ — կազմել նախագծեր, մակարդակներ, քարտէզներ, թարգմանութիւն անել և այլն: Աշխատանոցների տւած դրական օգուտը դառնում է տարեցտարի շօշափելի: Նոցա թիւը աչտուհետեւ պիտի աւելանայ: Ռուսիայում առաջարկւած են իշխանութեանը 50 նոր այդպիսի հիմնարկութիւններ հաստատելու *):

Տնտեսապէս աշխատասէր և ապահովութեան համբաւ վնջելող հայ հասարակութիւնը պիտի նոյնպէս ջանայ օժտել իր բարեգործական ընկերութիւնները խոշոր նպաստներով այդպիսի աշխատանոցներ բանալու համար: Այլ ևս մեր բարեգործական ընկերութիւնների կարարած կամ կարարող գործերը մեր աչքում անբաւարար են և չեն համապատասխանում լիովին այն նպատակին, որ ժամանակակից պահանջները առաջ են դնում *): Գործունէութեան

*) Արպէս լազոնի է, Ռուսիայում այդ կարգի աշխատանոցները գործում են Կալուգինի Ալեքսանդրա Ֆէոդորովնայի բարձր հովանաւորութեան ներքոյ:

*) Թիֆլիսի Հալոյ Բարեգ. ընկերութիւնը նորերս վճելոց աշխատանոց բանալ:

ձեերը միայն չեն կարող մնալ և պիտի մի կերպ փոխւին։ Պէտք
 չը կայ մուրացող մարդկանց օգնել, այլ զխաւորապէս փրկելու մի-
 ջոց տալ նոցա, որոնք գտնուում են անշուշտ տանող ճանապարհի
 վրայ, որ բաց է անում նոցա համար մուրալու վարակիչ ար-
 հեստը։ Պէտք կայ աշխատանքով կրթել մարդկանց և արհեստով
 պահպանել նոցա մէջ աշխատանքի այն սէրը, որ զօրացրել էին նիւ-
 թական գոյութեան աշաղակող պայմանները։ Բարեգործական հնա-
 ցած ձեերի օգնութիւնը ներշնչանակ չէ թւում հասարակական
 տրամադրութեանը և նորա ներկայ հայեացքին։ Հասարակական-
 համայնական աշխատանքները անհրաժեշտ են, ուր աշխարացած
 մարդը առանց քաշելու և ամաչելու շիմէ գործի համար, որ
 կ'ազապի նորա ինքնապաշտպանութեան սիրտն ու ոգին։ Նորա-
 գոյն պնդեսական գիտութիւնը, որ խիստ քննութեան է ենթար-
 կւած ներկայ պնդեսական պայմանները, հակառակ չէ աշխատանոց-
 ների այդ ձեերին, որոնք ապագայում խոշոր պաշտօն կը կատարեն,
 եթէ միայն հասարակութիւնները այդ գործին նպաստեն և յետ չը
 մնան իրան շուրջ գգացնել տող շրական պահանջից։ Անգործու-
 թեան խնդիրը Եւրոպայում սուր կերպարանք է ստացել և ամե-
 նալուրջ գրականութիւնը բազմակողմանի ուսումնասիրութիւններ է
 նւիրում խնդրի լուծումն յաջողացնելու համար։ Եւրոպայի պայ-
 մանները անկասկած ուրոյն են և չարուկ եւրոպական կապիտալիզ-
 մին, որ իր զարգացման գագաթնակէտում է։ Մենք կարծում ենք,
 որ պնդեսապէս յետամնաց երկիրներում աշխատանքները կարող
 են մի գործ կատարել, որ շատերի շրութիւնը զգալապէս կը թե-
 թեացնի։ Այդչափ գործունէութիւնն էլ քիչ չէ և արժանի ամե-
 նայն համակրութեան և յարգանքի։ Թող չվհարեն այն մարդիկ
 և հասարակութիւնները, որոնք երևոյթի իսկութիւնը ըմբռնելով՝
 վճռել են գործել յօգուտ չքաւոր շատակարգի, որ լուռ կերպով
 կրում է գոյութեան անհաւասար կուրի հալածանքները։ Թող պար-
 ծենան այն հասարակութիւնները, որոնք ցոգորւած արդարութեան
 սկզբունքով նոյն իսկ մի քիչ թեթեւութիւն են պարծաւում այդ
 շատակարգի թշուառ շրութեանը։

Գ Ր Ա Ն Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ԽԱՏԻՍԵԱՆ, Մարիամ—ԳԺԲԱՅԻՍ ԿԻՆՈՒ ՎԷՍԿ, ՀՐԱՐ. ԹԻՖԼԻՍԻ Հ-
ՀՐԱՐ. ԸՆԿ. № 156. ԹԻՖԼԻՍ, ԿԱԿԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՐԻՆԵԱՆԻ: 139
ԵՐԵՎ. 1899 թ.

Սրանով չորրորդ վէպն է, որ
հեղինակը ընծայում է հալ ընթեր-
ցողներին. 1) Հեղինէ, երկու մասից
(արտադրած Մուրճ-ից, 1892 թ.).
2) Նոր ճանապարհի վերալ, վէպիկ.
(Մոսկւա 1894). 3) Փեսալ որսող-
ներ, վէպիկ. (Թիֆլիս, 1899) և 4)
ԳԺԲԱՅԻՍ ԿԻՆՈՒ:

Ութ տարին (1892—1899 թ.) և
վէպերի իրար լաջորդելը մի ֆաքտ
է, որ մարդի մտածել է տալիս, ար-
դեօք լառաջադիմութիւն նկատում
է հեղինակի մէջ կամ գրածքի ար-
ժանաւորութեան տեսակէտից, կամ
չօչալիւս խնդիրների առաջութեան
ու բազմակողմանիութեան տեսակէ-
տից: Երբ աչսպէս քննելու լինինք,
ու նաչենք չորս գրածքն էլ ժամա-
նակագրական կարգով, աչքի կընկնի
հետեւեալը. որ հեղինակը չար մոնո-
տոն կերպով դրաշում է անհամա-
պատասխան էակների ամուսնութիւ-
նից առաջացած բարդութիւններով
և աչխադում է մի ելք գտնել: Երի-
տասարդներ իրենց լա խօսքերով,

իրենց լառաջադիմական և հասարա-
կական շահերի ծառաւոր ներկայաց-
նելովը դրաւում են հարսնացու և
նրանց կամ շաւաճանում են (Նոր
ճան. վերալ), կամ փոխում են իրենց
լարաբերութիւնները շէպի կինը և
անտանելի կեանք ստեղծում (Հեղի-
նէ) կամ կնոջ հարստութեան վերալ
իրաւունք ձեռք բերելուց չնորո-
կնոջը արհամարում, րանջում, մինչև
ինքնասպանութեան են հասցնում
(ԳԺԲԱՅԻՍ ԿԻՆՈՒ). Զանազան ամուս-
նութիւններ է, որ ներկայացնում է
մեզ հեղինակը, ի հարկէ դրանց բա-
ցասական կողմերը մեր աչքի առաջ
դնելու համար, միևնույն ժամանակ
դրանց հակադրելով լաջոր կերպով
ամուսնացած զուգեր, որոնք ապ-
րում են րադրականների նման շուն-
շունալով և թեկնները իրար քսելով.
կարծես կեանքում միալն կամ ծալ-
րաչել շԺԲԱՅԻՍ պիտի լինի ամուս-
նութիւնը կամ ծալրաչել երջանիկ,
իդիլիականութեան հասցրած: Ապա
շԺԲԱՅԻՍ ամուսնութիւնների մէջ ինչ

մեծ դեր է կատարում օրիորդների խնտրիտուտային կրթութիւնը՝ ինչպէս պ. Արարկեորը իր գրած քննորով աշխատում է մարդկանց հաւատաշնել, որ եթէ կաթոլիկները վճռաբար թուրքաց հայերի միջից աշխարհ աշխարհակալ իրաւաւորութիւն կը տրի, աշխարհ էլ Տ. Մարիամ խաղաղութեանը կարծում է, որ եթէ խնտրիտուտները չլինեն, մեր կանաչ միանգամով կը յառնան հիւնալի տանով կիներ, կը սկսեն լուրջ սիրել, լուրջ կը վերաբերեն շէպի իրենց ամուսնական պարտականութիւնները և չեն յաւատարմի իրենց ամուսններին։ Այլ, իսկը սա է որ հարկաւոր է ձուլը գլխից բռնել, թէ չէ խնտրիտուտների ազդեցութիւնը չէզոքացնելով կարիքի քանի հազարերորդ մասը բուժած կը լինենք։

Վէպերից երկուսը՝ Հեղինէն և Նոր ճանապարհի վերան չափ լուսաւոր վերջաբանութիւն ունին։ Հեղինէն ամուսնուց բաժանելուց լեռնային լաւոյնքում է իր սիրած մարդի հետ միանալ նոյն իսկ չորհուրով երեխան իր մօտ պահելու իրաւունքից։ Իսկ Լիզան (Նոր ճան. վերա) նշանածի յաւատարմութիւնից չեղող իրեն ներում է հասարակական գործունէութեան, սկսում է յարգող կառավարել, ապա գնում է Եւէջարիա մանկավարժութիւն սովորելու եթէ Հեղինէն չհեղինակը մեզ ուզում է ասել, թէ ներկա հասարակական կազմակերպութեան ժամանակ հարաւոր է ամուսնուց բաժանել և իր երեխան էլ նոյն իսկ մօտը ունենալ, միայն թէ կինը տոկաւ, համբերի ներութիւնների, զրկանքներից չը

վնասուի, կարծում ենք նա խնդիրը շարունակ լուծած չի լինում, քանի որ հենց ինքը իր միւս վէպում, «Դրժբաշէ կին», անլաջող ամուսնութեամբ կապած մի կնոջ համար ուրիշ եւք չի դրնում բացի ինքնասպանութիւնից։ Իսկ եթէ ասենք, շարունակ եղակի շէպեր են, և իրենցով լուսաբանում են խնդիրը ալ կամ ալ կողմից, ալ շէպում շարունակ մեզ ներկայանում են շատ զուգ զեղարկատական արժանիքից և բռնադատելի կերպով ալ կամ ալ վախճանին լանգեցրած։

Արժանիք կը ներկայացնէին ալ զրածնները, եթէ խնդիրը պարզութեամբ լինէր, աւելի բնական դիրքով կը անլաջող ամուսնութեամբ կապած կնոջ շարունակ ներկայանար իր իսկական անելանելի վիճակով, թող շարունակ Հեղինէն ստիպւած լինէր նոյն իսկ վերաշառնալ իր ամուսնու մօտ և քաղ տար իր անտանելի վիճակը, ոչ ոք սրա համար հեղինակին չէր մեղադրի լեռնային մութեան մէջ, ալ պարզապէս կանխէր—անա մի պարկեր, մի թըւաւ արարած, որ ժամանակակից հասարակական անկանոն կազմակերպութեան շնորհիւ ստիպւած է իր գոյութիւնը անցկացնել շառնարկներով։ Եւ իրականութիւնն էլ սա է. քանի որ ամեն կին, ինչպէս Հեղինէն, չի կարող ունենալ իշխան Եւկոնու նման մի քննի, որը նրա համար ապահովաւ լաւ շնորհակալ մասին մտածէ՝ օրինակ հենց Մարիամը (Դրժբաշէ կին)։ Մի թէ անլաջող ամուսնութիւնից վերջրած մի իրական պարկեր, որ չու

նենալ սրանց նման բռնազբօսիկ վերջաւորութիւն, պակաս պաշտպանական ձալն կը լինի լոգոսի կանց շատիւ:

Բացի սրանցից՝ պիտի ասել, որ հեղինակը բաւական անշաջող կերպով է ստեղծում հանգուցներ և լուծումներ: Պարզ նկատելի է, որ ամբողջ գրածքը գրի առնողներուց առաջ ամբողջութեամբ իբրև մի պատկեր գոյութիւն չի ունեցել հեղինակի հոգում: Նա խորը չէ թափանցել իր ներկայացրած երևութիւնով և դիպերով: Նրբոր և է յէպք կամ երևութիւն հրապարակ է գալիս ալս կամ ալն քալն անել տալու, ալս կամ ալն հետեանքն առաջացնել տալու համար, յա պիտի արհեստական չլինի, պիտի հեղինակը աչքան իտր թափանցած լինի իր պատկերացրած կեանքով, որ ալ յէպքերին ինքը հաւատալ իբրև իրողութեան, որ յրանք նրա համար արհեստական կերպով մէջ բերած, թքով կոպրած չլինին: Դիկիէնսի մասին ասում են, որ նա ծիծաղում էր, երբ իր հերոսները ծիծաղում էին, և լալիս էր, երբ հերոսները լալիս էին: Թէ չէ՝ որպէս զի Սահառունին (Հեղինէ) ալրի մնալ և Հեղինէն կարողանալ ձգտել նրա հետ ամուսնութեամբ ընդ միշտ կապելու, հեղինակը մի անսպասելի և ծիծաղելի յէպքով էլ նահադակ է անում Սահառունու կողմը: Նրբի ալսորի հասնելիս հեղինակը մտածել է—հարկաւոր է, որ Սահառունին ալրի լինի (խել նրան ամուսնացրել էր, երեխ, որ ցոյց տալ թէ ինստիտուտից յուրս ձկած մի աղջիկ ինչպէս անընդունակ է լալ կին լինելու) ու որոշել է.—լաւ, կը գրեմ թէ զբօսանքից վերադառնալիս կառքի ձիերը փախցըրին, Սահառունու կինը վախեցաւ, հիւանդացաւ և մեռաւ իր մէջ մեռցնելով և Սահառունու ժառանգին: Եւ ալս տեսակ բաներ չադ են. տանից յուրս են գալիս, «հէնց փոշոցում» պատահում են ցանկացած մարդին. և մի անգամ չէ, ամեն անգամ, երբ հարկաւոր է: Սա ուղղակի ծիծաղելի է, յառնում է մի տեսակ տիկնախաղ.—իմ տիկնա թող հարս լինի, քոնը փեսայ, տանենք պսակենք:—Պսակեցինք, հիմա թող չաց ուտեն:—Դէ, հիմա էլ թող քնեն:

Բռնազբօսիկ կերպով ստեղծած երևութիւնները չափազանցութեան են հասնում «Բժբաւիչ կին» վէպում: Այստեղ հեղինակը պատմում է, թէ ինչպէս արիստոկրատ իշխան Արուսիին, իր խանգարած նիւթական գործերը յրապելու համար, ամուսնանում է մի հարուստ կապալառուի աղջկալ հետ, որի փոշերի իրաւունքը ձեռք բերելով և մի ժառանգ էլ ունենալով, որով բոլորովին ապահովում էին նաև կնոջ անշարժ կալածները իր համար, աչքից գցում է կնոջը, սկսում է ամեն կերպ նրան հալածել, թէ ինչ է—նա արիստոկրատ ծագում հունի, Հեղինակը աչքան էքստազի մէջ է ընկնում, որ ասում է, թէ իշխան ամուսինը իր գառի նման խելօք, համեստ կնոջը աստիճաններ է տալիս, որ նա օրերով հիւանդ պառկում է և ալն: Նրբխան էլ մօրից հեռացնում են, տեսնելու անգամ իրաւունք չեն տալիս: Եւ ալս բոլորը կատարում է մի

կնոջ վերաբերմամբ, որի մասին ասուած է, թէ «նրան սովորեցրին բաւականին վարժ խօսել ռուսերէն, Քրանսերէն և անգլիերէն, վարժ շաշնամուր ատել, գեղեցիկ նկարել ատլասի և ձենապակու վրայ, իսկ մնացեալ բաների մասին նա չափազանց տարրական գաղափար սորացաւ» (երես 9): (Յրեի պարել էլ կը գիտենար, ինչո՞ւ չի վիշում հեղինակը). էլ ինչ էք ուզո՞ւ մի սրանից էլ աւելի համապատասխան կըթուլթուլ արխտոկրատ ընդանիքի հարս լինելու համար. ապա աչն, որ տասնուչորս տարեկան հասակից նա շարունակ արեօդեա Անէտից» լսել է. «Marie, որ աչվալէլակազմ իրանով, աչք փոքրիկ, սիրուն գլխով ու ձեռներով, գունատ շէմքի աչք նուրբ գծագրութեամբ շուռ ուղղակի սխալմամբ ես ծնւել հասարակ ընդանիքում: Դու ունիս այն բոլոր արժանիքները, որ պէտք են արխտոկրատ աղջկան. պակաս է միայն տիպոսը, բայց Աստուծոյ օգնութեամբ աչք էլ կը լինի, ma chère»: Աւելացրէք սրա վրա և կէս միլիոնանոց կարողութիւնը, և մարդ կը մտածի, որ այս տեսակ հարսին պիտի որ գլխները վրայ ման ածէին. Բայց չէ, իշխանն ու նրա մայրը անսլքո դազաններ են. մեղմանում են, եւք հարկաւոր է հարսի սօրից փող սրանալ, իսկ մնացած ժամանակ անասելի ֆիզիկական և բարոյական տանջանքներ տալով նրան ինքնասպանութեան շուռն են հասցնում: Իսկ հարսը, Մարիամը, մի թուլ, վերին առօրեանի անհամարձակ մի արարած է, որը սակաւն եր-

բեմն երբեմն բաւական ազդու կերպով բոլորում է իրեն տանջողներին շէմ:

Մարդ մտածում է, եթէ հեղինակը ուզում է մի կին պատկերացնել, որ իր թուլ բնաւորութեամբ, չի կարողանում ազարւել ճնշող շրութիւնից և Հեղինէի նման իր երեխան առնել հեռանալ ամուսնուց. թէ սա է՝ հեղաքրքիր չէ: Եթէ ուզում է այս վէպը իբրն մի պատկեր ներկայացնել արխտոկրատ ընդանիքում ոչ արխտոկրատ ծագում ունեցող հարսի շրութեան — իբրեւ պատկեր ոչ մի արժէք չունի, որովհետեւ այնքան է չափազանցած ու լալկան կերպով նկարագրած, որ իրականութեան պատկեր լինելուց չափ հեռու է: Իսկ եթէ սա մի մասնաւոր շէմքի նկարագրութիւն է, դա էլ հեղաքրքիր չէ, որովհետեւ սրանից չափ աւելի սարսափելին կարելի է նկարագրել և այնուամենայնիւ ցանկալի տպաւորութիւնը չաճել: չտալ մի պատկեր, որ կարողանար տեղի և ժամանակի ազդեցութիւնից զերծ մնալ և թարմութիւն պահպանել իբրեւ մեր ժամանակների հասարակական չարաբերութիւնների մի պատկեր: Ուրեմն էլ ինչի է զրւած այս վէպը: Ասում են ճաշակի մասին վիճել չի կարելի, մէկը տէրտէրն է սիրում, մէկը տէրտէրակիւնը. կարող է միմիայն շուռ դալ, միմիայն ոչ: Բայց մենք կարծում ենք, որ կնոջ անօգնական շրութիւնը անհամապատասխան ամուսնութեան շէմքում և ներկայ հասարակական կաղմակերպութեան մէջ բաղմաթիւների մէջ այս բացը

ալնքան է զբաղեցնում հեղինակին, որ շունենալով գեղարուեստական տաշանդ և երեղթը աւելի լալն ու աւելի խոր ըմբռնելու կարողութիւն, նա սորիւլած է իր զգացմունքներին բաւականութիւն տալու համար ընկնել ալնպիսի հատուկոր երեղթների վերայ և, գուցէ նկարագրել ալսդիսակ շէպքեր: Բոլոր գրածքներում աչքի է ընկնում մի տեսակ հաւատ շէպի ապագան և հետաքրքրութիւն իր նիւթով: Երևում է, որ խնդիրը հեղինակին զբաղեցնում է, մտածել է տալիս: Աւ մարդ գալիս է ալն և զբաղացած էր, որ հեղինակը գիտէ հասկանալ, նկատել, ըմբռնել մի բան, բայց պարկերացնել — ոչ:

Հեղինակին չի լաջողում նորն իտկ վէպերը ընթեռնելի Դարձնել: ահագին ձանձրութիւն մարդ հագիւ է վերջացնում ընթերցումը: Սրա մի պատճառն էլ մենք կարծում ենք նա է, որ հեղինակը գլուխների բաժանելուն շատ տարօրինակ է վերաբերում: միևնույն գլխի մէջ լաճախ

խօսում է մի քանի բաների մասին, մի նիւթից միւսին թռչելով: Իւրաքանչիւր գլուխ մի առանձին բան պիտի ներկայանցնի, մի որեւէ խնդրով պիտի զբաււի: պիտի ալնպէս լինի, որ եթէ մարդ մի գլուխը առանձին կարգալու լինի, էլի մի բան հասկանալ, մի բաւականութիւն ստանալ: Ալնպէս էր անում մեզնում Բաֆֆին, որի գրածքների լափշտակութեամբ կարգացելու մի պատճառն էլ սա պիտի համարել: ալնպէս են վարում և շատ ուրիշ վիպասաններ — օրինակ Սենկինը: Տ. Մարիամ Խաթիսեանի գրքերում ալնքանը չկալ: խօսակցութիւններով, Դարողութիւններով, հանդիպումներով լի են գլուխները, անկանոն, առանց մի առանցքի շուրջը իրմբւած լինելու, առանց որոշ կապի Դասաւորւած: ալն է պատճառ, որ ալս գրքերի ամբողջ հետաքրքրութիւնը վերջին զլխներումն է, ուր ընթերցողը իմանում է ինչ ելաւ հերոսի կամ հերոսուհու վերջը:

ՄԱՐ. ՅԱՐ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներսիսեան դպրոցի 75-ամեակի տոթիւն—Թ. Հայոց Հրատ. ընկերութիւնը—Բազմավէպ'ը եւ եղբայրութեան քարոզը:

Մայիս ամսին մեր միջնակարգ դպրոցներէց մէկը փոնեց իր 75-ամեակը: Ներսիսեան դպրոցն էր այդ, որը գոյութիւն ունի իբրեւ հայոց հոգեւոր դպրանոց (սեմինարիա): Որպէս յայտնի է, ըստ Ռուսիայի հայոց հոգեւոր կառավարութեան (=պոլոժենիե), ամեն հայոց հոգեւոր թեմ (—վիճակ, եպարխիա) իրաւունք ունի մի-մի հոգեւոր դպրանոց ունենալու. իսկ այդպիսներ Ռուսիայում վեցն են—Երեւանի, Շուշուայ, Տամախու, (որի սահմանի մէջ է նաև Բաքուն), Թիֆլիսի վրաստանի և Իմերեթիայի, (=որի մէջ և Գանձակ, Քուլթալիս, Գորի, Ախալցխա, Ախալքալաք, Բաթում), Աստրախանի (որի մէջն է և Հիւսիսային Կովկասը՝ Ղազար, Մոզդոկ, Արմաւիր, Թեմիրխան-Շուրա և այլն, և Անդրկասպեան երկիրը—Մերս, Աստաբադ և այլն) և, վերջապէս, Բեսարաբիայի թեմը (որի մէջ է մնացեալ ամբողջ Եւրոպական Ռուսիան, Դորա մէջ Նոր-Նախիջևանը, Մոսկւան, Պետերբուրգը, առաջնորդանիսս քաղաքը՝ Քիշնեւ):

Այդ վեց թեմերից դպրանոցներ ունին Թիֆլիսը, Երեւանը, Շուշին, Նոր-Նախիջևանը (վերջինս Բեսարաբիայի թեմի համար). իսկ Տամախին և Աստրախանը շեռ ևս չունին. էջմիածինն էլ, իբր կենսորոն, ունի իր հոգեւոր ճեմարանը: Վերջինս մի քանի ամիս առաջ փոնեց իր 25-ամեակը, Երեւանինը 1888-ին փոնել է չիւնամեակը, այժմ՝ Ներսիսեանը, մայիսի 21-ին փոնեց իր 75-ամեակը:

Ներսիսեան դպրոցը հիմնւեց երբ շեռ ևս ռուսահայոց հոգեւոր կառավարութեան կանոնադրութիւնը չկար. և նա հիմնւել էր ոչ որպէս թեմական դպրոց, այլ առ հասարակ որպէս հայոց լուսաւորութեան մի կենսորոն: Այլ թէ թեմն է նորան սպեղծել, այլ Ներսէս Աշտարակեցին, թէև ճիշտ է որ այն ժամանակ Թիֆլիսի թեմա-

կալ առաջնորդ էր նա: Եւ արգար է որ Դպրոցն էլ վերջը հէնց նորա ստեղծողի անուանովը Ներսիսեան կոչուեց:

Երբ այդ Դպրոցը հիմնուեց—Երևանեան նահանգը, և Դորա մէջ Եջմիածինը, Դեռ ևս պարսկական իշխանութեան ներքոյ էր. և կարգին Դպրոց կարելի էր միայն ոռոսաց իշխանութեան սահմաններում երևակայել:

Լազարեանները արդէն սկիզբ էին Դրել հայոց լուսաւորութեան գործին—հիմնելով իրենց ձեմարանը Մոսկաւոյում: Բայց սա հեռու էր ժողովրդի հողից: Եւ նոքա էլ զգացել էին այդ. Դեռ ևս Դարուս սկզբին նոյն Լազարեաններից մէկը կտակով թէեւ փոքրիկ բայց ինչ և է մի գումար էր թողել Կովկասում հայոց Դպրոց հիմնելու Դէպքի համար:

Ներսիսեան Դպրոցը իր ժամանակի հայկական լուսաւոր ազգասիրութեան մի արպայայտութիւնը եղաւ, ինչպէս Դարանից քիչ առաջ Լազարեան ձեմարանի բացումը և, ինչպէս Դարանից Դեռ շատ առաջ, 18-րդ Դարում Մխիթար Սեբաստացու ձեռնարկութիւնը արևմտեան հայութեան մէջ, մի գործիչի, որի օրինակը, որպէս թուում է, յետագայում, իշխալի պէս աչքի առջև է ունեցել բարձրին ձգտող ամեն հայ գործիչ, մինչև ներկայ Դարուս առաջին քառորդը: Ներսիսեան Դպրոցի հիմնարկութիւնը այդպիսով արդիւնք է Դեռ ևս հին հայութեան ազգասիրական ձգտումների—չկապաւած ոչ մի քաղաքի, ոչ մի թեմի և ոչ իսկ լոկ Կովկասի սահմանների հետ, այլ կապաւած ընդհանուր հայութեան հետ: Փամանակն էր այդպէս: Եւ երբ ժամանակի ընթացքում, Ներսիսեան Դպրոցը աւելի ու աւելի մօտեցաւ թեմական Դպրոցի սիպարին, այնքան աւելի անհրաժեշտութիւն զգացուեց մի նոր Դպրոցի, որը իր վրայ կրէր ընդհանրութեան Դրոշմը: Եւ արեւմտեան Գէորգեան ձեմարանը, որի գաղտնիքը, իբրև կենսորոնական Դպրոցի, փաշտաւում էր Դեռ Դարուս սկզբներում, և ամենից շատ՝ նոյն Աշտարակեցու կողմից, բայց որը չէր կարող իրագործուել այն ժամանակ—Եջմիածինը պարսկական իշխանութեան տակ լինելու պատճառով, իսկ յետոյ—Ներսիսեան Դպրոցի պատճառով, որի ստեղծողը յետագայում կաթողիկոս եղաւ, Թիֆլիսը Դարձնելով իր երկրորդ աթոռանիստ տեղը—իր հիմնած Դպրոցը իր աչքի առջև:

Եթէ աչքի անցնէք այդ Դպրոցի առաջին քառորդ Դարու պարմութիւնը, կ'տեսնէք, ի բաց առած միայն Ալամշարեանի մի քանի տարիները—շատ քիչ մանկավարժական արդիւնք, բաց շատ մեծ աշմուկներ, շատ մեծ անկարգութիւններ. նոյն իսկ երկրորդ քառորդ Դարում, Դարձեալ ի բաց առած մի փոքրիկ շրջան—Շանշեանի տարիները,—կրկնել է նոյնը:

Որովհետեւ... մեր Դպրոցները չեն ունեցել մանկավարժական ղեկավար մարմին, և հետխեան Դպրոցն էլ կրել է այդ մարմնի պակասութեան բոլոր հետեւանքները:

Իշխանութիւն բանեցնելու ձգտումը եղել է ղեկավար սկզբունքը մեր Դպրոցների կառավարութեան: Եւ մի անգամ այդ ձգտումը աւելի շեշտով արտայայտել է հոգեւոր բարձր կառավարութիւնը, այլ անդամներ—հոգաբարձութիւնները:

Բաց մի բարձր դպրոցական խորհուրդ, բարձր Դպրոցական տեսչութիւն միշտ պակասել է հայոց Դպրոցներին—ի սկզբանէ մինչև այսօր: Այդ կացութեամբ—միշտ և հանապազ—թէ Դպրոցական, ծրագիրներն են շարունակ փոփոխուել, թէ ուսուցիչները ու տեսչները: Իշխող Դպրութիւնը եղած է անորոշութիւնը:

Այդ նոյնը, բաց միայն շատ աւելի վատթար Դպրութեամբ, իշխել է Երեանի և Շուշույ թեմական Դպրոցներում:

Դպրոցները կառավարող երկու մարմինների մէջ—հոգեւոր կառավարութեան ու հոգաբարձութիւնների—թաքուն կամ բացարձակ կռիւը յաճախ այդ Դպրոցների կեանքի էութիւնն է կազմել:

Հայկական մամուլը այդ խնդրի մէջ—որ և մամուլի ամենամեծ խնդիրներից մէկն է կազմել—ու՛ր թէ աշխատեց պարզութիւն մտցնել, խնդիրը իրօք ուսումնասիրել Դպրոցական շահերի տեսակէտից, այլ, ընդհակառակը, ինքն ընդգրկեց մրցող, կռուող մարմիններից մէկի կամ միւսի Դատը: Մեղու Հայաստան, Մշակ, Արձագանք, Նոր-Պար—այդ պատկերն են ներկայացրել անցեալում, և, կանգուն մնացածները—այժմ էլ շարունակում են նոյն Դերը, որ, կարող ենք ասել, միայն բարբարոսի Դեր է Դպրոցական այն քան փափուկ դործի մէջ:

Ի՞նչ է եղել այդ թերթերի իրար Դէմ մշած Դպրոցական անվերջ կռիւների աստաղը: Ուրիշ ոչինչ—բաց եթէ այս, թէ համ

փոշմակիցներ ընտրեն հոգաբարձուներ—Դպրոցի վրայ իշխելու համար, եւ, մի գոյնի հոգաբարձութեան ժամանակով—միւս լրագրի քոլոր ջանքը եղած է սուտ ու շորշ բաներով հոգաբարձութեան վարկը վայր ձգել, բայց միմիայն իր գոյնի հոգաբարձութիւն առաջացնելու համար, որպէս զի, Դերերը փոփոխած Դէպքում, մինչ այդ պաշտպանող թերթը կատարելապէս նոյն ձեռով, նոյն տաքտիկայով յարձակումներ գործի նոր հոգաբարձութեան վրայ, բայց իսկապէս՝ հակառակորդ թերթի վրայ:

Եւ մեր խեղճ Դպրոցները կրել են մեր օրաթերթերի մեծ մասամբ անմիտ կամ աւելի լաւ՝ չարամիտ կռիւների և մրցութեան քոլոր Դառն հետեւանքները: Դպրոցները եղած են իրար Դէմ կռուելու և իրար անւանարկելու զէնքերից մէկը, շնորհիւ Դպրոցական կառավարութեան բացակայութեան:

Եւ նաչած թէ էջմիածինը որ և է տրւած ժամանակում զի կուսակցութեան հետ էր, նա էլ ձեռք ձեռքի տրւած զնուժ էր նորա հետ կամ նորան հակառակ, աշխատելով հոգաբարձական կանոնադրութեան այս ու այն կէտը յարգել կամ չը յարգել:

Մեր մամուլը Դպրոցական մեծ խնդրի մէջ երբէք չը կարողացաւ վերանայ նեղ կուսակցական-եսասիրական շրջանակից: Մամուլի բոլոր օրգանները ոչ միայն չարիքների Դէմ առնելու վրայ չէին մտածում, այլ և բարեկարգութեան խնդիրներ յարուցանելուց խոյս էին տալիս, այս պարզ հաշուով, որ բարեկարգութեան ուժի մի ներքոյ՝ Դժուար էր կուսակցական կամայականութիւններ կատարել: Օրինակ, ամեն տարի ուսուցիչներ փոփոխելու կարգը ծնունտու անկարգութիւն էր, որի Դէմ այդ թերթերից ամեն մէկը իր հոգաբարձական թեկնածուներին ընտրած փեսնելու յոսով՝ կը կամենար ոչ իր կուսակից ուսուցիչները արձակել և նոցա տեղը—իր կուսակիցները կարգել:

Գաւառներից կ'տեսնէիք թղթակցութիւնների բեռներ թեմական կամ ծխական Դպրոցների այս սւ այն ուսուցչի ու տեսչի հասցէին, ուր թղթակիցը, յաճախ մի խանութի գործակապար, նոցա մանկավարժական հմտութիւնների մասին էր խօսում—թեր կամ Դէմ, որպէս զի Դոբանով Դրդի տեղական հոգաբարձութեան

վրայ՝ արձակելու կամ պահելու ակնարկածներին. և այդ ամենի աստիճանը լինում էր այն, թէ այս ինչ ուսուցիչը մեր թերթերից որին էր բաժանորդ...

Ոչ մի ուսուցիչ ապահով չէր և չէ իր պաշտօնի համար. ամեն ոք արձակւած է համարում փարին լրանալիս. Լաւագոյն ուսուցիչն անգամ փեսնում է իրեն այն շիրքի մէջ, ուր իր պաշտօնի մէջ մնալ-չմնալու խնդիրը կախւած է փեսչին բաց աւելի ևս՝ հոգաբարձութեանը առանձին ծառայութիւններով հաճոյանալու փրամաշտրութիւնից կամ հնարագիտութիւնից:

1888 թւականին մամուլի մէջ մի երկարատեւ և կրքոտ բանակուիւ ծագեց մի թերթի ու մի ազատ կացուցւած ուսուցչի միջև այն առիթով, որ նախկին ուսուցիչը, իմանալով որ ինքը արձակւած է փեսչի հնարովի փեղեկութիւնների հիման վրայ, շիմել էր Կաթողիկոսին խնդիրքով որ հոգաբարձութեան նիստի մէջ փեսչի հաշորդած փեղեկութիւնները պաշտօնական քննութեան ենթարկեն: Տեսուչը, որի անձնական շահերին յարմար չէր գալիս այդ ուսուցիչը, սորան հեռացնելու համար հոգաբարձութեանը յայտնել էր այսպիսի բաներ թէ այդ ուսուցիչը շատերին կանոնաւոր կերպով չէր յաճախում և շատընթացը չէր անցել: Եւ բաշտի, փարօրինակ իրոնիայով, այդ ասել էր մի ուսուցչի համար, որի մասին լաւագոյն վկայութիւններ էին տպւել նոյն այն թերթի մէջ: Եւ այդպիսի պահանջը՝ փեսչի փեղեկութիւնները քննելու՝ նոյն այդ թերթը յայտարարեց շարժի ինքնավարութեան խախտումն: Պարզ խնդիրքը որ բարձր իշխանութիւնը փեսչի, ուրեմն և հոգաբարձութեան, պարճառաբանութիւնները ստուգէ քննիչների ձեռքով— յայտարարւում էր ինքնավարութեան խախտումն: Հոգաբարձութիւնը շառնում էր ուրեմն նաև կատարելապէս ինքնավար զրպարտութիւններ յօրինելու և ոչ ոք իրաւունք չպիտի ունենար նոյն իսկ մի բան քննելու, ստուգելու...

Հոգաբարձական մարմինը, իբր շարժական վարչական լիազօր մարմին— ահա այն իմաստութիւնը, որից շէ՛ր մտածելն անգամ մեղք էր համարում մեր մամուլի մի մասը: Իսկ միւս մասը— իսկապէս նոյնն էր կատարում— բաց միայն թէօրիաջով պաշտպանելով բարձր հոգևոր կառավարութիւնը— ներկայ գէպքում՝ կաթողի-

կոսի յաճախ նաև առաջնորդի—իրաւունքները՝ միջամտելու տեղական հոգաբարձութեան տնօրինութիւններին:

Վերջերս, թերթերից մէկը ամեն բանի շեշտը գտած լինել է կարծում բարձր հոգևոր կառավարութեան տիրապէս կառավարելու մէջ, մի բան, որի անհեթեթութիւնը զգացել են բոլոր կաթողիկոսները, բացի... Կարբեցի Յովհաննէսից... Ի՛սկ է, այդ շեշտը նա նոր է գտել, բայց նա այդ յայտարարում է այժմ աւելի խրոխտ ձևով, որպէս մէկը, որ շատ վտառ է իր ռեցէպտի զօրութեան վրայ...

Եւ ահա, այս վիճակի մէջ, Դպրոցները չունեցան հաստատուն և միօրինակ ծրագիր անգամ, և ոչ էլ մի մանկավարժական ընդհանուր շեկավարութիւն: Ուսուցիչները գործել են ամեն մէկը իր խելքի կտրածին պէս, ամեն մի թեմական Դպրոցում սարքեր ծաւալով: Ո՞վ կ'կարծէր թէ ամեն տեսչի օրով ուսուցչական խումբը, Դպրոցներից ամեն մէկում, իր պարպքն է համարել թեմական Դպրոցների ծրագիրներ մշակել—միշտ կիսատ թողնելով գործը և երբէք էլ սպառնալու աւ քննադատած չլինելու բաշխին արժանանալով: Միմիայն Ներսիսեան Դպրոցը քանի-քանի անգամ ձեռնարկել է այդ գործին—բոլորովին անհետանալով:

Դպրոցական յառաջդիմութեան շահերը թելադրեցին մեզ մեր անշեկավար Դպրոցների հանգամանքները ներկայացնել Մուրճի մէջ և առաջարկել Դպրոցական-վարչական ռեֆորմ (Տես Մուրճ 1892 թ. № 9 և 10): Ռեֆորմը պիտի կայանար մեր Դպրոցները շեկավարող մի բաժնի մարմին ստեղծելու մէջ, որի անշամները պիտի ընտրէին. մեր բոլոր թեմական Դպրոցների հոգաբարձութիւնների ձայնաւութեամբ ու հաստատուէին կաթողիկոսի ձեռքով, եօթական տարի ժամանակամիջոցով: Այդ բարձր մարմինը—ուսումնական-վարչական հոգաբարձութիւն—պիտի պարպականութիւն ունենար Դպրոցական ծրագիրներ մշակելու—թէ ծխական և թէ թեմական Դպրոցների համար, անշուշտ կաթողիկոսի հաստատութեամբ, մանկավարժական հրահանգներ մշակելու բոլոր ուսուցիչների համար, հաւաքելով նախապէս ուսուցիչների Դիպոլութիւնները, ապա՝ վերահասու լինէր Դպրոցական Դասաւանդութեան և քննութիւններին, անձամբ, կամ նշանակած անձերի միջոցով, և այլն. միշտ սպառնալով հաշիւներ ներկայացնելով կաթողիկոսին ու ընդհանրութեանը

իր գործունէութեան և ամեն տարի կապարւած շարժողական յառաջդիմութեան մասին:

Տեղական հոգաբարձուները կ'շարունակէին մնալ թէ ցնդական կառավարութեան համար և թէ որ և է ձայն ունենալով պետուէ և ուսուցիչներ ընտրելու մէջ, բայց արդէն այն եղանակով որ զուտ քմահաճութիւնները զսպւած մնային:

Մեր առաջարկը չէր շոյում ոչ ոքի քմահաճութիւնը—ու այս ու այն կուսակցութեան և ոչ հոգեւոր կառավարութեան: Եւ, չնայած որ ամեն երկրում, ուր եւրոպական իմաստով շարժումներ կան, մեր առաջարկած մարմինը այս կամ այն ձևով գոյութիւն ունի, մեր այդ առաջարկը մնացել է ցայժմ չիրագործւած: 1892-ից շէս փակեցան հայոց ծխական շարժումները նախկին շրջութեամբ, բայց մնացած են Գէորգեան ձեմարանը և թեմական մի քանի շարժումներ, որոնք ամենը մնում են առանց ընդհանուր շարժողական շնկավարութեան: Դորա փոխարէն՝ հոգեւոր կառավարութիւնը վերջին տարիներս սկսեց փորձեր անել ուղղակի պետուէներ նշանակելով այս ու այն թեմական շարժում, մի բան, որը զուրկ է որեւէ առողջ իշխանից: Դժգութիւնները առայժմ եղած են միակ հետեւանքը այդ ձև կառավարութեան: Իսկ ներկայումս Կաթողիկոսի կարգադրութեամբ թեմական շարժումների համար հոգաբարձական նոր ընտրութիւններ պիտի կայանան Թիֆլիս, Երևան ու Շուշի, ազդարարութեամբ, որ հոգաբարձուներից երկուքը պիտի լինեն հոգեւորականներ... Ինչ ամուլ միտք, ինչ ողորմելի միտք: Եւ իբր թէ այդ միտքը ծնունդ է հոգաբարձութեան մեր շարժումների համար... Ինչ ողորմելիութիւն... Դա, շարժապ, մի հանձարեղ միտք է պատժելու այն անտարբերութիւնը, որ ցոյց է տւել հրապարակի վրայ շատաշու մոմուլը շէպի իսկական բարեկարգութեան խնդիրները, պատժելու այն եսը, որից շէն մամուլը բան չէր ուզում տեսնել շարժողական այնքան քնքոյշ գործի մէջ: Այո, իբրեւ պատիժ—հոգաբարձութիւնների մէջ պարտաւորի: Կերպով քահանայանշափներ ընդունել փալը կամ նաեւ նշանակելը—նոյն իսկ հանձարեղ միտք է, բայց իբրեւ շարժողական յառաջդիմութեան գաղափարի ծնունդ—շա ծաղը է ամբողջ շարի փորձառութեան վրայ...

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը ունեցաւ իր պարեկան ընդհանուր ժողովը մայիսի 13-ին, ուր պէտք է քննէր ընկերութեան 1899 թ-ի գործունէութիւնը: Ոչինչ մխթարական բանս Ամեն ինչ կրում էր ետ ու ետ գնալու դրոշմ: Մի.ոչ շատ հեռաւոր ժամանակաւ ընդհանուր ժողովներին, որոնց մասնակցում էին հարիւր ու մինչև իսկ շատ աւելի անդամներ, այժմ փոխարինել են ընդհանուր ժողովներ շուրջ երեք հասնակ հոգով ժողովներ, որոնց մի լաւ կէսը ներկայացնում է ընկերութեան պաշտօնատարների կազմը. 14 պաշտօնատար անձեր ունի ընկերութեան վարչութիւնը և խմբագրական մասնաժողովը, իսկ ընդհանուր ժողովներին, ահա երկու տարի է, գալիս են ցեղ բռնելու որ և է 15—20 հոգի ոչ-պաշտօնատար անդամներ... Ընդհանուր ժողովը կուլած է քննելու վարչութեան և խմբագր. մասնաժողովի գործունէութիւնը. և խնդիրները քննում են այնպէս, որ ամեն մի պաշտօնակցի ձայնին միանում է կամ նորան հակառակում, միմիայն մի հար ոչ-պաշտօնակցի ձայն: Բաւական է որ պաշտօնատարների կազմը իր կողմն ունենայ որ և է հինգ ձայն սոսկ անդամներից, երբեմն նոյն իսկ երկու ձայն, կամ մի հար ձայն, — և արդէն ձայների առաւելութիւնը միշտ ապահոված կ'լինի յօգուտ վարչութեան: Պարզ հաշիւ. ժողովի մէջ են 14 պաշտօնատարներ. մի ժողովի մէջ 29 հոգով, որոնցից 14-ը պաշտօնատարներ են, բաւական է որ մի հարիկ ձայն աւելանայ նոցա կողմի վրայ, որ կազմի 15 ձայն ընդդէմ 14-ի. և այդ մէկ ձայնն էլ կարող է լինել մի անդամինը, որը ծառայող է ընկերութեան: Մօտաւորապէս նոյնն է երբ ժողովը կազմւած է 30—35 հոգուց, և աւելի վատ, երբ ժողովը կազմւում է 29-ից էլ պակաս անդամներից: Այդպիսի ժողովները արդէն կորցնում են այն նշանակութիւնը, որ սովորաբար յապիացւում է պարեկան ընդհանուր ժողովներին: Դռքս անառողջ ընդհանուր ժողովներ են, ուր շատ քիւրաութեամբ կարող է որ և իգէ մէկի անկախ ձայնը իրեն նոյն իսկ լսելի անել, երբ այդ ձայնը որ և է կերպ հակառակում է պաշտօնատարների խմբի այս ու այն հայեացքին, այս ու այն նոյն իսկ փոքր, եթէ արդէն չասենք նաև ապօրինի տարաքին:

Ահա մի այլպիսի ժողովի մէջ կարգացւում է նախկին (1899)

տարւայ ընդհ. ժողովի արձանագրութիւնը: Ինչ տարօրինակ բան. կարդալ ժողովականների առջեւ թէ ով ինչ ասաց ժողովում՝ մի տարի առաջ, և միամտօրէն հարցնել—ով ինչ նկատողութիւն ունի անելու արձանագրութեան մասին: Եւ շեռ աւելին. այդ նոր կարգացող ու շեռ չը հաստատուած արձանագրութեան ներքոյ ստորագրել են մի տարի առաջ եղած ժողովի նախագահը և քարտուղարը: Ստորագրել են պրծել,—էլ ինչ նկատողութիւն կարող է վերցնել մի այդպիսի արձանագրութիւն. շուք կապացուցանէք թէ այս ինչ բանը այդպէս չի եղել, կապացուցանէք նոյն իսկ թէ բաց է թողնուած որ այս ինչ բանի համար այս ինչ վճիռն է կայացել. դորան կը համաձայնեն նոյն իսկ ամենքը,—ինչ օգուտ. նախագահ ու քարտուղարը արդէն ստորագրել են պրծել. սխալ է թէ ուղիղ—այդ արձանագրութիւնը պիտի տպւի: Եւ շեռ նոր ժողովի նախագահը եզրակացնում է ու վկայում թէ՝ ռուբեմն ընդհ. ժողովը հաստատում է արձանագրութիւնը: Այ ձեզ կոմէդիա...

Եւ ահա առաջ է գալիս արձանագրութեան սխալների մասին արւած նկատողութիւնների խնդիրը: Ո՛ր գցել այդ ատելորդ շարժած բեռը: 2^է որ միայն ձեւի համար կարդացւեց արձանագրութիւնը. էլ նկատողութիւնս որն է: Եւ ահա, միշտ ի հարկէ ձայների առաւելութեամբ, վճռում են այդ ըստ երեւութին ոչ ոքին հարկաւոր նկատողութիւններն էլ այս տարւայ արձանագրութեան մէջ գցել, ու զալ 1901 թւականի ընդհ. ժողովի հաստատմանը ներկայացնել, որ ապա տպւի երկու տարի յետոյ 1902 թւականին լոյս տեսնելիք տեղեկագրի մէջ, ի մխիթարութիւն 1899 թւականի արձարագրութեան մասին նկատողութիւններ անող պարոն-անդամների...

Ինչ կոմէդիա...

Եւ ձեւի պակասը գալիս է լրացնում արձանագրութիւնների բովանդակութիւնը ինքը: Արձանագրութիւններ խօ չին դոքա, այլ անշնորհք ֆէյլըպոններ, բութ սրախօսութիւնների հաւաքածոներ, ֆիլիպիկներ մի հստ անձի շէմ, որը երեւում է թէ ընդդիմադիր անշամի պաշտօն է ստանձնել: Ինչ որ ընդհ. ժողովների մեծամասնութիւնն է, այն էլ սովորաբար արձանագրութեան յարկութիւնն է: Կ'ընտրեն մի այնպիսի նախագահ ու մանաւանդ մի այնպիսի

քարտուշար, որոնք լաւ արտայայտիչ են ճանաչում այդ մեծամասնութեան տրամադրութիւններին, այնպէս որ արձանագրութիւն ու ժողովի մեծամասնութեան տրամադրութիւն իրար լաւ ծածկեն: Եւ այդ տրամադրութեան համար արձանագրութեան մէջ կը խեղաթիւրեն, կ'այլալեն տեղի ունեցած վիճաբանութիւնները, մէջ կը գցեն այս ու այն անդամի դէմ վիրաւորական, բայց ոչինչ շատ ուշ, միւս կողմից մեծամասնութեան անդամների արտասանած խօսքերը կը ձևափոխեն, երբ նոցա արտասանողին այդ խօսքերը ամօթանք կը բերին միայն, և այլն և այլն:

Օրինակի համար, կը տեսնէք որ ընդդիմադիր անդամի բերանը կ'շնեն այսպիսի խօսքեր. (անդամ այսինչ) աւելորդ է համարում և Բելինսկու Ռումանտիզմ յօդաւորութեանը, քանի որ Բելինսկին ընդհանուր եւրոպական հռչակ չէ վայելում և կան աւելի լուրջ կրիտիկոսներ կան եւրոպական գրականութեան մէջ, (տես տեղեկագիր 1898 թ. էջ 37): Եւ երեւակայեցէք որ այդ արձանագրութիւնն է իրօք արտասանւած այս խօսքերի. «Ես աւելորդ եմ համարում Բելինսկու Ռումանտիզմ յօդաւորութեանը, որովհետեւ ռումանտիզմի մասին Բելինսկուց դէս եւրոպայում լոյս են տեսել շատ լուրջ աշխատութիւններ, որոնցից կարելի էր աւելի յաջող ընտրութիւն անել»:

Եւ այլն և այլն: Մենք այստեղ չենք կամենում սխալներ ուղղել, այլ միայն դրութիւն ներկայացնել. այդ մէկ օրինակն էլ բաւական է արձանագրութիւնների ոգին բնորոշելու համար: Մի քանի փարի է արդէն որ արձանագրութիւնները սխալեմատիկաբար այդ ուղղութեամբ են տանուում:

Բայց ընկերութեան այդ ուղղութիւնը դեռ շատ աւելի հեռուն է և գնացել. արձանագրութիւններից սկսել են սխալեմատիկաբար ջնջուիլ ընդհ ժողովների այն վճիռները, որոնք կայացել են ընդդիմադիր անդամի առաջարկութեամբ, ընդդէմ իրենց՝ ընկերութեան գործերը այժմ շեկավարողների կամքի: Այդ իրողութիւնը հաստատուեց ներկայ մայիսի 13-ի ընդհանուր ժողովի մէջ, և միայն պարիւ կարող է բերել ժողովի գէթ մի մասին, որի աչքին իրողութիւնը այնքան լուրջ թւաց, որ ժողովի չափւած ժամերից երկուսը միմիայն իրողութիւնը հաստատող վկայու-

Թիւնները լսելու և չարիքի շէնն առնելու միջոցների քննութեանը ներիւնք, թէ և առանց անմիջական հետեւանքի.... Իրենք մեղադրուողները աշխատում էին պատրաստնապրութիւնը իրենց ուսերի վրայից թռթափել. սեռէք որ վարչութիւնը միայն սրբաւոր է արձանագրութիւնը այնպէս, ինչպէս վերջինս յանձնուում է իրեն, սորոքագրութեամբ ընդհ. ժողովի նախագահի և քարտուղարի. «մենք չենք խառնուում այդ գործին»...

Չեն խառնուում.. Եւ հարկաւոր էլ չէ խառնելը այդպիսի բաներ ստեղծելու համար. բաւական է միայն ծուռ ոգի ունենալ. և ծուռ ոգու ընկրածները նախագահութեան և քարտուղարութեան համար իրենց անելիքը արդէն առաջուց գիտեն... Եւ ով կ'կարծէր թէ այդպիսի նպատակների ծառայեցնուում է նոյն իսկ մամուլի մի օրգան...

Ընդհանուր ժողովները մարդասակաւ, արձանագրութիւնները անձնական կրքերի օրգան դարձրած: Ինչ յառաջդիմութեան խթան կարող է լինել այդպիսի ուղղութիւնը: Ընկերութեան կոչումը գրքեր տպելն է և գրքեր պատրաստելը: Ընկերութիւնը հիմնաւ 1879 թ., սկսում է վերակենդանանալ կամ աւելի լաւ ասած՝ կենդանանալ միայն 1891 թւականից: Բայց այս ութը պարիներում ընկերութիւնը յառաջդիմութիւն չի անում. նա մնում է մի կէտի վրայ կանգնած: Գրքերը պիտի դադարէ ըստ յատկութեան և ըստ քանակութեան: Յատկութեամբ գրքերի արժէքը այս ութ պարիներում օստիճանաբար ընկել է: Բայց արդէն չի կարելի երկու տեսակ կարծիքի լինել քանակի մասին, որը, ուղէք չուզէք, չափելով միայն կարելի է իմանալ: Եջերի մեծութիւնները տարբեր և գներ նշանակելը կամայական լինելով այլ և այլ գրքերի համար, գրքերի քանակի համար համեմատապէս ամենից լաւ չափս կարող են ծառայել տպարանական և թղթի ծախքերը: Արդ, դեռ ևս 1892 թւականին «հրատարակութեան» համար բոլոր ծախքերը (տպարան, թուղթ, հեղինակներին վարձատրութիւն) կազմում էին 5.156 ռ., իսկ 1899-ին միայն 4.346 ռ.: Տպարանի ու թղթի համար ծախքերը առանձին ցոյց են տրուած տեղեկագիրներում:

Միայն 1894 թվականից, երբ շուքա կազմում էին $742 + 986 = 1.728$ ուրբի. յետոյ —

1895 թ. փպ.	2.424+	թուշթ	970,	միասին	3.394 ուրբի
1896 թ. »	2.743+		1876,	»	4.619 »
1897 թ. »	1.600+		1837,	»	3.437 »
1898 թ. »	1.057+		510,	»	1.567 »

Այսպիսով մօր 3.400 ուրբուց 1895 թ-ին և մօր 4.120 ուրբ-
լուց 1896 թ-ին՝ փարանի ու թղթի ծախքը իջել էր 1898-ին
որ և է 1.567 ուրբու... Այդ՝ մի երրորդ մասն է 1896 թվականի
գրնադրական գործունեության...

Բայց ինչո՞ւ կանգ առնանք 1898 թ ի վրայ։ Որովհետև ընկե-
րութեան արագաճացը՝ երազնացութեան գէժ առաւ մի խոշոր նւէր
(Պօղոսեանի 10 հազարը), որի գումարից 1500 ուրբի աւելացաւ
1899 թ-ի մուրք և ելքին, որի շնորհիւ 1899-ին փարանական
ու իթթի ծախքը (մէջը հաշւած նաեւ պարկերների ծախք) եղաւ ար-
դէն 2.924 ուրբի, որը նախած շորան, շեռ էլի բաւականին
պակաս է 1897, 1896 և նոյն իսկ 1895 թվականների հաշւից...

Գրադրութիւնը, ուրեմն, ոչ միայն չի յառաջադիմել, այլ
շեռ զղալապէս պակասել է։ Եւ շեռ մենք անում էինք քիչ առաջ
թէ նոյն կէտի վրայ է մնացել... որովհետև կ'կամենայինք որ գոնէ
այդպէս լինէր...

Իսկ զրքեր փարածելը... նոյն սառուցային կէտի վրայ է։ Դեռ
1895 թ. անդամավճար ստացւած էր 2.520 ու. (և մօր նոյնքան
ուրբու գիրք փրւած անդամներին) և հապով վաճառւած էր
2.405 ուրբու. այնպէս որ այդ հաշւով գիրք ցրւած էր շրամով
4.925 ուրբու. բայց 1899-ին անդամավճար ստացւած է 1.411
ուրբի և հապով վաճառւած է 1646 ուրբու, ընդամենը շրամով
գիրք փրւած ու վաճառւած է. 3.057 ու., ուրեմն մօր հազար ուրբի
աւելի պակաս։

Միթարական չէ նաեւ ընկերութեան անդամների թւի զար-
գացումը. ճիշդ է, անդամ գրւողների թիւը ութ փարաւ ըն-
թացքում 357-ից (1892 թ.) բարձրացել էր 570-ի (1897 թ.),

բայց Դորանից Դէս արդէն իջել է: Սէ Դորանից աւելի կարևոր հանգամանքն այն է, որ կանխավճար անդամների թիւը սոսկալի չափով նւազել է այս վերջին չորս տարիներում: Այսպէս, մինչ-դեռ կանխավճար անդամների թիւն էր —

1895 թ-ին	420 հոգի	} այսինքն բոլոր անդամ գրածները
1896 թ-ին	514 հոգի	
արդէն 1897 թ-ին	404 հոգի,	այսինքն անդամների 70 % -ը
1898 թ-ին	289 հոգի,	» » 60 % -ը
1899 թ-ին	235 հոգի,	» » 45 % -ը

ձիշդ է, 97 և 98 թւականների ապառիկաւորները իրենց պարագը վճարել են յետագայ տարին կամ տարիները, բայց ապառիկներ լինելը արդէն ինքնին չարիք լինելուց զատ,—իբր երեւոյթ՝ դեռ նոր է, և արդէն անքան սաստիկ զարգացած մի երեք տարւայ ընթացքում: Կարելի է սպասել, որ այդպէս շարունակելով՝ կ'սկսեն նաև ապառիկները կորչել և խակկան անդամների թիւը այժմեանից էլ աւելի կ'իջնի: Այ միայն մի ընկերութիւն իր կանոնադրութիւնով, որը պահանջում է կանխավճարը, այլ և ոչ մի թերթի խմբագրութիւն չի թոյլ տալ բաժանորդների 65 % -ը ապառիկ, այն էլ տարին լրանալուց յետոյ: Այդ ուղղակի նշանակում է անդամների 65 տոկոսի կորուստ ընկերութեան մի տարւայ համար, որովհետև ապառիկաւորը թէ յաջորդ տարին վճարի էլ անցեալի համար,—սովորաբար նա կ'մնայ ապառիկաւոր ընթացիկ տարւայ համար. ուրեմն 2—300 հոգու տարեվճար արդէն մէջ տեղից ընդմիջող վերցրած պիտի համարել¹⁾:

Ինչ տեսակդից էլ նայելու լինիք—ամեն կողմից ընկերութեան անկման նշանները ակներև են.

¹ Արքան էլ պարեքերական թերթի հանգամանքները այլ են Հրատ. ընկերութեան բնաւորութիւնից, բայց և այնպէս, քանի որ ընկերութիւնը, 6 ռ. անդամավճարի փոխարէն առաջ 5 ռ. աջմ 8 ուրբու գրքեր է տալիս անդամներին՝ սոցա ընտրութեամբ, անհետաքրքիր չէ այս որ Մուրճը իբր ամսագիր, բաժանորդների թւի նկատմամբ Հրատ. ընկերութիւնից գաբեր է եղած. այսպէս, մինչդեռ Մուրճը 1890-ին 200 և 1892-ին նոյնքան բաժանորդ ունէր, 1899 թ-ին ունեցաւ վճարած մօտ 400 բաբաժանորդ:

Բազմավէպը վերջին ժամանակներս շատ է գրում «եղբայր
եմք մենք» բնութանի վրայ: Դորանով ուղղում է ագել՝ թէ՛ «կաթոլիկ
և լուսաւորչական» հայերը իրար, եղբայրներ են, որ, սակայն,
նոր բան չէ: Դիտմամբ չափերսների մէջ առանք այն երկու խօս-
քերը. Բազմավէպը, իբր կաթոլիկ կրօնական միաբանութեան թերթ,
նախ կաթոլիկեայ (=կաթոլիկ) կ'ասի, յետոյ միայն լուսաւորչական,
թէկուզ վերջիններս մի քանի տասնեակ անգամ առելի լինին
թւով քան կաթոլիկ հայերը: Բազմավէպը իր քարոզով ուշ է
ասպարէզ գալիս: Մի այնպիսի ժամանակ, երբ ազգերի առա-
ջաւոր հասարակութիւնները և նոցա արտայայտիչ մամուլը տար-
բեր ազգերի եղբայրակցութիւնն են քարոզում և մինչև իսկ
շէպի այդ կէտը տանող ազգերի համերաշխութեան, շահերի փո-
խադարձութեան վրայ հիմնւած միջազգային իրաւունքի զարգաց-
ման վրայ են աշխատում, շատ ուշացած քարոզ է միևնոյն ազգի
կրօնապէս բաժան մասերի եղբայրութիւնը՝ շարունակական քարո-
զի բնաբան ընտրելը: Բազմավէպից իր այդ քարոզով միայն
հնութիւն է բուրում: Այն, երբ տարբեր կրօնով ժողովուրդները
այնուամենայնիւ մոլորում են և իրար տրուած հալածում թիւրի-
մացութիւնների պարծառով՝ պէտք է այդ թիւրիմացութիւնները
սլարդել, բաց զալ ու լուրջ ձեռով ապացուցանել թէ մի ազգի
կրօնով տարբեր համայնքները պէտք է իրենց մի ազգ զգան, — այդ
արդէն մի հնաբանութիւն է այժմ:

Որքան սակայն անկեղծ է Բազմավէպը իր եղբայրասիրութեան
ուշացած քարոզներով. և կամ որքան նա հասկացող է հանդիսա-
նում ազգային-կրօնական խնդիրներում: Տարաբախտաբար Վենետի-
կի Մխիթարեան միաբանութեան հայեցակէտը այդ խնդիրներում
այժմ ևս նոյնքան նեղ է որքան նա եղել է առաջ: Դեռ ամենից
առաջ նկատենք, որ «եղբայր եմք մեք»ը այսքան ուշ քարոզողը
միայն «կաթոլիկ և լուսաւորչական» հայերին ի նկատի ունի, և ոչ
կրօնի անխորութիւնը առհասարակ, այնպէս որ այդ նոյն Բազ-
մավէպը «կաթոլիկեայ և լուսաւորչական» հայերի դէմ է կանգնեց-
նում բողոքական հայերին... Այդ խօս այդպէս, բաց նախ
մի հարց տանք, թէ որքան ճշմարիտ է, թէ հայութիւնը կրօնա-

կան վէճերով զբաղած լինի, ինչպէս այդ հաւատացնել է ուղում Բաղմավէպը. մի լսեցէք.

Վերջապէս կրօնքի վէճերը միշտ տաք և բռնկած լինելով, փոխադարձ ատելութիւնը արմատ դրաւ մեր հալ հասարակութեանց մէջ, և այս ատելութիւնը՝ այս երկու հասարակութեանց միջև եղած փոքր խրամադը չափազանց ընդարձակեց և խորացուց. որ պիտի ամփոփւի և անհերքանալ, եթէ հալածենք կրօնական վէճերն և տարանջատ հատելին՝ իբրև հարազատ որդիք հայրենեաց, միմեանց ձեռք տալով՝ գործեն ազգին լուսաշաղիմութեան համար:

Ձեռք տանք միմեանց և թալկացեալ ազգութիւնը՝ հոգի ու շունչ պիտի առնու և պիտի սթափի իր մեռելատիպ նիրհէն: (...) Ձեռք տանք միմեանց ամեն պարագաներու մէջ, և ալն արեն պիտի իմանանք թէ ազգմ ենք և ազգութիւն մը կը կազմենք: Թողունք կրօնական վէճերը կրօնական թերթերու և աստուածաբանական վարդապետներու, որոնցմէ շուրս ամեն անհար և ամեն լրագրութիւն թող պարապի՝ ալն նւիրական գործին, ուսկից ազգին լուսաշաղիմութիւնը կը սպասուի: (...)

Միթէ իրօք հայութիւնը ներկայումս այնպէս զբաղած է— և զբաղւած է նա առհասարակ— կրօնական վէճերով, ինչպէս այդ ներկայացրած է հէնց միայն մեր այդ առաջ բերած գողերի մէջ: Պարզ է որ Բաղմավէպը շեշտեր է շնում անցիւ ել, ուր իրականութիւնը այլ բան պիտի թելադրէր: Իրականութիւնը կարող էր, այն թելադրել այսպիսի մի հարց, որ՝ եթէ ճիշտ է թէ հայ-կաթոլիկ համայնքները և հայ-կաթոլիկ հասարակութիւնները իրենց լքած են զգում ազգի աւելի մեծ հարւածի կողմից, ինչպէս այդ վկայում է Բաղմավէպը, ինչ ոգի պէպք էր ներշնչել նոցա որ աւելի խրախուսւած լինին ազգութեան գաղափարը և շորա հետ կապւած բոլոր զրկանքները իրենց վրայ կրող հայ-լուսաւորչականների կողմից: Որովհետեւ երկու բան անկասկած է. այն որ կաթոլիկ հայերի խորթութիւնը լուսաւորչական հայերից հեռեւանք է ոչ թէ, ինչպէս Բաղմավէպն է ասում, առաջինների կրած հալածանքի լուսաւորչականների կողմից, այլ հեռեւանք այն տարբեր ոգուն, որ իր հետ տարել է կաթոլիկ պրոպագանդան ամեն տեղ, ուր նա հաստատուել է ի հաշիւ այլ քրիստոնէական եկեղեցիների: Այդ չար ոգին հանրածանօթ է ոչ միայն մեզ հայերիս, այլ և բովանդակ աշխարհին: Բաղմավէպը, ինկատի առէք, միմիայն լուսաւորչականներին է դիմում ճշմարիտ եմք մենք, քարոզով. և այդ էլ շար-

ձեալ նեղ կրօնական ոգու խեղադրութիւն է: Նա պնդում է թէ լուսաւորչականներից հալածւած լինելն է պարծառը որ հաշ-կա-թողիկեանքի մի մեծ մասը մոռացաւ մայրենի լեզուն—հայերէնը—և որ նոյն պարծառով է որ կաթողիկեանքը կրում եմ օտար անուններ:

«Ասիոյ կաթողիկէ հաղք՝ ալն օրէն որ շար շառն հալածանքեր կրեցին իրենց արիւնակից հայերէն, արեւութիւնը ստիպեց նոյն իսկ լեզուով անջատել աշխարհայեցողութիւնը և անոնց մեծ մասը՝ մոռացան հայրենի բարբառը և ալլախօս եղան. և ալս ողբալի եղելութեան նշաններն՝ դեռ կ'երևին Փոքր Ասիոյ և Պոլսոյ հաշ-կաթողիկէ հասարակութեանց մէջ: Նոյն հալածանքներն՝ ստիպեց զանոնք, որ նաև անամբ որոշին իրենց եղբայրներէն, և ալ ևս անոնց նոր սերունդքն չեն կոչիր Տիգրան, Վաշարշակ, Արշամ, Հռիփսիմէ, ալ էթիէն, Հանրի, Անթուան, Անթելաո:»

Այս երևոյթները իսկական շիտոյութիւններից ու պարմական հեղափոխութիւններից են դուրս բերւած, թէ շորանով միայն, որպաւորութիւն, էֆֆէնդ գործելու համար՝ պարմական երևոյթների պարծառաբանութիւնն է յեղաշրջում: Կաթողիկեանքը, կազմելով փոքրիկ անջատ համայնքներ, տեղ-տեղ շար անգոր էին իրենց լեզուն պահպանելու համար,—ահա աւելի ճիշտ մեկնումը. իսկ շար տեղ նոքա պահպանել են մայրենի լեզուն մինչև այսօր: Եւ աշխարհին ենթարկել են նաև հայ-լուսաւորչականները, որոնք զանազան տեղերում մոռացել են իրենց հայրենի լեզուն, մի երևոյթ, որ Բազմավէպի խմբագրութեան շար լաւ յայտնի է:

Եւ իրաւ է արդեօք, թէ՛

«կաթողիկեանք կ'աղբն զլուսաւորչականս՝ վասն զի դեռ չեն մոռացած ալն հալածանքները՝ և կոտորածները՝ զորս կրեցին մոլեռանդութենէ յորդեալ»:

Դէհ արդէն ստիպւած ենք ասելու որ կաթողիկեանք մի առանձին ժառանգական շիրազգածութեան տէր են քան բոլոր ալ ազգերի անհապնները: Թիֆլիսը անցեալ շարի վերջը Աշխարհ-մարտի շահի ձեռքով աւերակ շարձեց, սոսկալի կոտորած կրեց ժողովուրդը, որը մեծ մասամբ ցրիւ եղաւ և հազարները գերի տարւեցան,—բայց արդէն շար տասնեակ տարիներից ի վեր տեղական ժողովուրդը առհելի շէպքը մոռացութեան է տուել և նոր սերունդը աւերմունքի հարիւրամեակը լրանալու առիթով տըպ-

ւած յօդւածներից միայն տեղեկութիւն ունեցաւ պարսկական այն զազանութիւնների մասին, — բայց կաթողիկէները, ըստ Բազմավէպի միսիոնար վկայութեան, իբր թէ աշու չեն տուցած այն հալածանքները և կոտորածները (?!) որ նոցանից ցասնեակ հազար հոգի կրեցին մի քանի սերունդ առաջ, Կ. Պոլսի մէջ, մի հալածանքի, որի մէջ տաճիկ կառավարութեան եւրոպական քաշաքականութիւնը նոյնքան և աւելի շեր կտորարեց քան հայոց պատրիարքի ստորութիւնը:

Մի թէ, ուրեմն, կողմնապահութեան ոգին չէ յարձեալ որ Բազմավէպին աօն է տալիս հայ-լուսաւորչականների հաշի այն, ինչ նա չպիտի ասէր եթէ անկեղծ լինէր իր «եղբայր եմք մենք» քաբողով: Ինչո՞ւ նա իր յօդւածի մէջ պարսկականութիւններ չի շնորհ հայ-կաթողիկէների վրայ՝ լուսաւորչականների նկատմամբ, այլ իր խօսքը ուղղում է միայն հայ-լուսաւորչականներին: Ինչո՞ւ Ռովհէպե Բազմավէպը, իբր կաթողիկ կրօնական միաբանութեան օրգան, անկեղծ չէ: Անկեղծ լինելուն խանգարում է կաթողիկ կղերականութեան խոր արմատ ձգած ոգին, այն, որի շէմ բողոքում է ամբողջ լուսաւոր աշխարհը, երբեմն արդիւնքով, երբեմն ապարդիւն: Տեսէք թէ ինչ մարդասիրական ոգով էր գրում կաթողիկ հայր Շարմըրանը հայ որբերի մասին. և տեղացին հնչուն յրամները. հանգանակութեան մէջ մաս ունեցան նաև հայ-լուսաւորչականներ. վերջը իմացեց, որ այդ գումարները ծառայում էին «հոգիներ փրկելու» «հերձաժող» եկեղեցու փարախից, և Մխիթարեան միաբան ճնպոյեան ծառայում էր Վանում իբր այդ «հոգեփրկութեան» գործակալ: Եւ ձայն շուրս եկաւ թէ 30.000 լուսաւորչականների, հացի փոխարէն, ստիպել են կաթողիկութիւն ընդունելու Վան և շրջակայքը: Յաշխտանակի այն գուռները որ արձակեց հայր Շարմըրանը իր ծրագրով կարարած եղելութեան առթիւ, պարզ ապացուցին որ կաթողիկ կղերի հալ որբերին օգնելը իսկզբանէ այլ նպատակ չէր ունեցած, բայց եթէ նեղնընկած հայ-լուսաւորչականներին կաթողիկութիւն ընդունել տալ: Յինիզմը չէր կարող աւելի մեծ մերկութեամբ ևրևան գալ: Եւ ճիշտ այդ բույէին Կ. Պոլսում անսպորադիկ բրոշիւր հրատարակեց — անկասկած՝ գործ կաթողիկ հայոց պատրիարքարանի — ընդդէմ լուսաւորչական հայ եկեղեցու, ապացուցանելու համար

կաթոլիկ եկեղեցու հարազատութիւնը, միւսի անհարազատութիւնը, մի խօսքով մի զուտ կրօնական պարմական-դաւանական խնդիր!:

Եւ այդ ամենը կուտում էր... հայ որբերին օգնելու գործ... կաթոլիկ կղերի կողմից:

Բաղմավէպ'ը և Հանդէս Ամօրեան խոր լուծիւն պահպանեցին այս ամենի մասին: Որովհետեւ նոցա կրօնական ուղղութիւնը խեղդում է ամեն ինչ:

Եւ ինչի՞ առիթով է Բաղմավէպ'ը այս ամենը դրում: Ահա ինչ առիթով:

Նորիս Բաղմավէպ'ը մի յայտել յայտարարութեամբ շիմեց մի փոսակ հանգանակութեան (մի պարկերազարդ հրապարակութեան բաժանորդ գրելու հրաւերով), որի արշիւնքով խոստանում էր հայ որբեր պահպանել: Վենետիկի թերթը այժմ՝ զանգարում է թէ «Կարձեալ կրօնական խնդիրներն անոր մէջ մուտ գրան և այդ նշխրական գործին խոչընդոտն հանդիսացան»:

Եւ Բաղմավէպ'ը ձեռացնում է իբր թէ մի լրագիր էր որ—

«Խրտնեցուց ամբողջ հայ հասարակութեանը, որոնք (?) չը մանակեցեցան մեր հանգանակութեան. այս շարժումը Բաղմավէպ'ին բնաւ վրաս չհասուց, բայց որբերը լացուց, և կրօնական մոլեռանդութիւնը ոտքի տակ առաւ նաև ազգասիրութիւնը»:

Մինչդեռ ճշմարտութիւնը սա է որ կաթոլիկ կղերը—սորա մէջ նաև Մխիթարեան միաբանութիւնները—ինքն է իր շեռ ևս թարմ անցեալով յայտարարել ի լուր աշխարհի, որ հայ որբիկներին մի կտոր հաց տալը նա այլ կերպ չի հասկանում բայց եթէ կաթոլիկ և այն՝ զրեթէ անմիջապէս կաթոլիկ դարձնելով նոցա:

Եւ ի՞նչ ազգասիրութիւն է դիցուք հէնց ուսա-հայերի դրամով Վենետիկցիների ձեռքով մի փասնակ հայ-լուսաւորչական որբեր խնամելը, քանի որ նոյն որբերին խնամելու համար ուրիշ աւելի ապահով օրգաններ կան—տեղական փոճկա-հայ հասարակութիւնները, որոնք որբանոցներ են պահում: Իսկ դրամ նոցա հասցնել կարելի է—և մասամբ անում էլ է—հայոց սպարիտարքի ձեռքով:

Կեղծ արդաստունք:

Բաղմավէպ'ը կամենում է կաթոլիկ դարձնելու առարկութեան շէմն առնել՝ յայտնելով որ կաթոլիկ և լուսաւորչական եկեղեցի-

ների միջև տարբերութիւնը չնչին է—կրօնական փոքրիկ խնդիր մը: Բայց հայ ինտելիգենցիային հետաքրքրող առարկան շաւա- նաբանական խնդիրը չի կարող լինել. կրօնական խնդրի մեծ ու փոքր լինելը այսօրս չի չափուում շաւանաբանական նրբութիւնները ծանաշելով, մի գործ որ Բազմավէպ'ը թողնում է կղերական խոհու- նակ և գիտուն շասակարգին: Կաթոլիկ կղերը մի զօրեղ կազմա- կերպւած մարմին է, որի ոյժը զգացել են աշխարհքիս ամենա- մեծ հասարակութիւնները ու պետութիւնները. շարերով կազմա- կերպւած այդ մարմինը ունի որոշ սկզբունքներ, որ նա միացնում է ամեն բանի մէջ: Այդ ոգին տանում է շէպի ամեն ինչ կղերին են- թարկելու շրութիւնը, իսկ այդ շրութիւնն էլ շէպի մտաւոր ու ոգեկան անկումը: Միմիայն շապո զօրաւոր պիտական կազմակերպու- թիւններ կարողանում են շորա շէմ մարտնչել և միմիայն յաջո- ղութեան շէպքում՝ ժամանակի ոգին փրկել նորա ճիրաններից: Եւ եթէ այդպէս է, եթէ կաթոլիկ պրոպագանդայի հետ կապւած է քաղաքակրթութեան մի հակակրկի ուղղութիւն, մի՞թէ ինտելի- գենտ սերունդներին կ'սազէր անտարբեր աչքով նայել յատկապէս կաթոլիկ կրօնաւորների գործունէութեանը քրիստոնեայ ազգերի մէջ:

Եթէ չլինէր այդ ընդհանուր պատճառը—մտքի, ոգու բռնա- շասութիւնը—ինչո՞ւ պիտի այսօր Բազմավէպ'ը զանգարէր, թէ՛

«կաթոլիկէ քահանային շաւանանքը որ ամենափոքր տարբերու- մը միայն ունի լուսաւորչականէն, բայց շարձեալ մոլեռանդու- թիւնը կը մշէ գոչելու սի խաչ հան զշառ—եղէք բոլորական բայց ոչ կաթոլիկ»:

Այ. ընդդիմաշրութիւնը, օրինական, բնական ընդդիմաշրութիւնը շեռ չի նշանակում չի խաչ հանել. և ոչ էլ մեզնում քարոզել է թէ՛ «եղէք բոլորական», քանի որ թէ կաթոլիկ, թէ բոլորա- կան, թէ լուսաւորչական հաւատարապէս պէտք ունին պարզ լու- սաւորութեան քարոզի. բայց այս կայ որ բոլորականների գործու- նէութիւնը Փոքր Ասիայում տարբեր է կաթոլիկ պատմիչների գոր- ծունէութիւնից, և հէնց Մուրճի անցեալ համարի մէջ Պերմանա- կան օրնութիւնը Տաճկահայերին յօշուածում ստում էր՝

«Աերջպպէս, Հիլիսթունշի (=գերման օգնութեան ընկերու- րեան) շնորհիւ նոր արգելք է ստեղծուում կաթոլիկութեան տա-

րածմանը Հայաստանում: Այն ծառայութիւնը միայն որ կա-
տարել են արդէն ամերիկացիք, որո՞՞ւնի է արդէն որ յաջա-
ղութիւն ցանկանք Հիլֆարունդին: (Մուրճ 1900 № 4, էջ
521):

Եւ կաթոլիկ հայ հասարակութեան այն ընտրեալ մասը, որ կղե-
րական ազդեցութիւնների ներքոյ չէ, և որը մկրտել է քաղաքա-
կրթութեան ընդհանուր աւազանի մէջ, չի կարող թէ վերը ակ-
նարկած և թէ մեր այս յօդածի միտքը այլ կերպ հասկանալ
քան ինչպէս որ պէտք է!.

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ԳՐԱԿԱՆ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

(Նամակ խմբագրութեան)

ԱՐՇԱԿ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Տարիներից ի վեր մենք ականադրես ենք ելել երկու թերթերի՝ «Մուրճի» և «Մշակի» մէջ դեղի ունեցած վիճաբանութիւններին, սրտնք ունեցել են հասարակութեան մէջ իրենց արձագանքը, ժամանակի ընթացքում իւրաքանչիւրը գրանցից ստեղծել է իր համակրողների շրջանը։ Մենք ներկայումս բոլորովին մոտադիր չենք զբաւելու հիմնական խնդիրներին վերաբերեալ երկու թերթերի բռնած դիրքով, դա մեզ չափ հեռուն կը տանէր, մեր նպատակը ալժամ լոկ ալդ երկու թերթերի բարոյական կողմն է, թէ արդեօք գրանցից հրն է կարողացել մնալ լաւ մամուլի բարձրութեան վրայ, հաւատ ներշնչել շէպի տպագրական խօսքը։

Ահա ալս հարցն է, որ ներկայումս գրդում է ինձ հրապարակ գալ և ինձնման մտածող հարիւրաւոր մարդկանց առաջ որոշակի դնել վերջին չորս տարւան գիտելութիւններս։ Այդ բանը անում եմ նամանաւանդ ալն պարճառով, որովհետեւ ալդ չորս տարին ինձ համար եղել են իսկապէս տանջանքի տարիները, ալդ ժամանակներում ես տեսել եմ, թէ ինչպէս ալն մարդիկ, որոնց համարել եմ բարու և ազնիւի ներկալացուցիչներ, աչքիս առաջ հեղգհեթէ ընկել և, թող ներսի ինձ ասել, բացասական ծալրն են բռնել, և միթէ սա տանջանք չէ մէկ անփորձ, կեանք չտեսած երիտասարդի համար, պատահել կեանքի մէջ հէնց առաջին անգամից լուսախաբութեան։

Բալց որովհետեւ ալդ անելու համար հարկաւոր է մէջ բերել ալն բոլոր խնդիրներն ու շէպերը, որոնց մասին զանազան ժամանակների ընթացքում գրել ու խօսել է, իսկ գրանց թիւը չափ չափ է, բացի

աւել, մեղանից պահանջուում է աւելի երկար ժամանակ, մենք կը թողնենք խորհրդները մի ալլ, աւելի լարմար անգամի, իսկ ներկայումս կը բաւականանք միայն երեք հար բնորոշ և միննոյն ժամանակ հասարակութեան բաւականին ծանօթ ֆաքտերով, որոնք իրենց պարզութեամբ աշդէն շար բան են ասում: Նամանաւանդ, կարծում եմ, ինչպէս ընթերցողն ինքն ևս կը տեսնի, դրանք աչն տեսակ ֆաքտերից են, որոնք պարզ ու որոշ կը պատկերացնեն աւել խմբի մարդկանց բարոյական պատկերը, շէպի պարզ խնդիրներն ունեցած վերաբերմունքը, մտածելու եղանակը, մի խօսքով դրանց ամբողջ էութիւնը: Տարրական է թիկալի բացակայութիւնն է ահա, որ շար անգամ մեր մէջ բազմաթիւ կարևոր խնդիրներ հրապարակում անցնում են առանց որևէ ուշադրութեան, առանց հաշեացքներէ փոխանակութեան, և դրանով ոտնադակ է տրուում լսածախ հասարակական շար ու շար նւիրական բաներ:

Եւ իրօք միթէ կարող է երկու անձի կամ երկու թերթի մէջ առաջանալ լուրջ խնդիրներէ մասին մտքերի լուրջ փոխանակութիւն կամ ուսումնասիրութիւն, քանի որ մի կողմից ոտնադակ է տրուում տարրական պարզաճատութիւնը, իշխողութիւն լինելը քաղաքական ջանադրութեամբ՝ առաջ է քաշուում անձնական վերաւորանքները, որ, ով շեռչկերջացած, կ'ստանանապարհին գտնուլ խնդիրները կամալ ակամալ շաղարուում են. իսկ ալս տիւտը շերը ժամանակի ընթացքում սխտեմատիկ կերպով կատարել է «Մշակը», շնորհիւ աչն վար, փճացած ինստիտուտների, որոնցով մնւած են նրա շեկավարները, և պարզ է որ աւել բանը չէ կարող հասարակութեան վերալ իր ազդեցութիւնը չունենալ, չը նպաստել որ հասարակութեան մէջ կազմւի ալս համողումը թէ թերթի կողումն է միայն միւսին անւանարկելը: Նս ի՞նքս մէկն եմ ելած աչն բազմաթիւ միամիտներից, որոնք արամաշիր են եղել կուրորէն հաւատալութէ ակնարկած թերթը իր ներկալ կառավարողների կողմից որ և է օրինաւոր սկզբունքով է առաջնորդուում. տարաբախտաբար իմ միտքը չուտով կարողացաւ ըմբռնել խկութիւնը, քան շար շարերը, որոնք իմ լարմարութիւնները չեն ունեցած մէկի կամ միւսի ասածները իրար հետ համեմատելու, մաքուր սրտով միմիայն ճշմարտութիւնը որոնելով: Նս ի հարկէ հաշի չեմ առնում աչն գուցէ և բազմաթիւ մարդկանց, որոնք արդէն ընտելացել են նոյն կերպով զգալու, մտածելու, շարելու ելանակներին, որ և կազմում է դրանց խկական չկոլան. նրանց վրալ առաջուց գիտեմ որ ազդելու չեն իմ ալս տուրը, և ես ալքի առաջ էլ չունիմ աւել տեսակներին:

Գարձեալ կրկնում եմ, որ ընթերցողը չպիտի սպասի ինձնից հիմնական խնդիրների պարզաբանութիւն, ալ պիտի ցուց տամ շար հասարակ և շարելու համար ամենքին հաւասարապէս մարդէլի իրողութիւն:

ներ, որոնք պիտի ցուցնէր տեսակ խնդիրներում ալիք-լիքերը բռնողները ինչքան պէտք է բարոյապէս ընկած լինեն և թէ որքան ցանկալի է դրանցից մեծ խնդիրների մասին բացատրութիւններ սպասել և որքան շուար կացութիւն է մի լուրջ մամուլի համար, որին վիճակած է կեանքում մաքառել շեռ ևս ալիք-լիքերի անորոշ շէմ:

Արդէն իսկ հանգամանքը ստիպում է ինձ հարկաւոր ֆատքերից միայն մի քանիսով բաւականանալ, որոնք սակայն կարարեալապէս բնորոշում են դրանց բարոյական էութիւնը: Որովհետեւ ուր որ արդէն բացակայում է ամենատարակամը՝ աշխուշ հեռուներ ընկնելը չարժէ: Օրինակներին մէկը վերաբերելու է զուտ զրական էթիկայի խնդիրներից մէկին, ուր ցուց է տրեւում զրական կեղծիքի դիտարկեալ հովանաւորութիւնը. երկրորդը օրինակ է լինելու սովետական, թէ, ինչպէս մարդիկ կաշից դուրս են գալիս ցուց տալու թէ մէկը հաւասար է հագի. մի երրորդը շէպը կ'ընչադակենք, ուր փուռ ինստիտուտները խմբական արտապայտութիւն են գործում:

Սկսենք առաջինից:

1896 թւին առաջին անգամ լուս տեսաւ պ. Վաչագանի (=Բալասանի) առաջին գրածքը՝ «Հենրիխ Պետրալոցցի» վերնագրով մի գրքուկ: Անձնապէս ծանօթ լինելով թէ գրողին և թէ հանգամանքին, ես մի աչսպիսի չափաբարութեամբ դիմեցի Մշակի խմբագրութեան:

«Նորերս լուս տեսած Վաչագանի (=առեւորդական Իրիգոր Բալասանի) կեղծ ստորագրութեամբ «Հենրիխ Պետրալոցցի» գրքուկը, նույնպէս և այն գրածքները, որոնք լինած են նույն գրքի կազմի ետևը—ա) Ժան-Ժաք Ռուսսոյի կեանքը. բ) Ռուսոյի վարդապետութիւնները իւր «Էմիլ» հեղինակութեան մէջ. գ) Ֆրանսիականներ և հումանիստներ (մարդասէր մանկավարժներ) (??) և զ) Պետրալոցցու Նշանակութիւնը ժամանակակից մանկավարժութեան համար—պատկանում են հանգուցեալ Վրիգոր Տէր-Մելիքսեդեկեանի գրչին: Սոյն գրածքները ինչ-ինչ պարագաներում ընկել են պ. Բալասանի ձեռքը, սա էլ վերցրել սեփականել է»:

Այս չափաբարութիւնը Մշակը չտպեց, թէն ստորագրութիւնն լրիւ դրած էր տակը, ուրեմն և խմբագրութիւնը գրածիս համար ազատ էր պատասխանատուութիւնից: Բայց ենթացիկապէս թէ Մշակը ալիք-լիքերում զգուշութիւն բանեցնելով չմտաւ հասնել իմ գրութեան: Սակայն ահա երկու տարի ետքը, ալիք-լիքն «Վաչագան»ը արդէն իւր իսկական անունով հրատարակում է մի ուրիշ գրածք «Ռոստոմ և Սալման» վերնագրով: Այդ առիթով Մուրճի մէջ տպեց նախ մի գրախօսութիւն, ուր գրախօսը, չը ճանաչելով հեղինակին ու կեղծիքը, կարծել էր թէ իսկական հեղինակի անունը գործ ունի. բայց չեղոյ նույն՝ Մուրճում տպեց մի գրութիւն, որից

ամեն ընթերցող խնդիրն եղրակացրեց «Բալաստանի գրական աշխատություններ, (չիշելու է, որ նույն այդ Բալաստանը Աշտարակի թշնամիքն է, իսկ «Բաղմալէպում» այդ ժամանակները մի գլուխ Աշակին ներգողներ կարգացորդ)» Կարծում եմ որ իմ նախագգուշացումից երկու տարի անց, երբ արդէն ուրիշի ձեռքով հրատարակաւ Մուրճի մէջ աշխատութեան մերկացումն եղաւ, ամենատարրական թէ խելքը և թէ գրական ազնուութիւնը պիտի թելադրէին Աշակին, առնազն, իբր խածած, լուսթիւն պահանջելու Բալաստանի ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ. և ահա Աշակը վճռեց ամեն ինչ ոտքի դնել փար Այդպէս էին պահանջում նրա կուրի սկզբունքները իրենց աշխարհի թերթի շէմ: Եւ ահա թէ այդ առթիւ ինչ է գրում Աշակի մէջ իր պատասխանների բաժնում Բալաստանի հասցէին.

«... Մեր խորհուրդն է՝ անդեա առնել այն լօղաւծները, որոնք քննադատութիւն չեն, այլ հաշտանք...» (Աշակ 1898 թ. № 35):

Կարող էք երեակալել որ միայն թէ որեւէ անհաճոյ բան առի Մուրճի հասցէին, Աշակը առ ոչինչ համարեց նույն իսկ գրական աշխատութիւնը խրախուսելու Բալաստան չէ այդ. հիմի պէտք էր աշխարհել, որ ոչ միայն Մուրճից խելի պատիւը անհաճաւ մերկացումի, այլ նույն իսկ Մուրճին անպարտութիւն հասնի: Եւ ահա երբ այդ բանից մի տարի անց լոյս է տեսնում նույն Բալաստանի մի երրորդ գրաւծքը, չարմար առիթ շարունակ վերջապէս իր թևարկեալից հրաժարելու, նույն Աշակ'ը իբր թէ նոր գիւտ անելով թէ Բալաստանը նույն իսկ անգրագէտ ոմն է, հրէջաւոր չարկութիւններով, շեռ չանդգնութիւն ունեցաւ Բալաստանների երեսն քալը կապել Մուրճի հետ! Եւ այդ չարագործութիւնը անում էր մի Լէօ-Բաբայանեան, որի ինչ լինելը շատ անգամ ենք առիթ ունեցել տեսնելու Մուրճի մէջ: Եւ սակայն այդ նույն Լէօն մի պատենտաւոր «մշակական» գրող է: Եւ նա էլ հաւատացած է, որ ինքը իսկ և իսկ գրողի շնորհն է:

Անցնենք երկրորդ օրինակին.

Անցած տարի «Ընթերցողի փաստեր» վերնագրով լոյս տեսաւ լօղաւծների մի շարք Աշակում: Այդ լօղաւծները մեր գրական բարքերը, այն էլ Աշակի բարքերը՝ բնորոշելու տեսակէտից շատ հեռաքրքրական նիւթիւր են. մանաւանդ առաջին ու վերջին լօղաւծները: Դրանցից երրորդը հէնց այն էր, որի մասին խօսեցի վերև: Այժմ խօսելիքիս նիւթը միայն առաջին լօղաւծն է: Այդ էլ մի հեռաքրքիր լօղաւծ էր ոչ միայն բարքագրական տեսակէտից, այլ և իր նիւթով ու գրողի հոգեբանութեամբ. բայց մի հոգեբանութիւն, որ կազմել է թէև այլ ալիւրեններից, բայց որը անկասկած ամրապնդւել է Մուրճի շէմ կուր մըլու:

դեմնանքից: Ընթերցողին առաջին քաղից թուում է, թէ դա ըստ երևութին մի բողոք է «մեր հասարակական կործանիչ անդարբերութեան դէմ»: աչն էլ կործանիչ «մի խելճ գրականութեան համար» որը «չէ ներկայացնում բարդութիւններ: որն իր զարկով իր չափերով կարելի է նմանեցնել կենդանական սրտին օրգանիզմների կեանքին»... Եւ ահա աչդ «հասարակական կործանիչ անդարբերութեան» է մատնած նաև Ազգազրական Հանդէսը, որի կորուստը, ինչպէս նաև ալլ հրադարակութիւնների, որպէս մի քիչ փոքր կը տեսնենք, իբր թէ «խիստ ցաւ» էր պատճառում Լէօ—Մշակին: Բայց նախ ծանօթանանք լօգաւոր գրութեան եղանակի հետ:

